

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ԷԶԵՐ

ԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՍՂԻ
ԿՈՒՆՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ
ԿՅԱՆՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

« Հ Ա Յ Ա Ս Ա Ն »

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ԷԶԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ
ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1982

Հրատարակության է երաշխավորել մարտիզմ-լեհիկիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսպատմության սեկտոր

Ավագյան Ս. Դ.

Ա 77 էջեր Լեոնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից: Եր.: Հայաստան, 1982.—108 էջ:

Գրքույկում փաստական նյութի հիման վրա ցույց է արվում Լեոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի կուլտուր-լուսավերական կյանքի զարգացումը՝ սկսած պատմական այն ժամանակաշրջանից, երբ երկրամասը միացվեց Ռուսաստանին մինչև այսօր:

Հեղինակին ընթերցողին ընդհանուր գծերով ծանոթացնում է մարզի անցյալի ժառանգությունը և ներկայի՝ սոցիալիստական կուլտուրայի բուսն զարգացմանը:

Նախատեսված է մասսայական ընթերցողների համար:

4402000000

Ա. ————— 57—82

701 (01) 82

71 (2 Ա.)

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿՈՒՅՈՒՆՆԵՐ

Աղբբեջանական ՍՍՀ Լեոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի տարածությունը 4,4 հազար քառակուսի կիլոմետր է: Այն գտնվում է Փոքր Կովկասի հարավարևելյան մասում: Նրա արևմտյան կողմում ձգվում է Ղարաբաղի լեոնաշղթան, իսկ արևելյան մասում տարածվում է Ղարաբաղի կամ Միլի տափաստանը:

Մարզի տերիտորիային հարում է նաև Մոսկի լեոնաշղթան, որի ամենաբարձր գագաթը Գյամիշն է՝ ծովի մակերեվությունից 3724 մետր բարձրությամբ:

Լեոնային Ղարաբաղը հարուստ է հանքային հանածոներով և ջրային ռեսուրսներով: Հայտնի են մարմարը, վիմաքարը, բարիտը, իսլանդական շպատը, հանքային ներկերը և այլն:

Քուժիչ հատկություններ ունեն հանքային ջրերը, առավելապես Լիսազորի աղբյուրների խումբը:

Մարզի տերիտորիայում հոսում են 140-ից ավելի գետեր և գետակներ, որոնք Քուռ և Արարս գետերի վտակներն են: Կլիման ընդհանուր առմամբ բարեխառն է, իսկ հարթավայրերում՝ տաք: Բնակլիմայական բարենպաստ վայրամասները հնարավորություն են ստեղծում կարգավելու հացահատիկային կուլտուրաների, մրգատու այգիների, ծխախոտի մշակմամբ, անասնապահությամբ, բանջարեղենի մշակմամբ ու մեղվաբուծությամբ:

1979-ի համամիութենական մարդահամարի տվյալներով ԼՂՄ բնակչությունը 162 հազար է (քաղաքներում բնակվում են 72 հազար, գյուղական վայրերում՝ 90 հազար մարդ):

Բնակչության գերակշռող մասը հայեր են. գգալի թիվ

№ 6310

00003863

1979-ի համամիութենական մարդահամարի տվյալներով

№ 10783

07 № 10783 2088 P.

են կազմում ադրբեջանցիները (հատկապես Շուշիում): Մարզում ապրում են նաև ռուսներ, հույներ, ուկրաինացիներ, վրացիներ և այլն:

Մարզն ունի երկու քաղաք՝ Ստեփանակերտը և Շուշին: Կենտրոնը Ստեփանակերտն է, որի բնակչությունը 35 հազար է: Ստեփանակերտը նաև մշակութային, գիտական կենտրոն է. այնտեղ են գտնվում Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը, մարզային գրադարանը, Բ. Կնունյանցի անվան պատմաերկրագիտական թանգարանը, մանկավարժական ինստիտուտը, Ադրբեջանական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի Լեռնային Ղարաբաղի կոմպլեքսային ղոնալ փորձակայանը և ուրիշ ուսումնական, գիտական, կուլտուր-լուսավորական օջախներ:

Շուշին՝ Լեռնային Ղարաբաղի նախկին կենտրոնը, աչքի է ընկնում տեսարժան վայրերով ու պատմական հուշարձաններով: Այժմ այն ճանաչված առողջարան է, որտեղ հանգրստանում, բուժվում են երկրի տարբեր ծայրերից եկած հազարավոր աշխատավորներ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ունի հինգ շրջան՝ Ասկերան, Շուշի, Մարտակերտ, Մարտունի և Հադրութ, որոնք միմյանց հետ կապված են ինչպես տերիտորիայով, այնպես էլ տնտեսապես:

Երկու քաղաքից, վեց քաղաքատիպ ավանից և մեկ բանավանից բացի մարզում հաշվվում է 220 գյուղ:

ԱՆՅՅԱԼԻ ԷՋԵՐԻՑ

Լեռնային Ղարաբաղը դարավոր անցյալ ունի ու դարերի ընթացքում պահպանել ու մեզ է հասցրել հոգևոր մշակութի ուշագրավ գանձեր: Ամարասի (IV դարի սկիզբ), Գտշայի, Խոթայի կամ Գատիի (VI դար), Գանձասարի (VIII դարի սկիզբ) և այլ պատմական հուշարձաններ իրենց հրաշալի գեղաբանդակներով, ճարտարապետական ինքնատիպությամբ այսօր էլ դիտողին հիացմունք են պատճառում:

Առանձին գյուղերում ու ավաններում հիանալի հին կերտվածքներ կան, որոնց մեծ մասը քարաշեն են՝ պարիսպներով, ստորգետնյա մատուռներով, վեհարաններով:

Թեև դարեր շարունակ պատերազմի ավերիչ ձեռքն անցել է այդ լեռնաշխարհով, բայց չի ընդհատվել բարձրարվեստ գործերի արարումը:

Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես Շուշիում, վաղ է սկզբնավորվել դպրոցական և հրատարակչական գործը: 1827 թվականին Բազել քաղաքից եկած Ավետարանական միսիոներների ընկերության անդամներ Ավգուստ Գիտրիխն ու Ֆելիցիա Զարեմբան երկրամասում կաթոլիկություն տարածելու նպատակով Շուշիում հիմնադրում են դպրոց և տպարան:

Նրանք ձգտում էին կարճ ժամանակամիջոցում կարգավորել ուսուցման գործը, ավելացնել աշակերտների թիվը, ձեռք բերել ուսումնական ձեռնարկներ և պարագաներ: Զանքերն ապարդյուն շանցան. մի տարի հետո աշակերտների թիվը հասավ 130-ի (1827 թվականին կար 30—40 աշակերտ):

Դպրոցն աշակերտներին սահմանափակ գիտելիքներ էր

տալիս. դասավանդվում էր կրոն, գրաբար, աշխարհագրաբար, թվաբանություն, աշխարհագրություն:

Այդ շրջանում որոշակի քայլեր են արվում գրքատպագրության բնագավառում: Շուշիում առաջին գիրքը («Պատմութիւն սուրբ գրոց...») լույս է տեսնում 1828 թվականին:

Հրատարակված գրքերի զգալի մասը՝ «Ժամանակի վերջը», «Տասն ու վեց կարճատոտ քարոզներ», «Շատ հարկավոր հարցմունքներ ամեն մարդու համար», «Մեղքն անելու բան չէ», «Հորդորմունքներ սուտ ասող մարդկանց համար», «Մեղքի մեծանալուն և զորանալուն համար» և այլ եկեղեցական-բարոյախոսական գործերը, հրատարակվել է թարգմանաբար:

Լույս են տեսել նաև մայրենի լեզուն ուսումնասիրելու ուղեցույցներ, ձեռնարկներ ու բառարաններ: Օրինակ, 1829 թվականին հրատարակված «Համառոտություն հայկական քերականության» աշխատության մեջ ներկայացված են հայերենի հոլովումները, խոսքի մասերը: Ուշագրավ է Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառագիրք ի գրաբար է յաշխարհաբարը», որը լույս է տեսել 1830 թվականին: Ընթերցողը գրքի մեջ գտնում է բառի հոլովման ձևերը և ձևաբանական հատկությունները: Գրքում պարզորոշ ներկայացված են նաև գրաբար բառերի աշխարհաբար բացատրությունները:

Ա. Դիտրիխի ու Ֆ. Զարեմբայի զլիավորած ընկերությունը 7—8 տարվա ընթացքում Շուշիում և Մոսկվայում հայերեն հրատարակում է 11.679 օրինակ գիրք¹:

1837 թվականին ցարական կառավարության կողմից դադարեցվում է Ավետարանական ընկերության գործունեությունը: Այդ ժամանակից կրթական, հրատարակչական գործը անցնում է հայ լուսավորչական եկեղեցու թեմի իրավասությունը: Թեմակալն էր Բաղդասար Հասան-Ջալալյանը: Նրա ջանքերով էլ շարունակվում են լույս տեսնել մի շարք այնպիսի արժեքավոր գրքեր, ինչպիսիք են՝ Միքայել Չամչյանի «Քերականություն հայկական լեզվի», Զ. Բայրոնի

«Շիլիոնի կալանավորի» հայերեն թարգմանությունը և այլն: Դպրոցաշինության և գրքատպագրության ասպարեզում Բաղդասար Հասան-Ջալալյանի եռանդը ակնառու էր. թեմակալի վանքերին կից դպրոցներից նշանավոր էին Գանձասարի և Շուշիի դպրոցները:

Հետագայում՝ 1838-ի հունիսի 22-ին Շուշիում բացվեց Ղարաբաղի հայոց թեմական դպրոցը, որի գոյությունը շարունակվեց մինչև 1920 թվականը:

Ճիշտ է, հիմնադրման առաջին տարում դպրոցում քիչ աշակերտներ էին ընդգրկված (ընդամենը 20—30), բայց մյուս վանքապատկան և միսիոներական դպրոցների համեմատ այստեղ ուսուցումը ավելի կանոնավոր էր տարվում: Ուսուցիչների մի մասը մշակույթի գործիչներ էին, գրողներ: Այնտեղ դասավանդում էին Պետրոս Շամշյանը, Պերճ Պառլյանը, Ղազարոս Աղայանը, Լեոն, Սեդրակ Մանդինյանը և ուրիշներ: Պերճ Պառլյանը ուսուցանում էր հայ գրականություն, մայրենի լեզու և պատմություն, միաժամանակ դպրոցի տեսչի օգնականն էր:

1857 թվականին հիմնադրվել են Ամարասի, իսկ 1858 թվականին՝ Գանձասարի դպրոցները, որոնք դեռևս լիարժեք կրթական օջախներ չէին և միայն տարրական գիտելիքներ էին տալիս:

Դրությունը չի փոխվում նաև հետագա տասնամյակներում, բայց աստիճանաբար աճում է մարդկանց ձգտումը գիտություն և լուսավորության նկատմամբ:

Այդ տարիներին Շուշու գավառում դեռևս չկային օրիորդաց դպրոցներ, որտեղ աղջիկները հնարավորություն ունենային թեկուզ տարրական կրթություն ստանալ: Մարիամ Հախումյանի եռանդուն ջանքերով 1864-ի ապրիլի 7-ին Շուշիում բացվում է օրիորդաց դպրոց, որի «նպատակն էր պատրաստել լուսավորչալ վարժապետուհիներ և լուսավոր մայրեր»¹:

Մարիամ Հախումյանը իր բնակարանի մի մասը դպրոցին է հատկացնում և իր սանուհիներին սովորեցնում է ոչ միայն մայրենի լեզու և գրականություն, այլև վայելչագրություն, նկարչություն, ձեռագործություն և այլն:

¹ Տե՛ս Ան, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 98:

¹ Ան, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 101:

Գպրոցի բացումը մեծ ուրախություն է պատճառում Շուշիի բնակչությանը: Ժամանակի պարբերական մամուլը դրավատում է Մ. Հախումյանի հայրենանվիր աշխատանքը: Օրիորդաց դպրոցը սերտ կապերի մեջ էր Շուշիի թեմական դպրոցի հետ: Երկու ուսումնական օջախներում էլ գրեթե նույն ուսուցչական կազմն էր:

Արխիվներում պահվող վավերագրերը հավաստում են, որ 1860—1870-ական թվականներին Շուշիի բնակիչներ Հովհաննես Տեր-Հակոբյանը, Թևոս Տեր-Հովհաննիսյանը, Ավետիս Տեր-Գաբրիելյանը, Գրիգոր Տեր-Մկրտումյանը, Բարսեղ Տեր-Մովսիսյանը, Ալեքսանդր Բաղդասարյանը և ուրիշներ՝ դպրոցներ բացելու ջանքեր էին գործադրում: Սակայն Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությունն ամեն անգամ պատճառներ էր հորինում արգելակելու այդ ուղղությամբ կատարվող փորձերը:

1870—1880-ական թվականներին ընդհատումներով են գործում Սեդրակ Բաղինյանի, Հովսեփ Թառումյանի, Հովհաննես Տեր-Միքայելյանի, Արտեմ Պարոնյանի, Բոգդան Բոգդանիչի և այլոց Շուշիում բացած մասնավոր դպրոցները:

Հետզհետե մեծանում է հետաքրքրությունը ուսումնական գործի նկատմամբ. նոր դիմումներ են ներկայացվում համապատասխան մարմիններին դպրոցներ բացելու թույլտվություն ստանալու համար: Կովկասի փոխարքայության արխիվային գործերում պահպանվել են մի շարք դիմումներ՝ ստացված Շուշիի գավառի առանձին գյուղերից: Ենիքենդ գյուղից ստացված դիմումի մեջ անգամ նշվում է ուսումնական ծրագրի, դպրոցի նպատակների և երեխաների ուսուցման նոր ձևերի մասին:

Շուշիի բնակիչներ Մարգար Ղուլյանը և Հաջի Աբաս Հաջի Մահերամ-օղլին հայ և ադրբեջանցի աշխատավորների անունից 1874 թվականի սկզբներին մի քանի անգամ նամակ են ուղարկում Ելիզավետպոլի նահանգապետին՝ միջամտելու Շուշիում բացելու մի այնպիսի ուսումնարան, որտեղ դասավանդումը տարվի 4 կամ 6 դասարանների դաս-

ընթացի ծավալով և ավանդվեն ոչ միայն լեզուներ, այլև բնագիտական առարկաներ և պատմություն:

Վերը նշված փաստերը վկայում են, որ արդեն կենսական պահանջ էին դարձել ուսումն ու կրթությունը: Մարդկանց համար հետզհետե պարզ էր դառնում, որ առանց գիտության և լայն մտահորիզոնի անկարելի է ազատվել խավարի ճիրաններից:

Բնականաբար, Շուշիի հոգևոր և մյուս կարգի դպրոցների առաջադեմ ուսուցիչները մտահոգվում էին ինչպես ուսումնական, այնպես էլ գիտական գրքեր հրատարակելու գործով:

Կավ էր աշխատում հատկապես Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի տպարանը: Սկսած 1865 թվականից, ուսուցիչների ակտիվ օգնությամբ ու աշխատակցությամբ տպագրվում են մի շարք գիտական ուսումնասիրություններ: 1866 թվականին լույս է տեսնում «Համառոտ պատմություն հայոց» աշխատությունը, որի հեղինակ Հ. Թերձիմանյանը նպատակ է ունեցել երեխաներին օգնել որոշ պատկերացում կազմելու հայ ժողովրդի պատմության մասին:

Հրատարակված գրքերի մեջ հատուկ տեղ է գրավում հայ անվանի վիպասան Պերճ Պոռչյանի «Ղարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը», ուր, ի դեպ, հեղինակը մեծ ջերմությամբ է նկարագրում այն պահը, երբ հիմնադրվեց հայ կանանց կրթության գործը Շուշիում:

1864 թվականին լույս է տեսնում նաև Կ. Եղյանի աշխատությունը՝ «Ներքին կեանք Հին Հայաստանի, պատմաբանական քննություն», որ ուսերենից թարգմանել էր Պերճ Պոռչյանը¹:

Ուշագրավ է նաև այն, որ առանձին մտավորականներ մտածում էին պարբերական հրատարակելու մասին: Ժամանակն էր, որ Ղարաբաղն ունենար իր տպագիր թերթը կամ ամսագիրը: Եվ ահա 1874 թվականի ապրիլին լույս տեսավ «Հայկական աշխարհ» ամսագրի առաջին համարը:

¹ Տե՛ս Ան, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 303:

Ամսագրի հրատարակիչն ու խմբագիրը Խորեն Ստեփանեն էր: Նպատակը հասկանալի էր. տպագիր խոսքի միջոցով նպաստել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին, մարդկանց մեջ սեր արթնացնել դեպի ուսումն ու գիտությունը:

Կարևոր երևույթ էր նաև Շուշիում 1881 թվականին «Քնար խոսնակ» ժողովածու-պարբերականի լույսընծայումը: Կազմողը՝ Նիկողայոս Տեր-Ավետիքյանը, ուներ բարձրագույն կրթություն, մի քանի աշխատությունների հեղինակ էր և զբաղվում էր թարգմանությամբ: Ժողովածուն արժեքավոր էր նրանով, որ, Ն. Տեր-Ավետիքյանի գործերից բացի, այնտեղ նմուշներ կային համաշխարհային մի քանի դասականների (Պուշկին, Լերմոնտով, Գոթթոլլուբով, Հայնե, Գյոթե, Շիլլեր, Բայրոն) ստեղծագործություններից:

Աշխատավոր մարդու դառն վիճակն է պատկերված հատկապես Ն. Տեր-Ավետիքյանի «Սով», «Հյուսիսի աշուն», «Հյուսիսի ձմեռ» և այլ բանաստեղծություններում:

Իր «Ուսանող» գողարիկ պոեմի մեջ նա խոր ցավով ու կռիվով է պատկերում երիտասարդների ողբերգական վիճակը, որոնք ոչ միայն նյութական ծանր պայմանների մեջ էին, այլև նրանց առջև փակ էին դպրոցների դռները:

«Հասարակություն» բանաստեղծությունը մի կողմից ներկայացնում է հայրենանվեր գործի հասարակական նշանակությունը, մյուս կողմից արտահայտում է Հայաստանը բարգավաճած տեսնելու փափագը:

Ժողովածու-պարբերականի արժեքն ամենից առաջ բարձրանում է նրանով, որ հեղինակը չի սահմանափակվում միայն փաստերի, երևույթների արձանագրությամբ, այլ մի քանի ստեղծագործություններում փորձում է հանդուգն խոսք ասել կեղեքիչների ու ճնշողների դեմ:

1882—1884 թվականներին հրատարակվում է մի այլ պարբերական՝ «Գործ» հանդեսը, որի հրատարակչի ու խմբագրի պարտականությունը մեծ սիրով ստանձնում է Սիմոն Հախումյանը: Նա ավարտել էր էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ուսումնասիրել հայ և եվրոպական գրականությունը, գիտեր մի քանի լեզուներ, ուսանել էր Փարիզի Սորբոնի համալսարանում:

Ուսուցչական բեղմնավոր աշխատանքից դատ, Ս. Հախումյանը մեծ եռանդով էր աշխատակցում հայկական և ռուսական պարբերականներին: Նա տարբեր ժամանակներում ղեկավարել է Թիֆլիսի և Բաքվի թատերական խմբերը, զբաղվել թարգմանությամբ: Նա ձեռնարկել էր հրատարակելու «Գործը»՝ հայրենակիցների հոգսերն ու մտահոգությունները թեթևացնելու նպատակով:

Թեև նախատեսված էր «Գործը» հրատարակել իբրև ամսագիր, սակայն այն լույս է տեսնում տարեկան մեկ անգամ, այն էլ փոքր ծավալով: Այնուամենայնիվ, տպագրված էր քիչ համարներն էլ որոշակի դեր են խաղում գավառի հասարակական-քաղաքական և գրական-մշակութային կյանքում: Հանդեսն ամենից առաջ լուսաբանում էր Անդրկովկասում հողային հարաբերությունները, բողոքում էր գյուղացիների հողազրկելու դեմ: Հողաբաժանման ցարական կարգը «Գործը» համարում էր միանգամայն արատավոր:

Հանդեսը հատուկ ուշադրություն էր դարձնում երիտասարդությանը հուզող հարցերին, շեշտելով, որ նրան է պատկանում ապագան: Հանդեսը երիտասարդությանը կոչ էր անում մաքառել առանց ընկճվելու և դժվարություններից վախենալու: Հենց առաջին համարի «Երկու խոսք» խմբագրականում (հեղինակը Ս. Հախումյանն է — Ս. Ա.) կարդում ենք. «Չվախենալով վտանգից, շխտենելով խոնավ բնակարաններից, կիսավեր խրճիթներից, մաշող հիվանդություններից, մտնել համարձակ դոցա մեջ. ընկեր դառնալ աղ-հեստավորին գործի ժամանակ, գյուղացուն յուր ցանքի ժամանակ. գտնել թշվառներին, համեմատել դրանց՝ յուզի առատությունից տրաքվողների հետ. նկարագրել դոցա դրությունը, բացատրել պատճառները, տալ ժողովրդին յուր աշխատանքը, յուր անձը, յուր կյանքը, — ահա ինչ անող երիտասարդներ են հարկավոր»¹:

Սիմոն Հախումյանը առաջարկում է ուսումնասիրել նաև մյուս ժողովուրդների, հատկապես ռուս մեծ ժողովրդի կյանքը, սոցիալ-քաղաքական վիճակը: Նա շատ մեծ դեր է հատկացնում Ռուսաստանին, դիտելով նրան որպես ազատարա-

¹ «Գործ», 1882, էջ 3:

րի: Հանդեսի մեջ ասված է. «Ռուսաստանի կյանքը շատ սերտ կապ է հարաբերություն ունի մերինի հետ, բայց այդ երկրի հասարակական կազմակերպությունը, ներքին կյանքը մեզ համար terra incognita (անհայտ երկիր է)»¹:

Միմոն Հախումյանը բարձրացնում էր ռուս մեծ գրողներ Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Դոստոևսկու և ուրիշների գործերը հայերեն թարգմանելու, դրանք հայ ընթերցողին մատչելի դարձնելու հարցը:

Հանդեսի էջերում նաև քննարկվում են կանանց կրթության և դաստիարակության, գրքի օգտակարության և դրանց հետ առնչվող այլ խնդիրներ:

Դպրոցների համար ձեռնարկներ, մայրենի լեզվով գեղարվեստական և այլ գրականության հրատարակումը պահանջում էր ունենալ տպագրական որոշ բազա, տպարաններ՝ ժամանակի տեխնիկական սարքավորումներով հագեցված: Այդպիսին էր 1881 թվականին Շուշիում բացված Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանը:

Տպարանի ստեղծման և հետագա գործունեության մասին հետաքրքիր հուշեր է թողել Ղարաբաղի հրատարակչական և, ընդհանրապես, մշակույթի պատմությանը քաջածանոթ Պետրոս Զաքարյանը: Նա գրել է. «Կառավարական ապարատի օրավուր բարդացումը և ճյուղավորումը, հասարակական, դպրոցական, վաճառականական պահանջներն առաջ բերին տպարանի անհրաժեշտությունը: Շուտով Բաքվից աքսորից վերադարձավ Մ. Մահտեսի-Հակոբյանը, իր տանը կից հատուկ շենքում հիմնադրեց մի տպարան, որտեղ աշխատում էին իր որդիները: Նոր տպարանը բարգավաճում էր իր հիմնելու օրից: Ի միջի այլոց այստեղ իր գրական մկրտությունն ստացավ մեր գրող Լեոն, որը տպարանի առաջին սրբագրողն էր. այստեղ սկսեց իր հրատարակչական գործունեությունը Տիգրան Նազարյանը, հրատարակելով Սենկևիչի «Պողնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը» և այլն: Այստեղ երիտասարդ վաճառական Աբել Ապրեսյանը կատարեց Բաֆֆու «Խենթի» առաջին

¹ Գործ», 1884, էջ 4:

տպագրությունը, Արիստակես Սեդրակյանը տպագրեց «Դրեպերը» և այլն»¹:

Ինչպես վերևում նշվեց, այս տպարանում է առաջին անգամ (1881 թ.) ամբողջական տպագրվել Բաֆֆու «Խենթը»²: Սա ուշագրավ երևույթ էր և ունի հետաքրքիր պատմություն: Ոչ միայն հեղինակը, այլև առանձին ուսանողներ և մտավորականներ ցանկանում էին «Խենթը» տեսնել շքեղ հրատարակությամբ, բավականին մեծ տպաքանակով: Եվ, ահա, 1880 թվականին Մոսկվայի համալսարանի ուսանող Գ. Միրզոյանը դիմում է հեղինակին՝ տպագրության թույլտվություն ստանալու: Սակայն այդ մտահղացումը Մոսկվայում չի իրագործվում, որովհետև Բաֆֆին արդեն համաձայնություն էր տվել այն տպագրելու Շուշիում: Այս մասին Բաֆֆին գրում է. «Պարոն Միրզոյանցը մի երկու ամիս առաջ դիմել էր ինձ, խնդրելով, որ ես իրավունք տամ «Խենթը» Մոսկվայում տպագրելու, բայց ես չկարողացա կատարել նրա գեղեցիկ ցանկությունը, որովհետև նրանից առաջ արդեն իրավունք էի տված Շուշիում տպագրելու: Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բավական լավն է և տպագրությունը մաքուր, երևում է այնտեղի տպարանը այժմ փոքրիշատե կանոնավորված է»³:

1886 թվականին Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում առաջին անգամ հայերեն լույս է տեսնում Գոգոլի «Տաբաս Բուբան»: Սա բնագրի ուղղակի թարգմանությունը չէր, այլ առանձին հատվածների բովանդակության շարադրանքը:

Շուշիում լույս տեսավ նաև Մանուկ Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծությունների ժողովածուն, ուր հիմնականում զետեղված էին ժողովրդական ավանդույթներն ու լեզանգները՝ հեղինակի մշակմամբ: 1889 թ. հրատարակվում է նույն հեղինակի մի շատ կարևոր աշխատությունը՝ «Դավիթ

¹ «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդես, դիրք առաջին, Երևան, 1922, էջ 83:

² Այն սկզբում հատվածաբար լույս էր տեսել «Մշակ» թերթի էջերում:

³ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 548:

և Մհեր, ժողովրդական դյուցազնական վեպ» վերնագրով, որը հենց սկզբից ջերմ ընդունելություն է գտնում ընթերցող հասարակայնության կողմից:

Լեոյի աշխատությունների մեծ մասը առաջին անգամ լույս աշխարհ է գալիս Շուշիում. նրա «Վեպ թե պատմություն» (1887 թ.), «Կույր աղջիկը», «Վահան Մամիկոնյան» (1888 թ.), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891 թ.), «Բաթախման գիշեր» (1892 թ.) և այլ գրքերի առաջին ընթերցողները շուշիցիներն էին:

Արժեքավոր էր նաև Մակար Բարխուդարյանի «Արագը տարին կտարի» վերնագրով աշխատությունը, որը լույս տեսավ 1889 թ., Շուշիում:

Նոր հրատարակություններից էին նաև «Ուխտավորի հիշատակարանը» (1885 թ.), «Նոր ցավ» (1886 թ.), «Պանդուխտի հիշատակարանը» (1888 թ.) և այլ գրքեր ու գրքույկներ, որոնք զուրկ չեն քաղաքական և գեղագիտական արժեքներից:

Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս են տեսնում նաև թարգմանական գործեր, մեծ մասամբ դեղարվեստական նշանավոր ստեղծագործություններ: Սամվել Գյուլզադյանը պարսկերենից հայերեն է թարգմանում Ֆիրդուսու «Ռոստամ և Զոհրաբը», («Շահնամից») և 1893 թվականին տպագրում Շուշիում: Մի տարի հետո նրա թարգմանությամբ լույս է տեսնում Ֆիրդուսու «Զոհակ Բյուրասպի Աժդահակը»:

Հետզհետե լայն ծավալ է ընդունում Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանի գործունեությունը: Փաստորեն ավելի քան երկու տասնամյակ նա մնում է Ղարաբաղի միակ տպագրական օջախը, որտեղ լույս էին տեսնում գրքեր, գրքույկներ, ժողովածուներ, հանդեսներ, առանձին պատվերներ:

Հենց այդ շրջանում էլ Շուշիում պահանջ է դառնում ժողովրդի համար մատչելի գրականություն հրատարակելու գործը: Ակտիվություն է ցուցաբերում Հայոց բարեգործական ընկերությունը: Մամուլը լայնորեն արձագանքում է հայրենասիրական այդ նախաձեռնությունը, որի հիմնական նպատակն էր աշխատավորական զանգվածների համար լույս ընծայել հանրամատչելի գրքեր:

«Շուշիի տեղական վարչության ձեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի,— գրել է «Մշակ» թերթը,— մեր հասարակ ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտավոր սնունդից. չկա ո՛չ մի պաշար, ո՛չ մի նյութ, որով կարելի լինի մատակարարել նորան այդ սնունդը: Նախապաշարմունքներ, սնտոխապաշտություններ, անհեթեթ կարծիքներ և գաղափարներ այնպես վարակել են ժողովուրդը և մտել մինչև նորա ծուծը, որ նորա դեմ մաքառելու համար հարկավոր է գործածել ազդու և սուր ղենք, իսկ այդպիսի ղենք կարող է լինել լավ, դյուրամբռնելի և մատչելի գիրքը. հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պետք է ձեռնարկել որոշ ծրագրով և պատրաստությամբ: Ժողովրդը ձեռնարկել է ինչպես նաև հասարակ դասի, ամբոխի մտավոր հորիզոնը լայնացնել, բարոյական ձգտումներ առաջ բերել նորա մեջ, ներշնչել նորա մեջ գիտակցություն և ինքնուրույնության զգացմունք... Ի վերջո գրգռել սեր, ձգտում դեպի ընթերցանությունը»¹:

Եվ արդեն հայտարարությունից մեկ ամիս անց «Մշակում» Հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչությունը ընթերցողներին ծանոթացնում է «Ժողովրդական» գրքերի հրատարակության ծրագրին, որտեղ մատնանշվում է, որ առավել ուշադրություն է դարձվելու առօրյա կյանքից վերցրած ինքնուրույն և թարգմանական գործերի լույսընծայմանը:

Գծախտաբար իրականացվում է ծրագրի մի մասը միայն, որովհետև այն հանդիպում է բազմաթիվ դժվարությունների, առաջին հերթին ցարական իշխանությունների դիմագրությունը:

Փրբատպագրության ասպարեղում մեծ ջանքեր է ներդնում Տիգրան Նազարյանը: Նա Շուշիում հիմնում է հրատարակչական գրասենյակ: Նրա նախաձեռնությամբ 1882 թվականին հրատարակվում է Կոստանդին Մելիք Շահնազարյանի («Տմբլաչի խաչան» ծածկանվամբ) «Ղըլըցի կրնանոց պընը փեշակը» գիրքը, որը գրված է Ղարաբաղի բարբառով:

¹ «Մշակ», 1887, օգոստոսի 20:

Հրատարակչական եռանդուն գործունեություն են ծավալում Համբարձում Առաքելյանը, Լեոն, Սեդրակ Մանգինյանը, Գրիգոր Տեր-Ղազարյանը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Առաքել Բահաթրյանը, Սոֆյա Առաքելյանը և շատ ուրիշներ:

Մասնավորապես մեծ է Սոֆյա Առաքելյանի դերը հայ կանանց համար հանրամատչելի գրականություն հրատարակելու գործում: Նա ինքն է նախաձեռնում ֆրանսերենից մի քանի գրքերի թարգմանությունը: Ավելին, նա որոշել էր Շուշիում ստեղծել «Կանանց հանրամատչելի գրադարան»: Գրքերի այդ մատենաշարը պետք է լույս տեսներ Շուշիում: Բայց, դժբախտաբար, այդ գեղեցիկ մտահղացումը չի իրականանում՝ ոչ միայն գրաքննական, այլև տպագրական գործի անմխիթար վիճակի, ֆինանսական միջոցների սղությունից պատճառներով:

«Հայկական աշխարհի», «Քնար խոսնակի», «Գործի» հրատարակումը և Տիգրան Նազարյանի կողմից հրատարակչական գրասենյակի կազմակերպումը վկայում են, որ դեռևս XIX դարի երկրորդ կեսերից Ղարաբաղի աշխատավորների համար կենսական պահանջ էր դարձել տպագրի խոսքը, մամուլը, գրականությունը:

Պարբերականների լույսընծայումը վկայում էր, որ ցարական Ռուսաստանի այդ ծայրամասային զբաղում ձևավորվում էր առաջադիմական միտքը, աճում էին հասարակական շարժումը և աշխատավորական հուզումները:

Աշխատավորների մտավոր վարգաքման և դաստիարակության գործում որոշակի դեր են խաղում կուլտուր-լուսավորական հիմնարկները:

Առաջին հասարակական ընթերցարանը բացվում է 1865 թվականին:

Գրադարան-ընթերցարան է կազմակերպվում Շուշիի Հոսիփոսիմյան հայոց օրիորդաց դպրոցում: Այն աղքատիկ էր. գրքային ֆոնդը կազմում էր առանձին խմբագրություններից ձրի ուղարկված պարբերականների մեկ-երկու օրինակը:

1878 թվականին Շուշիում բացված հասարակական ակումբին կից գործող ընթերցարանը մի քանի տասնյակ կտոր գրքերով էր պահպանում իր գոյությունը:

Համեմատաբար բարձր էր 1881 թվականի ապրիլին

հիմնադրված մասնավոր գրադարան-ընթերցարանի վիճակը: Տնօրենը Ա. Հակոբյանն էր, որը կապեր ուներ առանձին քաղաքների կուլտուր-լուսավորական օջախների հետ և նրանց օգնությամբ էլ ստանում էր տարբեր լեզուներով լույս տեսնող գրքեր, թերթեր և հանդեսներ: Սակայն սա էլ երկար կյանք չի ունենում:

1889 թվականի մարտի 10-ին Շուշիում բացվում է նոր գրադարան-ընթերցարան: Սկզբում այն շատ աղքատիկ էր. առաջին տարում ուներ ընդամենը 587 գիրք (հայերեն, ռուսերեն, աղբյուրներ) և Թիֆլիսից ստացվող մի երկու թերթ ու ամսագիր, սակայն հետագայում գրքերի և պարբերականների թիվը մի քանի անգամ ավելանում է:

Ակումբը այն միակ օջախն էր, ուր հնարավոր է ձեռնարկել մասսայական կուլտուրական միջոցառումներ: 1882 թվականին Շուշիում բացվում է մի մասնավոր ակումբ, որի տնօրենը Մյուլլերն էր: Ակումբը տեղավորված էր մեծ շենքում, որն ուներ ընդարձակ թատերական դահլիճ և կուլտուրական խաղերի մի քանի սենյակ: Գոյության մեկուկես տարվա ընթացքում ակումբի թատերական խումբը կազմակերպում է մի քանի ներկայացումներ, համերգներ, զեղարվեստական երեկոներ:

Այնուամենայնիվ, 1870—1880-ական թվականներին թատերական կյանքը Ղարաբաղում աշխույժ չէր: Շուշիում գործում էր միայն սիրողների մի խումբ, որը ղեպից ղեպը ներկայացումներ էր տալիս թեմական և օրիորդաց դպրոցների դահլիճներում: Գերակատարները գեղարվեստական երիտասարդներ էին, որոնք շունեին կանոնավոր կրթություն, երբեմն էլ սխալ էին մեկնաբանում այն կամ մյն կերպարը: Պարբերական մամուլը իրավացիորեն քննադատում էր այդպիսի ներկայացումները, նշելով դերերի միակ մեկնաբանման վնասակարությունը:

Ոչ միայն Շուշիում, այլև Խանքենդիում (այժմ՝ Մտեփանակերտ) որոշ աշխատանքներ էին տարվում քննադատության կուլտուրական սպասարկման ուղղությամբ:

Խանքենդիի կուլտուր-լուսավորական աշխատանքների այդ ժամանակվա բնութագիրը ավել է «Մշակ» թերթը. «Խանքենդին ունի մի մշտական թատերական բեմ», որ հա-

№=0376

10783
07 11 18

ճախ-հաճախ լինում են ներկայացումներ ուսւ լեզվով, մի պրադարան, ուր դժբախտաբար մի հայերեն թերթ շտեպս, թեև անդամների մեջ կան 5—8 օֆիցերներ և մի քանի հայ ընտանիք, մի կլուբ, ուր ամեն շաբաթ լինում են ընտանեկան երեկոներ և պարահանդեսներ»¹։

Գարավերջին Ղարաբաղում հեղափոխական շարժման պարագայում զուգընթաց աճում է նաև հասարակական միտքը։ Թատրոնը, դպրոցը, մամուլը, գրականութունը յուրովի նպաստում են աշխատավորների գիտակցության բարձրացմանը։

Թատերական կյանքը աշխույժ էր հատկապես Շուշիում։ Բեմական ներկայացումները հիմնականում տեղի էին ունենում նիկիտա Խանդամիրյանի՝ 1891 թվականին կառուցած թատերական շենքում։ Այստեղ բեմադրվում էին Գ. Սունդուկյանի «Պեպոն», «Ամուսինները», Լ. Պարոնյանի «Բաղդասար աղբարը», Մուրացանի «Ռուզանը», Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորները», Մոլիերի «Ժլատը», Ա. Դյումայի «Քամեկիսգարդ տիկինը» և դասական այլ պիեսներ։

Բարձրարվեստ բեմադրություններ էին տալիս մասնավորապես Թիֆլիսից և Բաքվից եկած շնորհալի դերասանական խմբերը։ Այդ անվանի արվեստագետներից էին Հովհ. Աբելյանը, Սիրանույշը, Գ. Ավետյանը, Վրույրը, Գ. Պետրոսյանը, Օր. Վարդիթերը, տիկին Զաբելը, Մարի Հրանուշը, Սաֆրազյան ամուսինները և շատ ուրիշներ։

Հյուրախաղերի բեղմնավոր տարիները 1892—1898 թվականներն էին։ Թիֆլիսի դերասանական խումբը յուրաքանչյուր ամսվա ընթացքում տալիս էր 10—15 ներկայացում։ Դրանց յուրաքանչյուրի հաջողության ու առանձին թերությունների մասին ծավալուն նամակներ, ինֆորմացիաներ և թատերախոսականներ էին հրապարակվում կովկասյան թերթերում։

«Մշակը» բացառիկ ջերմությամբ է խոսում մեծատաղանդ դերասան Հովհաննես Աբելյանի մասին։ 1884 թվականի հուլիսի 16-ի համարի թատերախոսականում թերթը հատկապես բարձր է գնահատում դերասանի «Մեծապատիվ մուրացկանների» մեջ Աբիսողոմ աղայի կերպարի հիանալի մարմնավորումը։

¹ «Մշակ», 1880, հունիսի 12։

Դրվատական խոսք է ասվում դերասան Վրույրի՝ Շուշիում ունեցած ելույթների մասին։ Թերթը նշում է, որ արվեստագետը բազմաթիվ առիթներով եղել է Ղարաբաղում, օգնել տեղացի թատերասերներին՝ ներկայացումներ կազմակերպելու գործում։ «Մշակի» 1898 թվականի օգոստոսի 25-ի համարում ասված է. «Օգոստոսի 15-ին հայոց դերասանական խումբը խաղաց Մոլիերի «Ագահը», ագահ և ժլատ մարդու տիպարը՝ Հարպագոնի դերը, կատարում էր Վրույրը, որը կարողացավ հասարակությանը գոհացնել իր գեղեցիկ խաղով»։

1890-ական թվականներին բավականին հետաքրքիր էին Շուշիում տեղի ունեցող ադրբեջանական և ուսական ներկայացումները։ «Մշակը» 1891 թվականի սեպտեմբերի 10-ին հայտնում է, որ օգոստոսի վերջին Շուշիում բեմադրվել է ադրբեջանական ականավոր դրամատուրգ, փիլիսոփա Մխրա Ֆաթալի Ախունդովի «Moussour ժորդան կամ երեկի կախարհ» կատակերգությունը, «Հաջի Ղարա» պիեսը, ինչպես նաև այլ բեմադրություններ («Աներևույթ շալ» վոդևիլը, «Բաջի վա դարդաշ» ծիծաղաշարժ պիեսը և այլն)։

Ադրբեջանական բեմադրություններին մասնակցում էին ոչ միայն տեղի թատերասերները (մեծ մասամբ ուսականում սովորող երիտասարդներ), այլև Բաքվից և Թիֆլիսից ժամանած շատ հայտնի դերասաններ։ Մամուլը վկայում է, որ Հովհաննես Աբելյանը, Սաֆրազյանները և ուրիշները հանդես են գալիս ադրբեջանական բեմի վարպետների հետ։

Ռուսական խմբերը բեմադրում էին ոչ միայն դասական, այլև քիչ ճանաչում գտած հեղինակների դրամատիկական գործերը։

Դպրոցներում ստեղծված թատերասերների խմբերը որոշ չափով աջակցում էին աշակերտների գեղագիտական պահանջների բավարարմանը։ Ռեալական, Մարիամյան և այլ դպրոցների աշակերտների և ուսուցիչների ուժերով բեմադրվում են «Բռնի ամուսնություն», «Բանաստեղծ» և այլ վոդեվիլները։

Հետաքրքիր է նշել, որ ներկայացումների սկզբում, ընդմիջմանը և վերջում աշակերտները կատարում էին երգեր, արտասանում բանաստեղծություններ։

Թատերական կյանքը որոշ զարթոնք էր ապրում նաև գավառի առանձին գյուղերում, ուր բեմադրություններով հանդես էին գալիս և պրոֆեսիոնալ դերասանները, և սիրողների խմբերը: Հովհաննես Աբելյանն իր խմբով հաճախ էր շրջում գավառի գյուղերը, ներկայացումներ տալիս, զրուցում գյուղացիների հետ, ձգտում թեթևացնել նրանց հոգսերը:

Դարավերջին Շուշիում պարբերաբար համերգներ էին տալիս ոչ միայն տեղական խմբերը, այլև երկրի տարբեր քաղաքներից ժամանած երաժշտական խմբեր ու անհատ կատարողներ: Ուշագրավ երևույթ էին հատկապես երաժշտագետ Քրիստափոր Կարա-Մուրզայի (1854—1909 թթ.) համերգները, որոնք միշտ էլ ընդունվում էին ջերմությամբ:

Մամուլը հավաստում է, որ Կարա-Մուրզայի 100 հոգուց բաղկացած երգչախմբին ակտիվ մասնակցություն է ունեցել թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմոսյանը (1872—1934 թթ.), որը մի շարք երգերի կատարմամբ հիացրել է ունկնդիրներին:

Շուշիում տարբեր առիթներով գրական-գեղարվեստական ցերեկույթներ և երեկույթներ էին կազմակերպում թեմական դպրոցի աշակերտները, որոնք կրում էին «Գրական-ձայնական առավոտ» անունը. ունկնդիրները լսում էին ոչ միայն երաժշտություն, այլև՝ գրական-գեղարվեստական գործեր, մեծ մասամբ բանաստեղծություններ՝ հայերեն և ռուսերեն:

XIX դարի վերջերին Շուշին դարձել էր Անդրկովկասի աչքի ընկնող մշակութային օջախներից մեկը, որտեղ բնակիչները դիտում էին վարպետ դերասանների խաղը, ունկնդրում անվանի կոմպոզիտորներին:

Գավառի կենտրոնում հիմք էր դրվել մի գովելի նախաձեռնություն. միջոցառումներ էին անցկացվում նվիրված առանձին գրողների. սկզբում զեկուցում էր կարդացվում հեղինակի կյանքի և գործունեության մասին, ասլա հատվածներ արտասանվում ստեղծագործություններից, երբեմն էլ բեմականացվում նրա որևէ գործը: 1898 թվականի ապրիլի 26-ին Շուշիում բարեգործական ընկերության տեղական հյուսիս վարչության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հա-

շատուր Աբովյանի և Միրզա Ֆաթալի Ախունդովի հիշատակին նվիրված ցերեկույթ, որը ունեցել է մեծ հաջողություն:

Հետաքրքիր են անցել Վազիֆի, Մուրացանի, Խուրշիդ Բանու, Նաթավանի, Կասումբեկ Զաքիրի, Նաջաֆբեկ Վեզիրովի, Լեոյի, Տմբլաչի Խաչանի և այլոց գործունեությունը նվիրված գրական երեկոները:

Գրականության զարգացմանը շոշափելի ազդակ հանդիսացավ Շուշիում գործող «Մախվելի ունս» գրական ընկերությունը՝ Խուրշիդ Բանու գլխավորությամբ: Ընկերության ազդեցությունը մեծ էր ոչ միայն Շուշիում, այլև ամբողջ Անդրկովկասում: Գրա առձայատչյան նմանօրինակ գրական խմբակների ստեղծումն էր Բաքվում, Թիֆլիսում և այլուր:

Որոշ տեղաշարժեր են կատարվում դպրոցական կյանքում: Նախորդ տարիների համեմատությամբ նկատելի էր դպրոցների քանակի աճը: «Կրթական գործը Կովկասում և Անդրկովկասում» ծավալուն հոդվածում «Մշակ» թերթը կոնկրետ թվեր է բերում դպրոցների քանակի և սովորողների կազմի ավելացման մասին: Միաժամանակ «Մշակը» ստիպված էր խոստովանել. «...ընդհանրապես ասած՝ կրթական գործը մեր երկրում դեռ բավական աննախանձելի վիճակի մեջ է գտնվում, մանավանդ իգական սեռի կրթությունը...»¹:

Անմխիթար էր դպրոցահասակ երեխաներին դպրոցներում ընդգրկելու վիճակը: Զբաղորդների ու արհեստավորների մի զգալի մասը հնարավորություն չունեին ուսման վարձ տալու, ուստի ավելի շուտ իրենց երեխաներին ուղարկում էին աշխատանքի՝ բանվորության: Շուշիից դրած նամակներից մեկում ուղղակի ասվում է. «Մանուկ սերունդը զրկվում է կրթությունից, որովհետև յոթ տարեկան դառնալուց հետո, ծնողները նրանց ուղարկում են գործարան, որտեղ նրանց ականջին հնչում են կեղտոտ խոսքեր, հայհոյանքներ, իսկ երբեմն էլ ճիպտի հարվածի ձայներ»²:

Դպրոցների գործունեության նկատմամբ չկար վերահսկո-

1 «Մշակ», 1896, հունվարի 1:
2 «Մշակ», 1898, հունիսի 6:

դուրսը: Ծիշտ է, 1897 թվականի հունիսի 2-ի օրենսգրու-
թյամբ եկեղեցական դպրոցները ենթարկվում էին լուսավո-
րության մինիստրությանը, և հսկողությունը պետք է իրա-
կանացիոր աշակերտ կոչված ժողովրդական դպրոցների գի-
րեկցիան, սակայն կոնկրետ ոչինչ չէր արվում դպրոցների
գործունեությունը կարգավորելու, ուսուցչական անձնակազ-
մը որակավորելու, նրանց ղեկավարությունը ուժեղացնելու
ուղղությամբ:

1890-ական թվականներին Ղարաբաղի պարբերական մա-
մուլի պատմության մեջ հայտնի է միայն ականավոր քա-
նասեր Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» առա-
ջին գրքի հրատարակությունը: Այն լույս է տեսնում 1896
թվականին, Շուշիում:

Նրա խմբագիր-հրատարակիչը՝ Ե. Լալայանը, կրթված,
զարգացած մարդ էր, Շուշիում զբաղվում էր ուսուցչությամբ,
ձգտում էր պարբերականի միջոցով գիտական տվյալներ
հաղորդել մի շարք մասնագիտությունների, հատկապես ազ-
գագրության, հնագիտության և բանահյուսության վերաբեր-
յալ:

Հանդեսի հենց անդրանիկ գիրքը հարուստ նյութեր է բո-
վանդակում առանձին գավառների պատմության վերաբեր-
յալ, մանրամասնություններ է հաղորդում կարևոր բնակա-
վայրերի հիմնադրման, աշխարհագրական դիրքի, բնակիչ-
ների սովորությունների, նիստ ու կացի, բարքերի մասին,
ուսումնասիրություններ կովկասագիտության, արվեստի,
գրականության, լեզվագիտության և այլ բնագավառներին:

«Ազգագրական հանդեսի» դերն ավելի է մեծանում, երբ
նրան աշխատակցում են մեծանուն գիտնականներ Զր. Աճառ-
յանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Թ. Թորոմանյանը և
ուրիշներ:

Պարբերականի առաջին գրքի լույսընծայումից մինչև
1911 թվականը մեզ հայտնի չէ որևէ տպագիր օրգան, որ
հրատարակված լինի Ղարաբաղում: Ինչպես մամուլի հմուտ
հետազոտող Գարեգին Լևոնյանն է մի առիթով նշել, 1890—
1905 թվականները տխուր ժամանակահատված էր նաև հայ
մամուլի համար:

Հիրավի, գավառի կուլտուրական կյանքը ցածր մակար-
դակի վրա էր, չէին հրատարակվում պարբերականներ,
դպրոցական կյանքը տակավին կազմակերպման պրոցեսում
էր, եղած հատուկենտ գրագրարան-ընթերցարանները աղքա-
տիկ էին, չէին բավարարում բնակչության պահանջները:

Սակայն գավառը շարունակում էր զարթոնք ապրել:
Դրան մեծ չափով նպաստում էր առաջադիմական գաղա-
փարներով տոգորված սովորող երիտասարդությունը: Հա-
ղորդակից լինելով հեղափոխական մտքերին, կարգալուծ մեծ
մտածողների գործերը, երիտասարդները գործնական քայ-
լերի էին դիմում երկրամասի կուլտուրական ու տնտեսա-
կան կյանքը բարելավելու ուղղությամբ: Այս մասին արժե-
քավոր հուշեր է պատմում հին բոլշևիկ, անվանի գիտնական
Աշոտ Հովհաննիսյանը: Նա գրում է. «90-ական թվականնե-
րի վերջերին հուլյանի ու լույսերի այդ աշխարհում էր ապ-
րում նաև Շուշի քաղաքի երիտասարդությունը: Նոր սերնդի
մտայնությունը տակավին չէր բոլորել իր կյանքի հերոսական
շրջանը: Հղի հանդուգն ծրագրերով՝ ստեղծվեց հոգևոր մի
մթնոլորտ, որտեղ ծնվում էր և սնվում նաև դպրոցում սո-
վորող մատաղ աշակերտությունը: Հասակակից ընկերներ
էին, տոգորված վառ ցնորքներով, լի եռանդով, պատրաստ
ամեն զոհաբերության... Դպրոցից դուրս կար ժողովատեղ,
որտեղ հետևում էին քաղաքական գրականության, լսում էին
դեկուցումներ «երկրի» մասին, վեճի բռնվում, որոշումներ
ընդունում, խմբագրում ձեռագիր թերթը՝ «Կոկոնը»: Մոտ
հինգ տարվա կյանք ունեցավ «Կոկոնը»¹:

Այնուհետև Ա. Հովհաննիսյանը պատմում է, որ առաջա-
դեմ երիտասարդներից կազմված խմբակը ստանում է «Կո-
կոն» անունը և եռանդուն գործունեություն ծավալում:

Ղարաբաղի աշխատավորության քաղաքական գիտակցու-
թյան բարձրացման և նրան հեղափոխական գաղափարներով
զինելու գործում պակաս դեր չեն խաղում նաև երկրի տար-
բեր ուսումնական հաստատություններում սովորող հայ երի-
տասարդները: Ամուսնը վերագառնալով հայրենի քաղաք՝
նրանք իրենց հետ «բերում էին» հեղափոխական գաղափար-

¹ «Կոմունիստ» (Բաքու), օրաթերթ, 1923, ապրիլի 13:

ներ, գրականություն և ձգտում էին կազմակերպել մարքսիստական խմբակներ: Այդպիսի խմբակ է ստեղծվում Շուշում, 1902 թվականին:

Յարական պահնորդական մարմինները բազմիցս նշել են, որ հատկապես Շուշին «վտանգավոր» է դարձել հակապետական գաղափարներով. այստեղ են թափանցում հեղափոխական գրականություն, թռուցիկներ, կոշեր:

1901—1903 թվականներին «Իսկրայի» առանձին համարները գավառի մարդկանց են հասցվում Բոգդան Կոնոնյանցի միջոցով: «Իսկրայի» 19-րդ և մի քանի այլ համարներ Շուշի են ուղարկվում արտասահմանից՝ կայացրից քաղաքից: Այժմ Ստեփանակերտի պատմաեղբայրական թանգարանում է գտնվում թերթի առաջին համարի բնօրինակը, որը հայտնաբերվել է 1946 թ. Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի մի բնակչի մոտ:

Ութսուն տարուց ավելի է, ինչ այդ համարը խնամքով պահպանվում է Լեոնային Ղարաբաղում: Կապիտալից դուրս է, որ լեոնային «Իսկրան» գավառ էր հասել Բաքվից:

Որ «Իսկրան» իրոք հասել է լեոնային երկրամասի ամենահեռավոր գյուղերը, կան փաստական տվյալներ: Կեմրակուճը փոքրիկ գյուղ է, որտեղ ևս թափանցում էր բոլշևիկյան թերթը: Եվ, ահա, վերջերս, մի լուսանկարի հետ հայտնաբերվել է «Իսկրա» թերթի համարներից մեկը: Այս մասին լրագրող Առյա Վարդանյանը պատմում է. «Նկարի հետը ծածկված էր խոունացած թղթով: Պոկում եմ, ահա նորից մի շերտ. այս արգեն սովորական լրագիր է, հանում եմ՝ «Իսկրայի» համարներից է: Ինչպես է այն ընկել այս լեոնային գյուղը: Ով էր նրա բաժանորդն ու առաջին ընթերցողը: Մտածում եմ ու պատասխան չեմ գտնում. նորից նայում եմ լուսանկարին: Ես գիտեմ, որ նա մեր բարեկամներից է, չեմ տեսել, որովհետև վախճանվել է 28 տարեկան հասակում, շատ-շատ տարիներ առաջ. Արսեն Տեր-Ղուկասյանն է: Գիտեի նաև, որ ուսուցիչ է եղել մեր ձորակի գյուղերում: Որոշեցի գիմել տարեց մարդկանց: Ու շտապելեցի: Կեմրակուճում, ուր ապրել, աշխատել է Արսենը, հին կոմունիստների շատ կան: Գիմեցի նրանցից մեկին՝ 1919 թվականից ՄՄԿԿ անդամ Հայկ Դավթյանին:

— Զարմանալու ոչինչ չկա,— ասաց նա,— Արսեն Տեր-Ղուկասյանը ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը և ուսուցչություն էր ղեկավարում մեր գյուղում: Նա ժամանակի առաջագիտ մարդկանցից էր, ստանում էր մարքսիստական գրականություն, գիշերները ազոտ լույսի տակ «Իսկրա» էր կարդում: Լինում էր՝ փաթեթներ էր ստանում ժնեից, Ռուսաստանի խոշոր քաղաքներից: Ու այդ ամենը ինչպիսի դրուշավորությամբ: Մենք՝ նրա աշակերտներս, սիրում էինք մեր ուսուցչին, ամեն ինչում ընդօրինակում նրան: Արսենը հաճախ էր գրուցում գյուղացիների հետ, պատմում լուսավոր ապագայի՝ ազատության, հավասարության, առատության մասին»:

Առանձին համարներում «Իսկրան» անդրադառնում էր Ղարաբաղի, մասնավորապես Շուշիի բնակչության ծանր պայմաններին, նրա հեղափոխական ոգուն: Թերթն իր բնթերցողներին հաղորդում է դարաբաղցիների մասսայական ցույցերի, միտինգների մասին՝ ընդդեմ ցարական կառավարության 1903 թվականի հունիսի 12-ի հրամանի, որի համաձայն հայկական եկեղեցական ունեցվածքը պիտի անցներ կառավարության տնօրինությանը: Բայց չէ որ ծխական դպրոցները գրեթե պահվում էին եկեղեցիների հաշվին:

Նախահոկտեմբերյան Ղարաբաղի աշխատավորությունը, խիստ դժգոհ լինելով ցարիզմի քաղաքականությունից, ատելություն էր լցված ցարական գործիչների նկատմամբ: Պատահական չէր, որ սուր ընդհարումներ էին տեղի ունենում դորբի և խաղաղ բնակչության միջև: Այդ մասին «Իսկրան» ուղղակի գրում է. «Ամենուրեք ժողովուրդը զենքը ձեռքին էր դիմավորում ցարական աստիճանավորներին, ամենուրեք եղան ընդհարումներ դորբերի հետ և ամեն մի քաղաքի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը խիստ կերկարացներ թղթակցությունը: Նշենք հետևյալ բացարձակ ստույգ, չնայած կուրյոզային, բայց բնորոշ փաստը: Անկարգությունները սանձելու համար Շուշի քաղաքում դորբե-

1 «Սովետական Ղարաբաղ» օրաթերթ, 1967, հոկտեմբերի 19:

րի հետ այնտեղ ուղարկվեց հրետանի, իսկ և իսկ ինչպե՞ս պատերազմի ժամանակ»¹:

Կասկած չի հարուցում, որ հողմածի հեղինակը քաջատեղյակ էր Կովկասի քաղաքական իրադարձություններին, գիտեր այնտեղ տեղի ունեցող հեղափոխական խմորումների, հուզումների և ելույթների մասին: Ի դեպ, փերոհիշյալ փաստը «Նոր թալան» վերնագրով իր թղթակցությունում օգտագործել է Բոգդան Կնունյանցը՝ «Կավկազեց» ստորագրությամբ:

Հեղափոխական շարժումը Ղարաբաղում նոր լիցք է առանում 1905 թվականի դեկտեմբերյան համառուսաստանյան գործադուլից հետո: Անհրաժեշտ էր ամեն կերպ դեկավարել բանվորների և գյուղացիների ելույթները, ձիշտ ուղիով առնել աշխատավորական զանգվածներին, բուլշևիկյան կուսակցության լուղունգները հասցնել նրանց, բարձրացնել գործադուլավորների մարտական ոգին: Այս ուղղությամբ եռանդուն գործունեություն էր ծավալել Շուշիի սոցիալ-դեմոկրատական խումբը, որն ամուր կապեր էր հաստատել Վ. Ի. Լենինի և նրա կողմից դեկավարվող բուլշևիկյան «Պրոլետարի» թերթի հետ: Խմբի անդամների ջանքերով Շուշիում սկսում է գործել ընդհատակյա տպարան, ուր տպագրվում են հեղափոխական կոչեր, թոուցիկներ: Այստեղ է տպագրվել նաև «Խաղ գործադուլում» թոուցիկը:

Գաղտնի տպարաններ են ստեղծվում ոչ միայն Շուշիում, այլև Զամխաթ գյուղում: «Մշակը» 1906 թվականի մարտի 1-ի համարում գրում է, որ Շուշիի գավառի Զամխաթ գյուղում (այժմ այդ գյուղը կոչվում է Ննգի, ուր ձևվել է Բոգդան Կնունյանցը— Ս. Ա.) դորքերը խուզարկություն են կատարել և գտել են գաղտնի տպարան, մեծ քանակությամբ թոուցիկներ, արգելված գրականություն և թղթակցություններ, մի քանի պատրաստի ռումբեր և պայթուցիկ նյութեր:

Դեռևս ստուգման կարոտ տեղեկություններ կան, որ ռեակցիայի տարիներին անգամ Շուշիի դպրոցների բարձր

գասարանների աշակերտների ուժերով անլեզալ կերպով բույս էին տեսնում խմորատիպ թերթեր:

Առաջագեմ երիտասարդությունը ձգտում էր ունենալ սեփական տպագիր օրգան: Եվ մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո միայն հաջողվում է 1911 թվականի նոյեմբերի 17-ից սկսած հրատարակել «Ղարաբաղ» եռօրյա (երբեմն երկօրյա) թերթը, որի նպատակն էր «նախ ուսումնասիրել հայրենի երկրի ու ժողովրդի կրթական, կուլտուրական և տնտեսական դրությունը, ճանաչել այդ ժողովրդի կարիքն ու բավը և ապա՝ նրա կյանքի բարելոքման թարգմանն ու ջատագովը լինել»¹:

«Ղարաբաղ» թերթի խմբագրության շուրջն են համախմբվում գավառի մտավորականները՝ գրողներ, ուսուցիչներ, դերասաններ, կուլտուր-լուսավորական և առողջապահական օբյեկտների աշխատողներ: Կոստանդին Մելիք-Շահնազարյանը, Միրզա Տեր-Սարգսյանը («Միր-Սար» ծածկանվամբ), Պետրոս Զաքարյանը, ուսուցիչներ Տ. Տեր-Գրիգորյանը, Ս. Տեր-Գասպարյանը, Ի. Զոհրաբյանը և ուրիշներ սխտեմատիկաբար աշխատակցում էին թերթին, հանդես գալիս բաղամասնր նյութերով, բարձրացնում առօրեական հարցեր:

«Գավառական իրականությունը» խորագրի տակ ղեկավարված նյութերում տպագիր օրգանը պատմում է այն մասին, որ հազարավոր ընտանիքներ զրկված են ապրուստի միջոցներից և հազիվ են պահպանում իրենց ֆիզիկական գոյությունը, որովհետև ամբողջ հարստությունը կենտրոնացված է մի խումբ մարդկանց մոտ:

Թերթը տարբեր առիթներով նշում է, որ գավառի գրությունը ծանր է ոչ միայն տնտեսապես, այլև կուլտուրապես, չկային ուսումնական կանոնավոր հաստատություններ: Եղած ուսումնարաններում և դպրոցներում հիմնականում ընդգրկված էին ունևորների երեխաները:

«Ղարաբաղը» առաջ է քաշում ոչ միայն կանոնավոր դպրոցներ ունենալու, այլև ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու խնդիրը:

¹ «Լենինյան «Իսկրան». Անդրկովկասի մասին» հողմածների ժողովածու, Հայտնահրատ, 1960, էջ 167:

¹ «Ղարաբաղ», 1911, նոյեմբերի 17:

Դպրոցական հարցերի լայն լուսաբանման հետ մեկտեղ թերթը ձգտում էր ընթերցողների մեջ սեր առաջացնել դեպի գիտությունը, գրականությունը, արվեստը: Այդ նպատակով նրա էջերում մշտական տեղ ունեւր «Գեղարվեստ» բաժինը, որտեղ տպագրվում էին ոչ միայն գրական ստեղծագործություններ, այլև գրականագիտական հոդվածներ, ակնաւոր գրողների կյանքին և գործունեությունը նվիրված նյութեր:

Ընթերցողը թերթի հենց առաջին շորս համարներում կարգում է նշանավոր գրող Վրթանէս Փափաղյանի ծավալուն հոդվածը արվեստագետի, նրա աշխարհայացքի, ստեղծագործություններում մարմնավորվող գաղափարների դասհատման և այլ հարցերի մասին:

Թերթում հաճախ լույս տեսնող բանաստեղծությունները, պատմվածքները, ակնարկները, ֆելիետոնները պատկանում են տեղացի ստեղծագործողներին: Ուշադրութեան արժանի են Գրիգոր Ներսիսյանի, Խորեն Բորյանի, Կոն Աթաբեկյանի, Հակոբ Խանլարյանի, Սիմոն Առաքելյանի և ուրիշների շափածո և արձակ գործերը: Նրանցում ներկայացվում են ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նահապետական սովորություններն ու բարքերը:

Թերթի էջերում հրատարակվող ստեղծագործությունները հիմնականում համահնչյուն էին ժամանակի ոգուն, ուշագրավ էին գեղարվեստական արժանիքներով, լեզվամտածողական որոշակի մակարդակով: Ահա Գրիգոր Ներսիսյանի անվերնագիր մի բանաստեղծությունը, որտեղ արտահայտվում է «Մութ ճամփեքում...» դեգերող մարդու ակնկալումներն ու տանջալից հույզերը: Նա գրում է.

Զբնաղ լուսնի շողեր ընկան
Ձյունով պատած սև սարին.
Բլուրեղների շողեր առան,
Պեծին տվին, փալ առին...

Ու շաշում է ձմռան քամին,
Սուլում հանդարտ ու վալում,
Եվ լալիս է իմ հեղ հոգին
Տանջանք, պատրանք աշխարհում...

Մռայլ կյանքի անհույս, անույս
Մութ ճամփեքում ես ընկած:
Ախ, ինձ համար վառ արշալույս
Եւ... երկնքում չի ծագած...:

Սակայն այս չի նշանակում, թե բանաստեղծը ողբում է միայն տանջանք, խամլարի աշխարհը, ընդհակառակը, նա մահվան փոխարեն առաջադրում է տանջանքին դիմադրելու կուռ կամք՝ ապրել, մինչև որ ծագի նոր աշղը.

Ապրել եմ ուղբում...
Եվ իմ սրտի մեջ ծփում է ուժգին
Յատուրի վիշաք խորունկ տանջանքի,
Կարոտ է հոգիս տանջված կաթոգին,
Հուզիչ, փոթորկող մի շքնաղ կոտնկի...²:

Էնդինակը արշալույսի երգեր է երգում՝ ձոնելով հեղափոխության մարտիկներին: Նա տեսնում է, որ մարդկանց նոր խմբեր են ելել շահագործողական մեքենան տապալելու համար: Եվ «Նոր աշղ» բանաստեղծության մեջ գրում է.

Մռայլ ամպերը ցրվել են արգեն,
Կապույտ երկնքից արեն է շողում.
Սառցե շղթաներ շուտով կհալվեն
Եվ սեգ-թախձախտ սարն էլ է ժպտում...

Մեռնում են վշտեր և քո սիրավանդ
Երգերը խորխտ հնչում են ուժգին:
Վառվում են հույսեր... և քո ցավատանջ
Սիրտն է թնդում քո արշալույսին³:

«Ղարաբաղը» տպագրում էր նաև մեծարժեք հուշեր, հրատարակախոսական և ճամփորդական նոթեր:

Թերթն իր հիացմունքն էր արտահայտում այն պարբերականների նկատմամբ, որոնք ճշմարտացիորեն էին լուսաբանում ժամանակի իրավիճակը, բարձրացնում էին լայն զանգվածներին հուզող հարցեր, ինչպիսին 1911—

¹ «Ղարաբաղ», 1912, հունվարի 29:

² «Ղարաբաղ», 1912, փետրվարի 5:

³ «Ղարաբաղ», 1912, մայիսի 24:

1912 թթ. Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր խոսքն» էր:

Ընդհակառակը, պարսավում էր այն տպագիր օրգաններին, որոնք աշխատավորական էին հորջորջվում, սակայն իրականում հակոտնյա էին նրա շահերին, ինչպես 1910 թվականից Նոր Նախիջևանում հրատարակվող «Լույս» գրական-հասարակական շաբաթաթերթը, 1911 թվականից Մոսկվայում լույս տեսնող «Մարտ» երկշաբաթաթերթը, 1910—1917 թթ. Թիֆլիսում տպագրվող «Հովիտ» թերթը և այլն:

1911—1914 թվականներին Ղարաբաղում հրատարակվում է ռուսական երկու թերթ: Առաջինը «Շուշինսկի լիստոկն» էր, որի գործունեությունն սկսվեց 1911 թվականի հունիսից և լուսվեց մինչև նոյեմբերը: Թերթի ընդգրկման շրջանակները նեղ էին: Մի քանի խորագրերի տակ «Շուշինսկի լիստոկը» ընթերցողներին էր հասցնում առանձին նորություններ, հաղորդագրություններ Թիֆլիսից, Բաքվից, Ելիզավետպոլից (այժմ՝ Կիրովաբադ) և ուրիշ քաղաքներից, տպագրում էր ինֆորմացիաներ՝ մշակութային և դպրոցական կյանքից:

«Թատրոն և արվեստ» խորագրի տակ ղետեղվում էին նյութեր համերգների, երեկույթների-ցերեկույթների, գրական հանդեսների, դերասանական խմբերի ելույթների մասին:

«Շուշինսկի լիստոկը» բարձր էր գնահատում Ղազարու Աղայանի դերը մայրենի գրականության զարգացման բնագավառում: Ուղղակի գրված է. «Աղայանը կապրի, քանի դեռ գոյություն ունի հայկական դպրոցը, քանի մայրենի լեզուն հնչում է հայ դպրոցականի շուրթերից»¹:

«Շուշինսկի լիստոկը» հաճախ էր նյութեր տպագրում աչքբեռնացիների կյանքից, լուսաբանելով նրանց տնտեսական թշվառ վիճակը, կենցաղային անտանելի դրությունը, դաշտոցների, կուլտուր-լուսավորական օջախների իսպառ բացակայությունը: «Շուշիի ռուս-թաթարական դպրոցի եռամսյա ուսուցման արդյունքների մասին» թղթակցություններով և թերթում առաջագրում է ալլազգի երեխաների կրթության և դաստիարակության բարելավման հարցը, գտնելով, որ ժա-

մանակի հետ պետք է որոշակի առաջընթաց ունենան բոլոր ժողովուրդները:

Պարբերականը առանձին հետք չի թողել մամուլի պատմության մեջ: Նրա էջերում գրեթե չեն տպագրվել քաղաքական բնույթի նյութեր, այսինքն՝ «Շուշինսկի լիստոկի» արժեքը միայն գավառի տնտեսական և հոգևոր կյանքի մի քանի բնագավառների կցկտուր լուսաբանման մեջ է:

Երկրորդ թերթը «Շուշինսկայա ժիզնն» էր, որի անդրանիկ համարը տպագրվել է 1913 թվականի հունիսին: Եսխորդի համեմատությամբ այն հրատարակվում էր կանոնավոր, ուներ լույսընծայման հաստատուն օրեր և լուսաբանում էր գավառի առօրյան: Թերթն իր առանձին թղթակցություններում և ինֆորմացիաներում դժգոհություն էր արտահայտում ստեղծված քառասյին վիճակի առթիվ, բայց զրա պատճառը փնտրում էր ազգաբնակչության հետամնացության, անգրագիտության և կուլտուր-կրթական օջախների անբավարար քանակի և եղածների թույլ գործունեության մեջ:

Թերթը պրոպագանդում էր ժողովուրդների բարեկամությունը, այդ հարցին նվիրելով մի շարք նյութեր: Ուշագրավ է մասնավորապես «Ռուսական հասարակությունը և հայկական հարցը» հոդվածը, որտեղ ներկայացվում է հայերի ռուսների և մյուս ժողովուրդների բարեկամության ամբաստանման անհրաժեշտությունը, քննադատվում այն պարբերականները, որոնք հարցականի տակ էին դնում հայերի հավատարմությունը հարևանների նկատմամբ:

Կարևոր համարելով աշխատավորների գեղագիտական ճաշակի բարձրացումը և, ընդհանրապես, հայրենի երկրամասում կուլտուրական կյանքի առաջընթացը, «Շուշինսկայա ժիզնը» 10-րդ համարից սկսած բացում է «Թատրոն և արվեստ» բաժինը: Տպագրվող գեղարվեստական գործերում ուղղակի և անուղղակի կերպով խարազանվում են անբարոյականությունը, երկերեսանիությունը, շողոքորթությունը, անազնվությունը:

Ուշագրավ են թերթի փոքրիկ գրախոսականները Շուշինում լույս տեսնող առանձին գրքերի մասին:

¹ «Շուշինսկի լիստոկ», 1911, հունիսի 23:

Ընդարձակ էր «Շուշինսկայա ժիզն» թերթի լուսաբանման տեսադաշտը: Տպագիր օրգանի շուրջը համախմբված էին գավառում և նրա սահմաններից դուրս գործող մտավորականները, որոնք նպատակ ունեին թերթը դարձնել հուսալի ամբիոն՝ իրենց հուզող հարցերը լայնորեն լուսաբանելու համար: Եվ դա որոշակիորեն նրանց հաջողվում էր:

Հեղափոխական վերելքի տարիներին բավականին աշխուժացել էին Շուշիում գործող աշակերտական կազմակերպությունները՝ «Միությունը» և «Միրածը»: Վերջինիս ղեկավարում էին Շուշիի բուլճեիկները: 1913 թվականից սկսվում է հրատարակվել «Միրած» կազմակերպության համանուն անլեզու խմորատիպ ամսագիրը, որի յուրաքանչյուր համար ուներ տետրակի 10—12 թերթի ծավալ: Այն տպագրում էին Միմոն Ափյանը, Գևորգ Թովմասյանը և Գրիգոր Խաչյանը՝ առաջադիմական գաղափարներով տոգորված երիտասարդներ, որոնք հետագայում մտան բուլճեիկների կուսակցության շարքերը և սովետական տարիներին ղեկավար աշխատանք կատարեցին Լեոնային Ղարաբաղում և այլուր:

«Միրածը» լույս է ընծայվել մինչև 1917 թվականի մարտ ամիսը: Ուշագրավ էր աշակերտական «Միծաղ» խմորատիպ ամսագիրը, որն սկսեց լույս տեսնել 1916 թվականից, Շուշիում: Նրա թղթակիցները խարաղանում էին աշակերտության մեջ տեղ գտած բացասական երևույթները:

Ամսագիրը հաճախակի դուրս էր գալիս դպրոցական շրջանակներից, մերկացնում հետամնացությունը, սնոտիպաշտությունը, նախապաշարմունքներն ու զսեհիկ բարքերը:

1916 թվականին Շուշիում մի խումբ աշակերտներ հրատարակեցին «Պայքար» խմորատիպ շաբաթաթերթի՝ միակ համարը, որը, սակայն, առանձին հետաքրքրություն չներկայացրեց ընթերցողների շրջանում:

Ղարաբաղի աշակերտական մամուլի պատմության մեջ կարևոր էջ են կազմում նաև «Սրինդ» և «Աշակերտ» խմորատիպ թերթերը: Երկուսն էլ 1917 թվականին հրատարակել են Շուշիի թեմական դպրոցի աշակերտները:

Որոշ փաստեր կան 1917 թվականին Շուշիում լույս տեսած «Եռանդ» աշակերտական թերթի մասին:

Մեծ է սոցիալ-դեմոկրատական «Փայլակ» թերթի (1915—1917 թթ.) կատարած դերը գավառի աշխատավորության կյանքում: Թերթի շուրջը համախմբվում են ժամանակի նշանավոր մտավորականներից Լևոն Աթաբեկյանը, Գրիգոր Ներսիսյանը, Գառնիկ Ղազարյանը, Լևոն Վարդունին, Առաքել Առաքելյանը, Սարգիս Գանիելյանը, Մելիքբեկ Եսայանը, Խաչիկ Սամվելյանը և ուրիշներ:

Թերթը մերկացնում էր իմպերիալիստական տերությունների դիվանագիտական նպատակները և կեղծ հումանիզմը, սրտացավություն էր հանդես բերում զրկանքի մեջ գտնվող մարդկանց հանդեպ, որոնք ոչ միայն անելանելի նյութական դրության մեջ էին, այլև իրազարժությունների տխուր բրտամով զրկվել էին տուն ու տեղից, հարազատներից...

«Մեր թղթակիցները» ընդհանուր խորագրի տակ «Փայլակը» քննադատում է Շուշիի մոտ գտնվող Քարին-տակ գյուղի հարուստ Հարունովին և նրա նմաններին, որոնք ունենալով մետաքսակարծակի ֆաբրիկաներ, շահագործում էին աշխատավորներին, ծանր զրկանքների մղում մի կտոր հաց վաստակելու համար:

Առաջ քաշելով դպրոցներ բացելու հարցը, «Փայլակը» նկատի ուներ այնպիսի ուսումնական օջախների առկայությունը, որոնք, հիրավի, նպատակ ունեն դժվարություններից շփոթեցող սաներ պատրաստել: Ահա ինչ է ասվում «Դպրոցական ռեֆորմ»՝ առաջնորդող հոդվածում. «Դպրոցական գործով, մատաղ սերնդի կրթությամբ և դաստիարակությամբ հետաքրքրվող հասարակությունը վաղուց նկատել է և մատնանշել այն հակասությունը, որ կա դպրոցի ծրագրի, նրա կատարած գործի, տված արդյունքի և կյանքի պահանջների, հասարակության զարգացման կարիքների միջև: Մինչդեռ կյանքը պահանջում է դպրոցավարտ երիտասարդից ի վիճակի լինել արտահայտելու կենսական արժեքներ. մինչդեռ հասարակությունը պահանջում է նրանից կարողանալ ստեղծել հասարակօգուտ արժեքներ. դպրոցը տալիս է գրաճանաչություն, գիտությունների զանազան ձյուղերի մասին ընդհանուր հասկացողություն: Մինչդեռ հասարակության զարգացման շահերի տեսակետից դպրոցավարտ երիտասարդությունը պիտի կարողանա դիմանալ կյանքի արհա-

վիրքեւերին և ուժ ունենա կովելու նրա դեմ և հասնելու իր դրած նպատակին, իսկ սրա համար դպրոցը պետք է կարողանա աշխատանքի մեջ կոփել ու ամրացնել իր սաների կամքը, հասունացնել նրանց մեջ սիստեմատիկ գործունեութեան կարողութիւնը, դպրոցն արձակում է իր ծոցից կամադուրկ, սիստեմատիկ և պլանավոր աշխատանքի համար անպատրաստ, շուտ գրավվող և նույնքան շուտ հիասթափվող երիտասարդութիւն...»¹:

Թերթը կարծես այս հոգովածով տալիս է դպրոցական իր ծրագիրը:

Թերթի էջերում պատշաճ տեղ էին գրաւում հայրենասիրական թեմային նվիրված նյութերը: Դրանք արտահայտում էին մասնավորապես մեր նախնիների հերոսական գործունեութիւնը: Այս առումով ուշագրավ էր ականավոր պատմաբան Լեոյի «Ղարաբաղ և Ղարաբաղցիներ» մեծածավալ հոդվածը, որ լույս տեսավ Թերթի 1917 թվականի մարտի 9-ի, 16-ի և 23-ի համարներում:

Թերթի տեսագաշտից դուրս չի մնում հակահեղափոխական տպագիր օրգաններին խարազանելը: Քննադատութիւնն ավելի սուր էր 1914—1919 թվականներին Բաքվում լույս տեսնող դաշնակցական «Արև» և Շուշիի «Ապառաժ» (1917 թ.) թերթերի նկատմամբ: «Փայլակ» թերթը ջերմութեամբ է արձագանքում Շուշիում սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնն ստեղծելու հաղորդմանը: «Ողջունում ենք» խմբագրականում թերթը գրում է. «Փայլակի» անցյալ համարում հաղորդել էինք, որ Շուշիում արդեն կազմակերպւում է սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւն, որին անդամագրւելու են, ինչպէս և սպասելի էր, առանց ազգի խարտիջան բոլոր նրանք, ովքեր տոգորված են սոցիալիստական իդեալներով, պրոլետարական հաղթանակի նպատակներով, որ արձանագրված են միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի վրա: «Փայլակը», որ այդ գաղափարների ջերմ պաշտպանն է հանդիսացել ու ջանացել է այդ գաղափարներին ծառայել, շնայած աննպաստ պայմաններին, չի կարող իր խնդակցութիւնն ու անհուն ուրախութիւնը չհայտ-

¹ «Փայլակ», 1915, ապրիլի 26:

նել, որ վերջապես մեր գաւառական նեխաված իդեական մթնոլորտում հանդես է գալիս մի թարմ գաւառական հոսանք, որ մեծ դեր ունի կատարելու և նույնքան ավելի մեծ, հակայական աշխատանք ունի արծարծելու տեղական քաղաքական-հասարակական կյանքի բարեշինութեան մեջ»¹: Ահա թե ինչու թերթը 33-րդ համարից սկսած յուրաքանչյուր համարի գլխավերևում ազդարարում է «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լուզունը:

Ղարաբաղի գրական կյանքում որոշ հետք է թողել 1916 թվականի մարտին հրատարակված «Միաձայն» հանդեսը, որ գետնգլխեցին Ազատ Վշտունու, Միսաք Պետրոսյանի, Խորեն Լորենցի, Գրիգոր Ներսիսյանի, Գառնիկ Ղազարյանի, Լեոն վարդունու և այլոց շափածո ու արձակ գործերը: Մի շարք ստեղծագործութիւններում երգիծական խոսքի ուժով ծաղրվում են զոփողները, սուրճի վաստակը յուրացնողները:

Միսաք Պետրոսյանի հերոսները երազում են նոր օրերի մասին: Այդ արտահայտվում է մասամբ «Վարսվանս գալիս է» և «Հերոսի երազը» գողտրիկ բանաստեղծութիւններում: Ահա մի հատված «Հերոսի երազը» բանաստեղծութիւնից.

...Մեկ համար էլ թող ծաղկի
Նոր արշալույս, նոր տարի,
Մի տեղ ձուլվենք նոր կյանքում,
Հլուսվի մի սիրտ, մի հոգի...
Մեկ օրորեն անընդհատ
Նոր կյանք-երազ ու հերթաթշ:

Ոչ միայն Ղարաբաղի, այլև ամբողջ հայ պարբերական մամուլի պատմութեան մեջ նշանակալից է բուլշևիկյան «նեցուկ» թերթի խաղաղած դերը, որի առաջին համարը լույս տեսավ 1917 թվականի օգոստոսի 18-ին: Այն ՌՍԴԲԿ Շուշիի կազմակերպութեան օրգանն էր: Թեև թերթը լույս է ընծայել ընդամենը ութ համար, բայց շոշափելի գործ է կատարել լեոնինյան գաղափարների պրոպագանդան, բուլշևիկների կուսակցութեան օրվա լուզունգներն ու ցուցումները աշխատա-

¹ «Փայլակ», 1917, ապրիլի 28:

² Տե՛ս «Միաձայն», 1916, էջ 16:

վորներին հասցնելու, նրանց հեղափոխական ոգին բարձրացնելու ուղղութեամբ:

«Նեցուկը» ձգտում էր բոլշևիկյան սկզբունքայնութեամբ ցույց տալ հեղափոխական խմորումները, երևան հանել դրանց պատճառները, աշխատավորների ուժերը մոբիլիզացնել գավառում սովետական կարգեր հաստատելու համար:

Մի շարք հողվածներում թերթը շեշտում է, որ Շուշում էլ պետք է պայքարը նոր ձևով տարվի հակահեղափոխական տարրերի, նացիոնալիստների ու նրանց հովանավորների, բոլոր նրանց դեմ, ովքեր ոտնահարում են աշխատավորների շահերը, շեն մտահոգվում նրանց մասին:

«Նեցուկի» խմբագիրն ու հրատարակիչը Աշոտ Հովհաննիսյանն էր, որի խոր գաղափարայնութեամբ հազեցված հողվածները նոր փայլ էին տալիս պարբերականին: Թերթի շուրջը համախմբված էին գավառում գործող բոլշևիկները Հակոբ Կամարին (Բեջանյան), Ալեքսանդր Ծատուրյանը (Ալ. Ռուբենին), Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշներ: Նրանց հրապարակած նյութերում հանգամանորեն վերլուծվում են գավառի քաղաքական երևույթները, բոլշևիկյան գնահատական է տրվում աշխատավորների ելույթներին, մերկացնելով Ղարաբաղում ստեղծված ժամանակավոր կառավարության գործադիր կոմիտեին, որը փաստորեն քաջալերում էր «...հակահեղափոխական, մութ ու գիշատիչ տարրերին՝ ամեն տեղ կազմալուծելու իշխանությունն ու պարենավորումը:

...Միայն դեմոկրատական մասսաների կազմակերպված քայլերը, — շարունակում է «Նեցուկը», — կարող են փրկել մեր երկիրը հակահեղափոխական կազմակերպությունների ազդեցությունից և հենակետ լինել հեղափոխական կենտրոնների վճռական պայքարին»¹:

Համարձակ էր «Նեցուկը» իր արտահայտած մտքերով, առաջադրած հարցերով: Թերթը դատապարտում էր ժամանակավոր կառավարության «սոցիալիստ» միջատրներին, կերենակու և Կոռնիլովի վարած քաղաքականությունը, հակաժողովրդական այն ուժերին, որոնք գործում էին վերահաս հեղափոխության դեմ: Պրակտիկ նյութերից բացի թեր-

¹ «Նեցուկ», 1917, օգոստոսի 24:

թի էջերում գետեղվում էին տեսական հողվածներ, որոնք սլարդ ու որոշակիորեն պարզաբանում էին ստեղծված քաղաքական իրավիճակը և մատնանշում դրանից դուրս գալու ելքը:

«Նեցուկը» ժամանակին արժանացել է Անդրկովկասում լույս տեսնող բոլշևիկյան թերթերի ուշադրությանը: ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կոիվը» թերթը գրել է. «...Գալույթ թերթին, նորա բովանդակությանն ու ուղղութեանը, պետք է գովենք մեր ընկերների եռանդն ու կորովը, որ ասպարեզ գալով, բաց ճակատով անմիջական կոիվ են սկսել «գաշնակցության» դեմ:

...Ցանկանում ենք հարատևություն և հաջողություն «Նեցուկին»:

Կենտրոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն նման «նեցուկներին», եթե միայն վերջինները ունենան դիմացկանություն և, որ գլխավորն է, նյութական միջոց:

Ողջունյալ «Նեցուկին»¹:

Հեռու չէր մեծ Հոկտեմբերի հաղթանակը Անդրկովկասում: Հեղափոխական պայքարի զարգացումը օր օրի նկատելի էր նաև Ադրբեջանում: Ադրբեջանի կոմկուսի առաջին համագումարում (1920 թ. փետրվար) ստեղծված կոմունիստական կուսակցությունը բազմազգ աշխատավորներին նախապատրաստում էր զինված ապստամբություն: Ռուսաստանի օրինակը կենդանի և ոգեշնչման աղբյուր էր նաև Ադրբեջանի համար:

ՌՍԴԲԿ կովկասյան երկրային կոմիտեի Բաքվի բյուրոյի 1920 թվականի ապրիլի 22-ին հրավիրած խորհրդակցությունը վճռական դիրք բռնեց Ադրբեջանում սովետական իշխանություն հաստատելու համար:

Այն որոշում ընդունեց զինված ապստամբություն սկսելու մասին: Արդեն հինգ օր հետո առաջարկվեց մուսավաթական կառավարությանը իշխանությունը հանձնելու սովետներին: Ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում է սովետական իշխանություն: Այդ մասին հատուկ հայտարարությամբ հան-

¹ «Բանվորի կոիվը», 1917, սեպտեմբերի 10:

գես է գալիս Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն:

1920 թվականի մայիսին կատարվում է դարաբաղցու փզ-
ձը՝ լեռնային երկրամասում հաստատվում է սովետական
իշխանություն: Կյանքի նոր պայմանները հնարավորություն
են բնօրնում ապահովելու ոչ միայն տնտեսական, այլև հո-
գևոր կյանքի առաջընթացը:

ԼՈՒՅՍԸ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Սովետական իշխանության հաղթանակը պայծառ լույս
բերեց Լեռնային Ղարաբաղին: Առաջին իսկ օրերից ծնունդ
առան նորը, առաջավորը...

Ադրբեջանական ՍՍՀ Կենտգործկոմի 1923 թվականի հու-
լիսի 7-ի դեկրետով Ղարաբաղի լեռնային մասը, ուր ազգա-
բնակչությունը հիմնականում հայեր են, հռչակվում է ինք-
նավար մարզ: Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի հուլիսի 24-ի
դեկրետով հաստատված Լեռնային Ղարաբաղի ժամանակա-
վոր հեղկոմի կազմը սկսում է իր անդուլ աշխատանքը: Հեղ-
կոմի նախագահը Արմենակ Ղարազյուզյանն էր, որի եռանդն
ու կազմակերպչական ընդունակությունները լիովին նվիրա-
բերվում են հայրենի երկրամասի տնտեսության զարգաց-
մանը:

Այդ նույն թվականի սեպտեմբերի 20-ին բոցաշունչ հե-
ղափոխական, Լենինի մերձավոր զինակից Ստեփան Շահում-
յանի հիշատակը հավերժացնելու համար Խանքենդին վե-
րանվանվում է Ստեփանակերտ և դառնում մարզի կենտ-
րոնը:

Մարզի կուսակցական կազմակերպությունները, գլխավո-
րելով լայն զանգվածների աշխատանքային եռանդը, երկրա-
մասը դուրս են բերում լուսավոր ուղի: Այս մասին լավ է
ասում Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտգործկոմի նա-
խագահ Արմենակ Ղարազյուզյանը: «Առաջին տարին կազ-
մակերպչական շրջանն էր. պետք էր վերաշինել քանդված
Ստեփանակերտը, ստեղծել բնակարանային-կուլտուրական,
պայմաններ՝ դրսից ուժեր հրավիրել, փոստ-հեռագրական և

հեռախոսային կապ ստեղծել թե՛ դավառների և թե՛ դրսի
հետ, կազմակերպել կառավարական բոլոր մարմինները...

Կառավարությունը, հիմնվելով աշխատավորության բուռն
ոգնությունը և աջակցության վրա, ամենակարճ ժամանա-
կամիջոցում կարողացավ լուծել իր առջև դրված խնդր-
ները:

Աճող ու զարգացող Ստեփանակերտ, — փոստ, հեռագրա-
յին, հեռախոսային կապը և ռադիո ու էլեկտրակայաններ,
շրջանային տպարանը, գյուղատնտեսական տեխնիկումը,
պետական թատրոնը, կենտրոնական հիվանդանոցն ու բու-
ժարանը, — ահա այն ավյալները, որոնք հնարավորություն
են տվել բավականաչափ ուժեր կենտրոնացնել Ստեփանա-
կերտում և, հենվելով վերջինների վրա, վերցնել իր կառա-
վարության ղեկը¹:

Այնուհետև Ա. Ղարազյուզյանը պատմում է, որ Ղարա-
բաղում ինքնավար մարզ ստեղծելու երկրորդ տարեդարձին
ավարտվել է Ասկերանի սպիրտի գործարանի կառուցումը,
վերականգնվել են մետաքսագործարանները, ավարտվել է այն
խճուղու շինարարությունը, որը կապում է վարանդան և Դի-
զակք Ստեփանակերտի և Բաքու — Ջուլֆա երկաթուղագծի հետ:

Մարզի տնտեսությունն ըստ ամենայնի զարգացնելու
համար ստեղծվում է կիսագործի կաթնապրանքային օրինա-
կելի ֆերման, հետախուզվում է Ջրաբերդի (Մեխմանայի
շրջանում) արձնի, ցինկի և արծաթի հանքերի հարստությու-
նը, թարթառ գետից ջրանցքներ են անցկացվում՝ Ջրաբեր-
դում տասը հազար դեսյատինից ավելի հողեր ոռոգելու
նպատակով²:

Մարզի քաղաքների ու գյուղերի կյանքը լիարժեք դարձ-
նելու, տնտեսությունը արագ վերականգնելու և զարգացնե-
լու, ինչպես նաև նոր մարդու դաստիարակությունը պատ-
շաճ մակարդակի վրա դնելու համար հարկավոր էին նաև
գաղափարական ներգործուն միջոցներ:

Նախահեղափոխական Ղարաբաղից ժառանգություն մնա-
ցած Շուշիի տպարանը վերջին երկու-երեք տարում փաստո-

¹ Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1925, օգոստոսի 9:

² Տե՛ս նույն տեղը:

րեն անգործության էր մատնվել և 1920 թվականի հունիսից մինչև 1923 թվականի սկիզբը տպագրում էր միայն կոչեր, կարգադրություններ, որոշումներ: Իսկ տպագիր օրգանի դերը հետզհետե մեծանում էր:

1923 թվականի հունվարից սկսեցին հրատարակվել «Զավան էֆինչիսին» («Երիտասարդ հողագործը»), իսկ նույն թվականի մայիսից՝ «Ղարաբաղ էֆինչիսին» («Ղարաբաղի հողագործը»), սակայն դրանք երկար կյանք չեն ունենում. լույս են տեսնում մի քանի համարներ:

Հրատարակված համարներում աղբբեջանական թերթերը մեծ պաթոսով են ներկայացնում Սովետական Ղարաբաղի աշխատավորության ոգևորությունը նոր կյանքի կառուցման պայքարում:

Նորաստեղծ տպագիր օրգանները հասցնում են տարբեր ժանրի նյութեր հրատարակել արդեն վերածննդի ճանապարհը բռնած բանվորների, գյուղացիների և մտավորականության մասին:

Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքում մեծ իրադարձություն էր Շուշիում 1923 թվականի հունիսի 16-ից «Ղարաբաղի գեղջուկ» թերթի (4-րդ համարից՝ «Խորհրդային Ղարաբաղ») հրատարակությունը, որը դառնում է լեռնային երկրամասի հիմնական տպագիր օրգանը:

Մեծ խնդիրներ են դրվում թերթի առջև. համակողմանիորեն լուսաբանել լեռնային Ղարաբաղի բազմաճյուղ տնտեսությունը: Մի կողմից՝ օգնել կուսակցական և սովետական մարմիններին՝ արագացնելու առաջընթացի համար մղվող պայքարը, մյուս կողմից՝ ցույց տալ վերակառուցվող երկրամասի առաջին հաջողությունները, միաժամանակ բացահայտելով նորին, դարգացողին խոչընդոտող ղժվարությունները:

Իրավացի է թերթը, երբ գրում է. «Ղարաբաղի գեղջուկը» այսօրվանից յուր էջերը լայն բացելով աղքատ գյուղացիության առաջ, պետք է մեր կյանքի ցավոտ կողմերը արձանագրելով՝ առաջադրի գյուղացիությանն յուր առողջ եզրակացությունները, մշակելով ուղիներ մեր կատարելիք ղժվարին, բայց արդյունավետ աշխատանքի ասպարեզում:

«Ղարաբաղի գեղջուկը» լինելու է ամեն մի գյուղացու

հարազատ ընկերը, նրա շահերի արտահայտիչը և նրա մըտքերի թարգմանը: Թերթը հուսալու է լայն աջակցություն հենց աղքատ գյուղացուց՝ միացյալ ուժերով դարբենելու վաղվա օրը»¹:

Անդրանիկ համարից սկսած տպագիր օրգանը իր էջերը բացում է աշխատավոր մարդկանց առջև՝ լուսաբանելով նրանց առօրյան, ձգտումներն ու ակնկալումները:

«Խորհրդային Ղարաբաղը» լավ էր գիտակցում, որ իր առջև դրված խնդիրները հաջողությամբ չի կարող իրագործել, եթե նրա շուրջը համախմբված չլինի թղթակցական բանակ և թերթը չհասնի ժողովրդական զանգվածներին: Անդրանիկ համարի կոչերի մեջ կարդում ենք. «Ընկե՛ր գյուղացի, տարածիր քո հարազատ թերթը գյուղացիական լայն շրջաններում», «Ընկերներ, ուղարկեցե՛ք թերթին գյուղացիական ցավերից նյութեր. գրե՛ք այնպես, ինչպես կարող եք, միք ամաչիլ», «Ընկերներ, գրեք ձեր գյուղի կուսակների արարքներից, նախապաշարմունքներից և լավ ու վատ գործերից», «Թող կորչեն թափոռները և սուրբերը. կեցցե՛ աշխատանքը»² և այլն:

Լավ են աշխատում «Թերթի բարեկամների խմբակները»: Նրանք քաղաքի և գյուղի աշխատավորության առօրյան լուսաբանում են հետաքրքիր նյութերով, մղում նրան աշխատանքային նոր հաջողությունների, կապում թերթի, գրքի ընթերցանության հետ:

Ահա թե ինչու կարճ ժամանակում մեծանում են թերթի տպաքանակը և թղթակիցների թիվը: Եթե սկզբում այն լույս էր տեսնում ընդամենը 500 օրինակ, և թղթակիցների թիվը 10—14 հոգի էր, ապա 1927 թվականին տպաքանակը դառնում է 2300, իսկ թղթակիցների քանակը՝ 170—180³:

Մարդային թերթը ձգտում է մի կողմից լստացնել թղթակիցների ակտիվի շարքերը, մյուս կողմից՝ բարձրացնել նրանց քաղաքական-մասնագիտական մակարդակը:

Թղթակիցների աճին մեծապես նպաստում է թերթի 1926 թվականի մայիսի 28-ի համարում տպագրված պատի թեր-

¹ «Ղարաբաղի գեղջուկ», 1923, հունիսի 16:

² «Խորհրդային Ղարաբաղ», 1923, օգոստոսի 8:

³ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1927, ապրիլի 23:

թերի գյուղթղթակիցների խմբակների կանոնադրությունը: Այդտեղ պարզ ասվում է, թե ինչ անելիքներ ունեն թերթերը և ինչպես պետք է բանվորական և գյուղական թղթակիցները օգնեն գրանց գործելու մարտականորեն:

«Նորհրդային Ղարաբաղը» գործում է ավելի օպերատիվ՝ բարձրացնելով մարդի համար կարևորագույն հարցեր: Նա դառնում է Լեռնային Ղարաբաղի աշխատավորության պայքարի հայելին, երկրամասի պատմության ամենահավաստի տարեգիրը:

Մեծ Հոկտեմբերը մարդկանց պարզեցնում է լույս, ազատություն, ստեղծագործելու հնարավորություն: Նոր կյանքի կառուցումը ինքնըստինքյան չէր իրագործվի, եթե մարդիկ մնային «խավարի թագավորության» մեջ: Ահա թե ինչու վ. Ի. Լենինը հռչակեց՝ «...Մեզ համար այժմ ամենակարևորը խնդիրն է՝ սովորել, սովորել և սովորել»¹:

Լեռնային Ղարաբաղը՝ ցարական Ռուսաստանի այդ ծայրամասային գավառը, նոր էր բռնելու իսկական լուսավորության ուղին: 1921 թվականի տվյալներով ամբողջ բնակչության միայն 10 տոկոսն էր գրագետ, ընդ որում, կանանց՝ 3,9 տոկոսը²:

Անգրագիտության վերացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1919 թվականի դեկտեմբերի 26-ին բնագոնած «ՌՍՖՍՀ բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին» նշանավոր դեկրետը: Հետագայում նման որոշում ընդունեց ԱդրՍՍՀ կառավարությունը: 1920 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղում արդեն սկսել էին գործել ուսուցիչների պատրաստման դասընթացներ: Շուտով բացվել էին անգրագիտության վերացման առաջին կետերը:

Կուսակցական, սովետական վերադաս և տեղական մարմինները ամեն կերպ ձգտում էին բնակչության անգրագիտության վերացումը դարձնել հրատապ խնդիր: Ահա թե ինչու 1921 թվականի մայիսին Ազրբեջանական ՍՍՀ սովետների առաջին համագումարը քննարկման կարևոր հարց հա-

մարեց անգրագիտության վերացումը հանրապետության մասշտաբով:

Մեծ ակտիվություն էին ցուցաբերում կոմունիստները: Արդեն 1923 թվականի սկզբներին Լեռնային Ղարաբաղի կոմունիստների 40 տոկոսը գրագետ էր: 1924 թվականին մարդում հաշվվում էր 65 լիկկայան, որտեղ սովորում էին 1872 մարդ³:

Կազմակերպված էին գործում մարդի առանձին շրջաններում հենց նոր ստեղծված անգրագիտության վերացման կայանները, որոնց օգնում և ղեկավարում էր 1925 թվականին կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի որոշմամբ հիմնադրված կամավոր ընկերությունը:

Անգրագիտության վերացման հիմնական միջոցը մասսայական դպրոցների ստեղծումն էր, ժողովրդական կրթության գործի արմատական կարգավորումը, մի բան, որ հիմնովին կփոխեր նաև մարդու աշխարհայացքը, նրա կենցաղն ու առօրյան: Այդ բանը նկատելի էր նույնիսկ 1922—1923 ուսումնական տարում. երկրամասում արդեն գործում էր 79 առաջին աստիճանի դպրոց, ուր սովորում էին 4750 աշակերտ և աշակերտուհի: Հաջորդ ուսումնական տարում նոր դպրոցներ են բացվում մի շարք գյուղերում: Ըստ եղած տվյալների, 1923—1924 ուսումնական տարում ԼՂԻՄ-ի դպրոցների թիվը հասնում է 102-ի, աշակերտներինը՝ 7627-ի:

~~Մասսայական դպրոցներից գատ մարդում ստեղծվում են տեխնիկումներ, ուսումնարաններ: 1921 թվականից Շուշիում գործում է մանկավարժական ուսումնարանը, 1923 թվականին Ստեփանակերտում բացվում է գյուղատնտեսական տեխնիկում:~~

1924 թվականի նոյեմբերի 30-ի համարում «Նորհրդային Ղարաբաղը», տպագրելով Ն. Կ. Կրուպսկայայի հոդված-նամակը՝ «Ինչ են սովորեցնում հիմիկվա դպրոցում»⁴ վերնագրով, լայնորեն պրոպագանդում է այն միտքը, որ արդի դպրոցական գործը բոլորովին հեռու է սխոլաստիկ մտածողությունից և այն դրված է կանոնավոր հիմքերի վրա:

1 վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 513:

2 Տե՛ս «Вопросы истории КПСС», № 5, 1973, էջ 71:

3 Տե՛ս «Вопросы истории КПСС», № 5, 1973, էջ 72.

4 «Նորհրդային Ղարաբաղ», 1924, նոյեմբերի 30:

Ավելի պարզ ասած, եթե նախասովետական շրջանում իշխում էր դավանաբանականն ու անառարկելին, հին դոգմաներին գերի դառնալը, ապա այսօրվա դպրոցի պարտքն է՝ ակտիվացնել սովորողի վերաբերմունքը գիտելիքների նկատմամբ, գիտակցական վերաբերմունք դրսևորել ուսուցանվող սահմանումների, ֆորմուլաների նկատմամբ: Մի խոսքով, սովետական դպրոցը իր ամբողջ էությունը նոր է բովանդակությունում և մեթոդիկայով: Այս ամենը, սակայն, պատշաճ նպատակամղում չի ունենա, եթե դպրոցի աշխատանքները չդեկավարի բարձրորակ մասնագետը, եթե ուսուցիչը զինված չլինի նոր աշխարհայացքով և հարուստ գիտելիքներով:

Այս և նման հարցերով են մտահոգվում Լ.Ղ.Մ կուսակցական, սովետական կազմակերպությունները, այս հարցերն են լայնորեն լուսաբանում մարզային և գավառային թերթերը:

Դպրոցական գործի դարաբաղցի պիոներները շատ ուժ ու եռանդ են ներդնում ժողովրդական կրթության կազմակերպման գործում: Այդ մեծ նպատակին էր ուղղված 1924 թվականին Խաչենի և Վարանդայի գավառների ուսուցչական միացյալ համագումարը, որտեղ լրջորեն դրվեց երկրամասում դպրոցական գործը կազմակերպված առաջ տանելու հարցը:

Համագումարում, խոսելով ձեռք բերած առաջին հաջողությունների մասին, Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուսժողովոմ Առաքել Առաքելյանը նշում է սվյալ ժամանակահատվածում դպրոցների առջև դրված կարևորագույն խնդիրները, առաջ քաշում նոր դպրոցներ հիմնելու, եղածները կարգավորելու, ուսուցչական անձնակազմը որակավորելու, ուսումնական գրականություն ձեռք բերելու հրամայական պահանջը:

Համագումարի տեսագաղտից չվրիպեց նաև արտադպրոցական կրթության՝ դասախոսությունների, կիրականօրյա զրույցների, երեկոյան դասընթացների կազմակերպման հարցը:

1924 թվականի ապրիլի 25-ին Ստեփանակերտում բացված մարզային կուսակցական կազմակերպության առաջին

խոնֆերանսում, որտեղ ողջույնի խոսքով հանդես եկավ Աղբյուրբեջանի Կենտգործկոմի նախագահ Միր-Բաշիր Կասումովը, խիստ ուշադրություն դարձվեց դպրոցական գործի շուտափույթ կարգավորմանը, հանձնարարվեց տեղական կուսակցական և սովետական մարմիններին՝ անհապաղ ղեկավարելու կրթության հարցերով:

Կուսակցական մարզային կոմիտեի հանձնարարությամբ 1924 թվականին տեղի են ունենում Խաչենի (Ստեփանակերտի), Ջրաբերդի (Մարտակերտի), Վարանդայի (Մարտունու), Գիդակի (Հաղրուբի) և Շուշիի շրջանների կոմբջիջների քարտուղարների խորհրդակցություններ, ուր քննարկվում են լուսավորության, կուլտուրական շինարարության հարցերը: Գիդակի շրջանի կոմունիստների կողմից ընդունված որոշման մեջ ասված է. «3) Կուլտուր-կրթական ասպարեզում ուժեղացնել աշխատանքը, որպեսզի կազմակերպության շարքերում վերացվի անգրագիտությունը», «5) Ուսումնարանների բարելավման գործը համարել հարվածային և հրատապ խնդիրներից»¹:

Մարզային թերթը նամակներ է տպագրում, որոնց հեղինակները բողոքում են իգական սեռի կրթության նկատմամբ անտարբեր վերաբերմունքի դեմ: Նամակներից մեկում կարդում ենք. «Ըստ թվական տվյալների, Ղարաբաղի հասարակության մեջ անգրագիտությունը վերացված է գլխավորապես տղամարդկանց մեջ, իսկ կինը, որ դարեր շարունակ դառնում է ստրկության մեջ՝ մի կողմից խաների, բեկերի, կուլակների ձեռքում, իսկ մյուս կողմից՝ իրենց ամուսինների ձեռքում, պետք է դուրս գա ասպարեզ»²:

Հոգ է տարվում նաև Ղարաբաղում ապրող ազդեցիկների և այլ ազգաբնակչության ուսման մասին: Եթե մարզում 1923 թվականին գործում էր ընդամենը երկու ազդեցիկական դպրոց, 1925 թվականին դրանց թիվը հասնում է 22-ի, որոնց մի մասը պարապմունքներ է անցկացնում նորակառույց և նորոգված շենքերում (Խալիֆալու, Ումուդլու, Քյոսալար և այլուր):

¹ «Նորհրդային Ղարաբաղ», 1924, նոյեմբերի 7:

² Նույն տեղը:

«Նորհրդային Ղարաբաղի» 1925 թվականի նոյեմբերի 7-ի համարում հաղորդվում է, որ մարզի մի շարք հեռավոր գյուղերում, որտեղ նախասովետական շրջանում ոչ ոք չի եղել գրաճանաչ, ստեղծվում են ուսումնական օջախներ:

Թերթը նշում է նաև, որ 1925 թվականի դեկտեմբերի 23-ից Ստեփանակերտում գործում է երաժշտական տեխնիկում՝ ունենալով առաջիկա խմբակային երաժշտության, վոկալ արվեստի, դաշնամուրի և ջութակի դասարաններ:

1926 թվականի ապրիլի 23-ին բացված Լեռնային Ղարաբաղի խորհուրդների III համագումարում արված գեկուցման մեջ նշվում է, որ շոշափելի են լուսավորության բնագավառի ձեռքբերումները: Արդեն մարզում գործում էին 134 առաջին աստիճանի, 6 երկրորդ աստիճանի դպրոցներ, 3 տեխնիկում, մեկ նկարչական ստուդիա: Աշակերտների թիվը հասնում է 15.413-ի, ուսուցիչներինը՝ 263-ի: Ժողովրդական կրթության ծախսերը կազմում են 417 397 ուրբլի:

1927 թվականի հունիսի 20-ին Ստեփանակերտում բացվում են մանկավարժական դասընթացներ ուսուցիչներ վերապատրաստելու համար: Առաջին հերթին ընդգրկվել էին 200 հոգի:

Ուսման գործին մեծապես նպաստում է լուսժողովին կից կազմակերպված պետական հրատարակչությունը, որը առանձին ուսումնական ձեռնարկներից բացի հրատարակում էր գյուղատնտեսական բնույթի գրքույկներ¹:

Քաղաքն ու գյուղը «խավարի թագավորությունից» արագորեն դուրս հանելու և անգրագիտությունը իսպառ վերացնելու գործում մեծ է գրքի դերը: Կավ գիրքը մարդուն դարձնում է առաքինի, բարի, եռանդուն: Եվ իրավացի է Վոլտերը, երբ ասում է. «Գրքերի մեջ կան այնպիսիները, որոնք բուխարու կրակի նման են. այդ կրակը վերցնում են հարեանից, վառում են իրենց մոտ, փոխանցում են ուրիշին, և կրակն սկսում է պատկանել բոլորին»:

Ահա թե ինչու գրքի պրոպագանդան մարդում դառնում է կենսական պահանջ:

Մարզի տեղական կազմակերպությունները հոգ են տա-

նում նոր գրադարաններ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ բացելու և դրանք անհրաժեշտ գրականություններ ապահովելու մասին:

1924 թվականը կարևոր տարեթիվ է Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի կյանքում. բացվում է Ստեփանակերտի Մ. Գորկու անվան գրադարանը, որի համար տարբեր մասնագիտություններ և տարբեր լեզուներով գրականություն ժողովելու գործում քիչ ավանդ չեն մոծում նաև Մոսկվայի, Բաքվի, Երևանի և այլ բնակավայրերի դարբաղցի մտավորականները:

«Գրադարանի հիմնադրման առաջին տարում ֆոնդում կար ընդամենը 1097 կտոր գիրք, այն էլ հավաքվել էր Մոսկվայում սովորող Ղարաբաղցի ուսանողների և մարզի աշխատավորության նվիրատվության շնորհիվ»¹:

Ինչ խոսք, տարեցտարի գրադարանը հարստանում է արդեն պետության կողմից հատկացվող գումարների և առանձին նվիրատվությունների հաշվին: Նշենք, որ 1917 թվականից ՍՄԿԿ անդամ Հայկ Տեր-Սարգսյանը Մոսկվայից 150 կտոր գիրք է ուղարկում գրադարանին, իսկ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ահարոն Մովսիսյանը՝ 300 կտոր մասնագիտական գրականություն²:

Գրադարանում կազմակերպվում էին օգտակար շատ միջոցառումներ. ցերեկույթներ, երեկույթներ, հանդիպումներ անվանի մարդկանց հետ և այլն:

Բազմաթիվ փաստերից նշենք միայն մեկը. 1928 թվականին գրադարանի ղեկավարության հրավերով Ստեփանակերտ է գալիս անվանի գրող Հակոբ Հակոբյանը և հանդիպումներ ունենում մարզի աշխատավորության հետ: Նա եղավ նաև Ստեփանակերտի մետաքսագործարանում և հենց այդ վերնագրով էլ գրեց մի բանաստեղծություն, որտեղ մեծարում է գործարանի մարդկանց հերոսական աշխատանքը:

Գյուղի աշխատավորների գիտական-գաղափարական մարդակի բարձրացման և գեղարվեստական զարգացման

¹ Տճ՝ «Նորհրդային Ղարաբաղ», 1926, ապրիլի 23:

¹ Ս. Ա. Կարապետյան, Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում, Ստեփանակերտ, 1962, էջ 5—6:

² Նույն տեղը, էջ 8:

գործը բաւարար հիմքերի վրա դնելու համար պակաս կարևոր չէ կուլտուր-լուսավորական օջախների դերը: Այդ նպատակին մեծ ջանքեր են ներդնում կուսակցական և կոմերիտական վերադաս մարմինները և տեղական բջիջները: Դեռևս 1924 թվականին մարզի մի շարք գյուղերում (Ճարտար, Տումի, Բալլուզա և այլուր) սկսում են գործել խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ:

1924 թվականի նոյեմբերին տեղի ունեցած Ստեփանակերտի շրջկոմի 3-րդ պլենումում տրված գեկուցման մեջ շեշտվում է, որ «լույս են ընծայվում 29 պատի լրագիրներ, ակումբների թիվը հասնում է 22-ի, ընթերցարաններինը՝ 45-ի»¹: Հաջորդ տարում աճում են այդ թվերը. 38 ակումբ, 74 ընթերցարան, 50 պատի թերթ²:

Կարճ ժամանակում առանձին շրջկենտրոններում գործող ակումբները դարձել էին աշխատավորության մշակութային կյանքի իսկական օջախներ: 1924 թվականի սկզբներին Հաղբուժում գործող Շմավոն Դավթյանի անվան բանվորագյուղացիական ակումբն ուներ երեք սեկցիա՝ կուլտուր-կրթական, երգեցողության և դրամատիկական, ուր կանոնավոր ստանում էին կենտրոնական, հանրապետական և տեղական թերթեր ու ամսագրեր: Ակումբը ուներ «լենինյան անկյուն», որտեղ ժողովում են մեծ առաջնորդի կյանքին և գործունեությանը նվիրված գրականություն³:

1925 թվականի մայիսի 16-ի համարում «Խորհրդային Ղարաբաղը» հայտնում է, որ Բաքվի բնակիչ Հ. Տեր-Սարգսյանն իր հայրենի գյուղի՝ Խճաբերդի խրճիթ-ընթերցարանին է ուղարկել 109 գիրք և հայերեն «Կոմունիստ» թերթի մի տարվա համալիրը: Թերթի 1925 թվականի օգոստոսի 16-ի համարի հաղորդման համաձայն Օլյա Տեր-Հակոբյանը կոմերիտական բջիջի օգնությամբ ստեղծված Տումի գյուղի խրճիթ-ընթերցարանին է նվիրել 52 հատ ամսագիր:

Ռադիոն ևս մուտք է գործել Ղարաբաղ. ստեղծվել են ռադիոկետեր:

1 «Խորհրդային Ղարաբաղ», 1924, նոյեմբերի 23:

2 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1925, մայիսի 9:

3 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1924, դեկտեմբերի 7:

Կազմակերպվել է Ստեփանակերտի ռադիոխմբագրությունը: Առաջին հաղորդումները տրվել են մարզի ժողովրդական տնտեսության առօրյայից:

1928—1930 թվականներին կուլտեսությունների ստեղծումը երկրամասում նոր հնարավորություններ է ընձևում կուլտուր-լուսավորական աշխատանքներին լայն թափ հաղորդելու համար: Շրջանային կենտրոններում, գյուղերում կառուցվում են գրադարանների և ակումբների հարմարավետ շենքեր:

Մինչ այդ թատերական գործի դրվածքը մարզում այնքան էլ մխիթարական չէր: Զկային պետական թատրոն, պրոֆեսիոնալ դերասանների խումբ, գյուղերում՝ ուսուցիչներն էին դեպքից դեպք կատարում այդ պարտականությունը:

Ուրախալին այն էր, որ Բաքվի հայկական պետական թատրոնի կուլեկտիվը, մեծատաղանդ դերասան Հովհաննես Աբելյանի ղեկավարությամբ, ներկայացումներ էր տալիս մարզի կենտրոնում և առանձին խոշոր գյուղերում:

Մեկ անգամ չէ, որ ղարաբաղցիները Բաքվի դերասաններին բեմադրությամբ դիտել են «Պատվի համարը», «Պեպոն», «Նամուսը», «Զար ոգին», Սևիլը», «Օթելլոն» և դասական այլ պիեսներ:

Առավել ակտիվություն են հանդես բերում Բաքվի աչքի ընկած դերասաններ Ժասմենը, Լևոն Երամյանը, Դուրյան-Արմենյանը, Փառանձեմը, Աստղիկ Երամյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը և ուրիշներ: Նրանք գրեթե միշտ մասնակցում են Ստեփանակերտում տրվող ներկայացումներին¹:

Հայաստանի պետական շրջիկ թատրոնը նույնպես լինում էր Լեռնային Ղարաբաղում: «Խորհրդային Ղարաբաղը» 1930 թվականի հունիսի 28-ի համարում ինֆորմացիա է տպագրում Ամո Խարազյանի ղեկավարությամբ տրված 5 ներկայացումների («Գարնանային սեր», «Բեկում», «Շուշանաձորում», «Սիրուց հղորը» և «Յասում») մասին, շեշտելով, որ հանդիսականները ջերմությամբ են ընդունել դերասանական կուլեկտիվի ելույթները:

1 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1924, սեպտեմբերի 20:

Մարզում գործում էին նաև ինքնագործ թատերական խմբեր, որոնք բեմադրություններ էին կազմակերպում աշխատավորության համար՝ ներկայացնելով հատկապես այնպիսի պիեսներ, որոնց մեջ պատկերված են սովետական առօրյան, նոր մարդու բարոյական կերպարը:

Տեղական կազմակերպությունների միջամտությամբ աղբրբեջանական գյուղերում ևս տրվում են թատերական ներկայացումներ: «Նորհրդային Ղարաբաղի» 1926 թվականի հունվարի 31-ի համարում հաղորդվում է. «Նուստողկոմատը Ղարաղջաղ է ուղարկել Ստեփանակերտի թատրոնական սեկցիայի մի քանի աղբրբեջանցի ընկերների, որոնք գյուղում կազմակերպել են ներկայացումներ: Ներկայացումներին մասնակցում են մեծ թվով գյուղացիներ»:

Մարզի աշխատավորության կուլտուրական սպասարկմանը օգնում են նաև տեղական և դրսից հրավիրված երգիչներ, երաժիշտ կատարողներ, ասմունքողներ: Համերգները սովորաբար ունենում են մի քանի բաժիններ: Մեծ հաջողությամբ է անցնում 1925 թ. հուլիսի 18-ին մարզի կենտրոնում տեղի ունեցած վաստակավոր ուսուցիչ-երաժիշտ Ստեփան Դեմուրյանի համերգը՝ Ստեփանակերտի երաժշտասերների մասնակցությամբ¹:

Գրական-ստեղծագործական կյանքի աշխուժացման նպատակով 1923 թվականի մարտին Ստեփանակերտում կազմակերպվում է կենսային Ղարաբաղի ինքնավար Մարզի պոլիտգործների ասոցիացիա Արմո Խեչումյանի գլխավորությամբ: Վերջինս մարզի կենտրոնում գործող գյուղատնտեսական տեխնիկումի դիրեկտորն էր. նա եռանդուն մասնակցություն էր ունենում նաև հասարակական-քաղաքական և գրական կյանքին:

Ասոցիացիան հաճախակի քննարկում է անտիպ և տպագրված բանաստեղծություններ, փոքրիկ պոեմներ, ֆելիետոններ, առակներ, պատմվածքներ, օգնում է մարդային և տպագիր այլ օրգաններում տեղացի ստեղծագործողների գործերը հրատարակելուն:

Մեծ ակտիվություն է հանդես բերում մարզի ճանաչված

¹ Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1925, հուլիսի 26:

գրող, ասոցիացիայի անդամ, Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1917 թվականից բուլշևիկների կուսակցության անդամ Գրիգոր Ներսիսյանը: Նրա ստեղծագործություններում արտացոլված են մեծ Հոկտեմբերի հաղթանակով ստեղծված լուսավոր կյանքը, հայրենի երկրամասի առաջին հաջողությունները, նոր մարդու ներաշխարհը, նրա հոգեկան վերափոխությունները...

Պոետը գեղարվեստական խոսքին բնորոշ արտահայտչական միջոցներով մերկացնում է ժողովրդի թշնամիներին՝ դաշնակցականներին, մուսավաթականներին, որոնք իրենց անփառունակ տիրապետության շրջանում քիչ աղետներ չեն բերել հատկապես Անդրկովկասի բազմազգ աշխատավորությանը: Այդ մասնավորապես արտահայտվում է «Ամբաստանագիր» բանաստեղծության մեջ.

է՛յ, դատավորներ,

Դատեցեք սրանց... ևս դատախազն եմ
Զեր ահեղ դատի... դատեցեք սրանց...
Բերվել են ահա մուսավաթ, դաշնակ—
Հերոսները սև... դատեցեք սրանց—
Ու թող ձեր խոսքն անողոք լինի
Այս դահիճների ոճմակի համար...
Օ՛, թող ձեր խոսքը դարերի ձևերում
Անասան զնդան, անկործան մի մուրճ,
Մի կուսն լինի սրանց հուշերը,
Սրանց հետքերը հավիտյան ցրող...»:

Գրական ստեղծագործություններով հաճախ էին հանդես գալիս Գ. Հարությունյանը, Ռ. Գասպարյանը, Ա. Զաքարյանը, Հ. Ահարոնյանը, Արֆո Պետրոսյանը, Անդր. Բաբայանը և ուրիշներ:

Գրողների ասոցիացիան կազմակերպում էր գրական երեկույթներ նվիրված այս կամ այն գրողի հոբելյանին կամ առանձին ստեղծագործությունների արժեքավորմանը: Ուշագրավ էր, մասնավորապես, 1928 թվականի ապրիլի 15-ին անցկացված երեկույթը նվիրված Մ. Գորկու գրական ժառանգությանը:

Ասոցիացիայի նախաձեռնությամբ 1929 թվականի հուն-

¹ «Նորհրդային Ղարաբաղ», 1926, հուլիսի 3:

վարին Ստեփանակերտում լույս է տեսնում «Կայծ» գրական, գեղարվեստական, քննադատական և երգիծական ամսագրի անդրանիկ համարը: Սա կարևոր երևույթ էր ոչ միայն գրական կյանքում, այլև հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Այն բացվում է Հակոբ Հակոբյանի «Մետաքսագործարանում» բանաստեղծությամբ, ուր հիանալի կերպով ներկայացվում է հատկապես կանանց աշխատանքը, եռանդն ու ոգևորությունը սոցիալիստական արտադրության լիթիսարի առաջընթացի համար:

«Կայծի» անդրանիկ համարի ընթերցողները ջերմորեն են ընդունում Վարսենիկ Աղասյանի, Գրիգոր Ներսիսյանի, Անոն Բաղդասարյանի, Արֆո Պետրոսյանի, Սերո Մանուցյանի, Գրիգոր Հովհաննիսյանի և այլոց ստեղծագործությունները և գրականագիտական հոդվածները, որոնց թեման հայրենասիրությունն էր, ժողովրդասիրությունը, մարդասիրությունը, մարդկային բարեմասնությունների գովերգումը, սոցիալիստական աշխատանքի առօրյան:

«Կայծ» ամսագիրը երկար կյանք չի ունենում. լույս է տեսնում ընդամենը հինգ համար, բայց այն քիչ բան չի կատարում Ղարաբաղում գրական ուժերի համախմբման ու դարգացման գործում:

Կալ էին գործում նաև դպրոցներում ստեղծված գրական խմբակները: Այստեղ հաճախ էին երիտասարդ և փորձառու ստեղծագործողները հանդես գալիս ելույթներով:

Ավելի արդյունավետ էր «Խորհրդային Ղարաբաղին» կից գործող գրական խմբակի աշխատանքը, ուր սկսնակ գրողները ուսումնասիրում էին պոետական արվեստի հիմունքները, գրական ստեղծագործության լեզվի առանձնահատկությունները և այլն:

1920-ական թվականներին զարթոնք էր ապրում Սովետական Ղարաբաղի մշակույթը, բեղմնավոր էր դառնում կուլտուր-լուսավորական օջախների գործունեությունը, կարգավորվում էր դպրոցական գործը, իր հունի մեջ էր մտնում գրական առօրյան: Եվ ամենագլխավորը՝ նկատելիորեն աճում էր սովետական մարդու գիտական մակարդակը, ընդարձակվում էր նրա հետաքրքրությունների շրջանակը: Սա փաստորեն կուլտուրական հեղափոխության գլխավոր նպատակն էր:

1930-ական թվականները Սովետական Ղարաբաղում ևս նշանակալից էին սոցիալիզմի կառուցման սրաջին հաջողություններով. անհատական տնտեսությունները միավորվում էին կոլեկտիվ տնտեսությունների մեջ, Ստեփանակերտում, Շուշիում և շրջանային կենտրոններում ստեղծվում էին արդյունաբերական խոշոր օբյեկտներ:

Սոցիալիստական էկոնոմիկայի առաջընթացը նոր պահանջներ է ներկայացնում տեղական և վերադաս մարմիններին՝ ավելի լավ կազմակերպելու գործող կուլտուր-լուսավորական օջախների ու մշակութային օբյեկտների աշխատանքը, ստեղծելու նորը, ժամանակակիցը, առաջավորը:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթը շարունակում է լայնորեն լուսաբանել կուլտուր-կրթական և մշակութային կյանքը, դույց տալ, թե էկոնոմիկայի վերելքի հետ ինչ նոր բարեփոխություններ են կատարվում երկրամասում, աշխատանքային և ստեղծագործական ինչպիսի խանդավառություն է համակել լայն զանգվածներին:

Մարզի սոցիալ-տնտեսական կյանքը համակողմանի արտացոլելու համար 1932 թվականի ապրիլի մեկից «Խորհրդային Ղարաբաղը» դառնում է ամենօրյա, և շրջաններում էլ ստեղծվում են տպագիր օրգաններ: 1932 թվականի հուլիսից Մարտակերտում սկսում է լույս տեսնել «Սոցիալիզմի ուղիով» թերթը, նույն թվականի նոյեմբերի 7-ից Շուշիում՝ «Սոցիալիզմ մալրարդըսը» («Սոցիալիստական անասնապահություն»), 1935 թվականի հուլիսի մեկից Հաղրութում՝ «Կոլխոզնիկը», հոկտեմբերի 13-ից Մարտունիում՝ «Բոլշեխիկյան հաղթանակը»:

«Խորհրդային Ղարաբաղի» և չորս շրջանային թերթերի կողքին 1934 թվականի փետրվարի 10-ին հիմնադրվում է մարզի երիտասարդների օրգանը՝ «Երիտասարդ բոլշեխիկը»:

Լիթիսարի էին մարզային և շրջանային թերթերի խնդիրները տպագիր խոսքի ներգործուն ուժով լենինյան գաղափարները մասսաներին հասցնելու, աշխատավորներին օգնելու և սոցիալիստական մրցություն ծավալելու գործում:

Մամուլի էջերում հստակորեն պատկերվում էր աշխա-

տավոր մարզն իր ակնկալումներով, ներաշխարհով, բարոյական կերպարով: Բազմաժանր նյութերը, նպատակային էջերը, առանձին համարները, որոնք արտացոլում էին աշխատանքային կոլեկտիվների հերոսագործությունները, կարծես ամփոփ տարեգրություններն էին այն մեծ պաշարի, որ մղվում էր երկրամասի ծաղկման ու աճման համար:

Իր համեստ դերն էր կատարում նաև Մարտակերտի մեքենատրակտորային կայանի քաղբաժնի թերթը՝ «Կոլտնտեսային կայծը», որի առաջին համարը լույս տեսավ 1933 թվականի սեպտեմբերին:

Պատահականություն չէր բազմատպաքանակի անունը. նրա խմբագիր Հայրո Սարգսյանն իր հուշերում գրում է. «Դեռ մինչև թերթի լույս ընծայելը երկար մտածեցինք՝ ինչպես այն անվանել: Մի քանի տարբերակներ կային: Մտաբերեցինք լենինյան «Իսկրան», նրա բնաբանը՝ «Կայծից բոց կբռնկվի»: Մենք լավ գիտեինք, որ քաղբաժնի թերթը պետք է լայնորեն պրոպագանդի լենինյան գաղափարները, դրանք կոլտնտեսային լայն մասսաների գիտակցությանը հասցնելու աշխատանք, որ խանդավառվեն նրանց սրտերը, որ բռնկի կոլտնտեսային շարժման բոցը: Այդ մտքերն էլ հենց մեզ հուշեցին նոր թերթին տալու «Կոլտնտեսային կայծ» անունը»¹:

Պարբերական մամուլի աշխատանքն ավելի արգասաբեր դարձնելու համար Անդրկովկասում, այդ թվում և Լեռնային Ղարաբաղում, նոր թափ է հաղորդվում բանվորները կազմակերպական շարժմանը: Կուսակցության Անդրերկրային կոմիտեի 1931 թվականի ապրիլի 27-ի որոշման մեջ ասված է. «Անդրերկրային կոմիտեն անբավարար է գնահատում բանվորները կազմակերպության ղեկավարումը և նրանց հետ տարվող աշխատանքն Անդրկովկասում»²:

Ադրբեջանի կոմկուսի (բ) Կենտկոմը որոշում է հանրապետությունում անցկացնել երկտասնօրյակ՝ ստորին մամուլի և բանվորները կազմակերպության աշխատանքների վերակառուցման համար: Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեն 1931 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի

1 «Կոմունիստ» (Բաքու), օրաթերթ, 1973, հոկտեմբերի 20:

2 «Նորհրդային Ղարաբաղ», 1931, մայիսի 9:

15-ը՝ հայտարարում է բանվորական և գյուղական թղթակիցների երկտասնօրյակ:

Մարզային կուսակցական օրգանը իր հերթին որոշակի միջոցներ է ձեռնարկում ստորին մամուլի աշխատանքներն ու բանվորները կազմակերպական շարժումն ակտիվացնելու ուղղությամբ: Թերթի նախաձեռնությամբ շրջաններում հրավիրվում են թղթակիցների ժողովներ, որտեղ քննարկվում են լրագրողների հրատապ խնդիրները ներկա շրջանում: Հատկապես արդյունավետ է անցնում «Նորհրդային Ղարաբաղի» և Մարտակերտի շրջանային «Սոցիալիզմի ուղիով» թերթերի խմբագրությունների համատեղ խորհրդակցությունը մարզի ամենախոշոր, բազմաճյուղ շրջանում՝ Մարտակերտում²:

«Նորհրդային Ղարաբաղի» էջերում տպագրվում են մի շարք նյութեր՝ օգնություն բանվորական և գյուղական թղթակիցներին՝ ինչպես փաստեր հավաքել և դրանք օգտագործել նյութերի մեջ, տեքստը գրական մշակման ենթարկել և այլն:

Մարզային օրգանը փոխանակային էջեր և երկէջեր է կազմակերպում շրջանային թերթերի հետ՝ նպատակ ունենալով ցույց տալ մարզի առօրյան և ակտիվ թղթակիցների աշխատանքն այդ բնագավառում:

Ավելին, «Նորհրդային Ղարաբաղի» շրջիկ խմբագրությունը «Սոցիալիզմի հաղթանակ» (Գեորգավանում) սովետական և այլ խոշոր տնտեսություններում շեֆական աշխատանքներ է ծավալում օգնելու նաև ստորին մամուլին: Սահմանվում է թերթի փոխանցիկ դրոշ՝ գյուղական տնտեսության պլանները բոլոր ցուցանիշներով 1934 թվականին կատարելու համար:

Այս բոլորը, սակայն, դատարկ կրակոց կլինեն, եթե թերթերը և մյուս օրգանները չհետևեն տպագրված ելույթներին ներգործությանը: Ահա թե ինչու 1934 թվականի մայիսին Լեռնային Ղարաբաղում հայտարարվում է «Մամուլի հնգօրյակ»: Չորս ամսվա ընթացքում (նկատի ունենք ընթացիկ տարվա առաջին չորս ամիսները — Ս. Ա.) քննության ուղարկված 320 թղթակցությունից և նամակից «Նորհրդային

1 Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1931, մայիսի 13:

2 Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1933, հունվարի 31:

Ղարաբաղի»։ Խմբագրությունը ստացել էր 80-ի պատասխանը (25 տոկոս)¹։ Մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ անտարբեր վերաբերմունք էին ցուցաբերում թերթերի էջերում լույս տեսած այն նյութերի նկատմամբ, որոնք քննադատական խոսք էին ասում աշխատանքում հոմանացողների, անբարոյական և, ընդհանրապես, սովետական քաղաքացուն անվայել արարքներ թույլ տվողների հասցեին։

Մարզում անգրագիտության վերացման համար պայքարը շարունակվում էր։ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1930 թվականի օգոստոսի 6-ի համարի ամբողջ առաջին էջի վրա խոշոր տառերով հայտարարվում է՝ «Լեոնային Ղարաբաղում 1930—1931 թթ. պիտի վերացնենք 10 հազար հոգու անգրագիտությունը»։ Այստեղ նշվում է, որ բոլոր դպրոցահասակ երեխաները (8—12 տարեկան) պետք է ընդգրկվեն մասսայական դպրոցներում, չբավորների երեխաների համար կազմակերպվի տաք նախաձառ, ժամանակին ավարտվի դպրոցական շենքերի շինարարությունը։

Անհրաժեշտ էր նաև ընդարձակել լիկկայանների ցանցը։ արդեն 1929—1930 ուստարվա լիկկայաններում սովորելու համար նախատեսված 8000-ի փոխարեն ընդգրկված էին 13.000 անգրագետներ։

Կուսակցության աշխատողների օրվա նշանաբանն էին դարձել «Բոլորս դեպի գյուղի անկուլտուրականության մնացորդների վերացումը», «Անշեղ կերպով կիրառենք կուսակցության XVI համագումարի որոշումները»։

ՀամԿ(բ)Կ XVI համագումարի դիրեկտիվների հիման վրա կուսակցության Կենտկոմը և սովետական կառավարությունը 1930 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին որոշումներ ընդունեցին 1930—1931 թվականներին Սովետական Միությունում ամենուրեք 8—10 տարեկան երեխաների համար տարրական ընդհանուր, ձրի, պարտադիր ուսուցում մտցնելու մասին։ Որոշվեց ընդհանուր պարտադիր ուսուցում մտցնել նաև անգրագետ կամ տարրական դպրոցի դասընթացը լրիվ չանցած 11—15 տարեկան դեռահասաների համար, կազմակերպելով հատուկ երկամյա, միամյա դպրոց-

դասընթացներ, դպրոցներին կից խմբեր։ Միաժամանակ սահմանվեց քաղաքներում, արդյունաբերական ավաններում դպրոցի առաջին աստիճանն ավարտած բոլոր երեխաներին 1930—1931 թվականներին ընդգրկել յոթնամյա դպրոցներում, աստիճանաբար երկրում անցնել յոթնամյա ընդհանուր պարտադիր ուսուցման։

Ադրբեջանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1930 թվականի օգոստոսի 29-ի «Ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու մասին» որոշման հիման վրա Լեոնային Ղարաբաղի մարզային գործադիր կոմիտեն սեպտեմբերին պաշտոնապես հաղորդեց և սկսեց մարզում մտցնել ընդհանուր տարրական պարտադիր ուսուցում, իսկ Ստեփանակերտում՝ յոթնամյա ընդհանուր կրթություն։

Բացվեցին նաև երկամյա և միամյա հատուկ դպրոց-դասընթացներ և դպրոցներին կից խմբեր՝ 11—15 տարեկան անգրագետ և կիսագրագետ երեխաների համար։

Մարզի շրջգործկոմներին և գյուղխորհուրդներին կից ստեղծվում են «Պարտադիր կրթության աջակցող հանձնաժողովներ՝ մասնակցությամբ արհմիութենական կազմակերպությունների, կուսակցական և կոմերիտական բջիջների, կուլտուրեստությունների, կոոպերատիվ կազմակերպությունների, «Անգրագիտության վերացման ընկերության» բջիջների և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, նույնպես և տեղական ուսուցչության ակտիվի»¹։

Անգրագիտության արագ վերացման համար մարզում ծավալվել էր շեֆական աշխատանք։ Կարմիր գյուղի նկատմամբ Ստեփանակերտի կուսդպրոցի շեֆությունը օրինակ էր հանդիսանում մյուսների համար։

Մարզային թերթի 1930 թվականի դեկտեմբերի 6-ի տրվյալներով Լեոնային Ղարաբաղի տերիտորիայում ապրող 8—10 տարեկան երեխաների 98 տոկոսը և 11—12 տարեկան երեխաների 95 տոկոսը արդեն ընդգրկվել էր համապատասխան դպրոցներում։

Մեկ տարվա ընթացքում բացված 32 դպրոցներում ընդգրկվեցին 3827 աշակերտներ։ Լավ էին գործում նաև ազգա-

¹ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1934, մայիսի 11։

¹ «Խորհրդային Ղարաբաղ», 1930, նոյեմբերի 5։

յին փոքրամասնությունների համար բացված 10 դպրոցները: Զբաղոր աշակերտներին ձրիաբար բաց էին թողնվել 2666 գիրք, 5229 տետր և 5000 զանազան պիտույքներ¹:

Թեև տարեցտարի պակասում էր մարզի անգրագետների թիվը, այնուամենայնիվ, 1932 թվականին դեռ 20 հազարանոց անգրագետների և կիսագրագետների մի բանակ կար կենսային Ղարաբաղում:

Ադրբեջանի Կոմկուսի (բ) Կ կենսային Ղարաբաղի մարզկոմը, քննարկելով այս հարցը, միջոցներ է ձևոնարկում 1932 թվականից մարզը դարձնելու համատարած գրագիտության շրջան:

Գյուրոցական նախկին ծրագրերը փոխարինվում են նորերով, աստիճանաբար որակավորվում է ուսուցչական կազմը, ավելանում է թերի միջնակարգ և լրիվ միջնակարգ դպրոցների թիվը, դպրոցները համալրվում են ուսումնական պարագաներով, կաբինետներով, լաբորատորիաներով:

1929—1930 ուսումնական տարվա 145 դպրոցի և 19563 աշակերտների դիմաց արդեն 1934—1935 ուստարում կային 186 դպրոց 27264 աշակերտներով, 1938—1939 ուստարում՝ 193 դպրոց՝ 38000 աշակերտներով:

Ահնառու էր ժողովրդական կրթության վրա ծախսվող գումարների աճը: 1933—1934 ուստարվա 164 հազար ուրբլու դիմաց 1938—1939 ուստարում դպրոցների զարգացման համար նախատեսված էր 17 միլիոն 600 հազար ուրբլի: Սա մեծ նվաճում էր ո՛չ միայն լուսավորության ճակատում: Սա վկայում էր, որ ՀամԿ(բ) Կենտկոմը և սովետական կառավարությունը շարունակում են անդուլ հոգատարություն ցուցաբերել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության, մեր երկրի համար բազմակողմանի զարգացած քաղաքացիներ պատրաստելու ուղղությամբ:

Մարզում արդեն կային օրինակելի մի բանի դպրոցներ, որոնց փորձը, աշխատանքների կազմակերպման մեթոդներն ու ձևերը մասսայականացվում էին մյուս մանկավարժական կոլեկտիվներում: Առանձնապես աչքի էին ընկնում Ստեփանակերտի լրիվ միջնակարգ և թերի միջնակարգ դպրոցները:

¹ Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1930, դեկտեմբերի 6:

Նրանք հպարտանալու շատ բան ունեին. ուսուցիչներ Հրանտ Շահրամանյանը, Պավել Անդրյանը, Հրաչյա Մկրտչյանը, Կարո Դավթյանը, Ասյա Աղավելյանը, Վերգինե Կորգանյանը, Սուրեն և Սոֆյա Հայրապետյանները, Եսթեր Մովսիսյանը և ուրիշներ արդեն լայն ճանաչում ունեին մարզում և նրա սահմաններից դուրս:

Ուսուցումը պատշաճ մակարդակի վրա էր ձգտարի, Մարտունու, Մարտակերտի շրջկենտրոնների դպրոցներում: Ռուսացական կոլեկտիվները մանկավարժական աշխատանքի հմտություն էին հանդես բերում և ձգտում էին ապահովել սովորողների բարձր առաջադիմությունը՝ պատվաստելով նրանց մեջ սեր դեպի հայրենի գրականությունը, մաթեմատիկան, ֆիզիկան... Այդ նպատակով մարզային մասշտաբով և նրա առանձին շրջաններում անցկացվում էին օլիմպիադաներ: Կազմակերպված է անցնում Ստեփանակերտում տեղի ունեցած մաթեմատիկայի օլիմպիադան, որին ակտիվորեն մասնակցում են քաղաքային և գյուղական դպրոցների շուրջ 120 աշակերտներ:

Կենսային Ղարաբաղում զարգացման նոր աստիճանի վրա էր դրվում մասնագետ կադրերի պատրաստումը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար: 1930-ական թվականներին մարզում կար վեց տեխնիկում: Արդյունավետ աշխատանք էին կատարում Ստեփանակերտի գյուղատնտեսական, բժշկական, Շուշիի մանկավարժական, Հազրութի ագրոնոմիական ու մանկավարժական տեխնիկումներն ու ուսումնարանները:

Հատկապես մեծ համարում էր ձեռք բերել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, որը շատ կարճ ժամանակում ունեցել է լուրջ առաջխաղացում: Եթե 1923 թվականին՝ ուսումնական առաջին տարում, այստեղ սովորում էին 46 ուսանողներ և դասավանդում էին միայն 6 հոգի, ապա 1930 թվականին տեխնիկումն արդեն ուներ երկու բաժին՝ զոոտեխնիկական և անասնաբուժական, հարչուրից ավելի սովորողներով:

Գյուղատնտեսական տեխնիկումի շատ սաներ սիրով հմտանում էին մասնագիտության մեջ: Նրանցից շատերը հետագայում դարձան անվանի գիտնականներ: Նշենք Հայ-

կական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Առաքելյանին, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Գուրգեն Քամալյանին, Գուրգեն Շաքարյանին, Միքայել Առաքելյանին, Երեմ Սաֆարյանին, Վերդի Հակոբյանին, դոցենտ Գրիգոր Հասարթյանին և ուրիշներին:

«Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին մարզի տնտեսություններում արդեն աշխատում էին 147 ագրոտեխնիկներ, 125 անասնաբուժականներ, 244 զոտեխնիկներ: Իսկ իր գործունեության 50 տարիների ընթացքում սովխոզտեխնիկումը մեր գյուղատնտեսությունը տվել է 3232 բարձրորակ մասնագետ:

Այժմ սովխոզտեխնիկումում ամեն տարի տարբեր մասնագիտություններ են ստանում ավելի քան 570 ուսանողներ», — սովխոզտեխնիկումի 50-ամյակի առթիվ գրած հոդվածում հայտնում է մարզային թերթը իր 1973 թվականի դեկտեմբերի 5-ի համարում:

Մարզի կոլտնտեսությունների և սովխոզների շատ ղեկավարներ տեխնիկումի սաներ են, որոնք իրենց զբաղված են իբրև արտադրության հմուտ կազմակերպիչներ:

1930-ական թվականներին լուրջ ուշադրություն էր դարձվում նաև ղեկավար մարմիններում աշխատողների գիտական-բաղադրական մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով 1934 թվականի հոկտեմբերի 15-ին Ստեփանակերտում հիմնադրվում են կոմունիստական համալսարան, կուսակցական դպրոց և կոմունիստական դպրոցի նախապատրաստական խմբակ: Կոմհամալսարանը զլխավորում էր հին բոլշևիկ Մինեյ Հովհաննիսյանը, իսկ կուսդպրոցը՝ 1912 թվականից ՍՄԿԿ անդամ Սուրեն Հախումյանը:

Տնտեսության զարգացման հետ միասին Լևոնային Ղարաբաղը ցանցապատվում է կուլտուր-լուսաշրջական օջախներով: Մ. Գորկու անվան գրադարանը շարունակում է հարստանալ գրքային ֆոնդով: Գրադարանը երկրի տարբեր վայրերից ստանում է տասնյակ անուն պարբերականներ նա օգնում է տեղական կազմակերպություններին՝ մարզում վերացնելու անգրագիտությունը, գիրքը հասցնելու լայն մասսայներին:

Գրադարանին կից գործում էին անգրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակներ¹:

Առանձին անվանի մարզկանց հետ հանդիպումները գրադարանի ընթերցողներին մղում էին աշխատանքային նոր խանդավառության: Այստեղ 1930 թվականին աշխատավորության հետ երկրորդ հանդիպումն ունեցավ պրոլետարական մեծ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը:

Մարզի բոլոր խոշոր գյուղերում հիմնվել էին գրադարաններ, ակումբներ: Ճարտարի, Սոսի, Առաջածորի, Թալիշի, Խնձրիստանի, Բաղարայի, Գաշբուլաղի կուլտուր-լուսավորական օջախները գեղարվեստական ինքնագործունեության ուժերով պարբերաբար կազմակերպում էին երեկույթներ և ցերեկույթներ, դրամատիկական բեմականացումներով և համերգային ելույթներով բարերար ազդեցություն էին գործում աշխատավորների գեղագիտական ճաշակի բարձրացման վրա:

Սովետական Ղարաբաղի մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր 1932 թվականի օգոստոսի 11-ին Ստեփանակերտում հիմնադրված Մ. Գորկու անվան պետական թատրոնը: Մեծ են մասնավորապես Կարո Ալվարյանի ջանքերը նորաստեղծ թատրոնի կոլեկտիվի ստեղծագործական եռանդն ու ավյունը ճիշտ հունով առաջ տանելու գործում:

Թատրոնի անդրանիկ դերասանները՝ Աննա Մելիքը, Արշակ Արշակունին, Լևոն Սարգսյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Թամարա Մելքումյանը, Արմեն Միրզոյանը, Նինա Հովսեփյանը և ուրիշներ իրենց խաղով, թատերական բարձր արվեստով գեղագիտական հաճույք էին պատճառում հասարակայնությանը:

«Պետթատրոնի երկրորդ սեզոնի բացման առթիվ» վերնագրով հոդվածում մարզային թերթը նշում է, որ իր գոյության առաջին տարում բեմադրվել է ութ պիես՝ «Օղակում», «Արյունոտ օրեր», «Սևիլ», «Դատավճիռ», «Սպանված աղավին», «Բաղդասար աղբար»² և այլն:

1 Տե՛ս Ս. Ա. Կարապետյան, Լևոնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում. Ստեփանակերտ, 1962 թ., էջ 7:

2 Տե՛ս «Նորհրդային Ղարաբաղ», 1933, հունիսի 22:

Պետթատրոնը ծավալուն աշխատանք էր կատարում նաև գյուղի աշխատավորների շրջանում. 15 ներկայացում էր տրվել Մարտակերտի շրջանի 11 գյուղերում, 11 ներկայացում՝ Ստեփանակերտի շրջանի գյուղերում, մի քանիսն էլ՝ վիճակորականների համար¹:

Տեղական և հանրապետական թերթերը գրվատական խոսքով քաջալերում էին Ստեփանակերտի պետական թատրոնի առաջին հաջողությունները, ցույց տալիս գերակատարների նվաճումը, բեմական առաջընթացը, որ նկատվում էր կարճ ժամանակում:

Մ. Գորկու անվան թատրոնի ստեղծագործական վերելքին նպաստում են Անդրկովկասի մեծ ճանաչում գտած թատրոնները, մասնավորապես Բաքվի հայկական պետական թատրոնը: Հաճախ են Բաքվի հայ արվեստագետները հյուրախաղերով հանդես գալիս մարզային կենտրոնում, կոնկրետ ցուցումներ տալիս տեղի դերասաններին, օգնում նրանց՝ ճիշտ մեկնաբանելու այս կամ այն դերը: Անժխտելի է ժողովրդական արտիստներ ժասմենի, Ալեքսանդր Հովհաննիսյանի, Լևոն Նրեմյանի և այլոց աջակցությունը Ստեփանակերտի պետական թատրոնին: Գնալով ավելի լիարժեք է դառնում նաև թատրոնի խաղացանկը: Մուտք են գործում «Օթելլոն», «Բոլոր», «Յաշարը», «Ուրիշի երեխան», «Նամուսը», «Պատվի համարը», «Գիբորը» և այլ գործեր:

1930-ական թվականներին Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը Ազգային պետական ՍՍՀ-ում ճանաչում է գտնում իր բեմարվեստով:

Տարիների ընթացքում թատրոնը համալրվում է նոր ուժերով. Ստեփանակերտ են հրավիրվում անվանի արտիստ Իսահակ Ալիխանյանը, ռեժիսոր Գուրգեն Թավրիզյանը և ուրիշ արվեստագետներ:

Թատրոնում հաջողությամբ է ներկայացվում Միրզա Իբրահիմովի «Հայաթ» պիեսը, որտեղ դրամատիկական անցումներով, զեղարվեստական արտահայտման միջոցներով արտացոլվում է սովետական առաջին տարիներին գյուղում մղվող դասակարգային պայքարը: Եվ եթե Քամարա Մելքումյանը ռեալիստորեն է ներկայացնում գյուղի առաջադեմ

կնոջ, սովետական կարգերի ամրապնդման համար պայքարի ելած Հայաթի դերը, ապա Լևոն Սարգսյանը կարողանում է հանձին Սուլեյմանի բնութագրել դասակարգային թշնամուն, որն իր խարդախ ծրագրերն իրագործելու համար ոչ մի բանի առաջ կանգ չի առնում:

Թատրոնի աստիճանական առաջընթացը նկատելի էր յուրաքանչյուր բեմադրության ժամանակ: Այդ առավելապես հատկանշվում է «Հատակում», «Բեկում», «Օթելլո» և այլ բեմադրություններում: Ա. Արշակունու, Կ. Սարգսյանի, Հ. Հովհաննիսյանի կողքին հանդես են գալիս Բ. Բժշկյանը, Ա. Ղազումյանը և ուրիշներ՝ ցուցադրելով իրենց դերասանական կարողությունները:

«Խորհրդային Ղարաբաղը», «Երիտասարդ բոլշևիկը» հաճախ էին նպատակային էջեր նվիրում առանձին բեմադրությունների, ցույց տալով մի կողմից պիեսների գաղափարական հագեցվածությունը, մյուս կողմից՝ դերասանների խաղը:

«Խորհրդային Ղարաբաղը» 1936 թվականի հունիսի 4-ին մի ամբողջ էջ էր նվիրել «Պլատոն Կրեչետի» բեմադրությանը: Բուբլիկի դերում հաջողությամբ է հանդես գալիս թատրոնի ճանաչված դերասան Արշակ Արշակունին, Լիդյաի դերում՝ Արուս Ղազումյանը, Պլատոնի դերում՝ Լևոն Սարգսյանը, Բերեստի դերում՝ Գուրգեն Գրիգորյանը, Արկադիի դերում՝ Աբմեն Միրզոյանը:

Մարզային թերթերը հողվածներ են տպագրում հյուրախաղերի եկած թատրոնների ներկայացումների մասին: 1935 թվականի օգոստոս ամսին Ստեփանակերտում մի շարք բեմադրություններ է ունենում Ամո Խարազյանի անվան թատրոնը: «Յեցերի», «Բարոյականության փրկիչները» պիեսի և այլ ներկայացումների մասին տպագրած թատերախոսականներում «Խորհրդային Ղարաբաղը» բարձր է գնահատում հայկական դրամատիկական թատրոնի դերակատարումները:

Հայկական ՍՍՀ և այլ հանրապետություններից առանձին անվանի դերասաններ մասնակցում էին Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական թատրոնի կուլեկտիվի խաղերին: 1936 թվականի օգոստոսին Ջ. Ջաբարլիի «Սեիլ» պիեսի բեմադրության մեջ զլխավոր դերը ստանձնում է Արուս Ոսկանյանը: Հանրապետական և տեղա-

¹ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1933, հունիսի 22:

կան թերթերը դրվատանքի ջերմ խոսքեր են ուղղում մեծ արվեստագետին:

Ուշագրավ երևույթ էր նաև Ադրբեջանի կոլտնտեսային թատրոնի հյուրախաղերը մարզի գյուղերում: Ջ. Ջաբաբլիի «Յաշար» պիեսը ներկայացրին Ննգի, Խաչմաշ, Կարմիր գյուղ և այլ բնակավայրերում:

1930-ական թվականներին Սովետական Ղարաբաղում աշխուժացել էր նաև գրական կյանքը: «Խորհրդային Ղարաբաղը», «Ծրխտասարդ բուշակիլը» և շրջանային թերթերը շարունակում էին տպագրել մարզի ստեղծագործողների շահածո և արձակ գործերը, տարբեր առիթներով դրանք արժեքավորելով գրականագիտական խոսքով, գրախոսություններով:

1934 թվականի սկզբներին հրապարակ է գալիս «Գրոհ» գրական-գեղարվեստական, հասարակական-բաղաբական ամսագիրը, որը ղեկավարաբար մեկ համարի կյանք է ունենում:

Բաբլում հիմնադրված «Խորհրդային գրողը» և հայկական ուրիշ պարբերականներ լայնորեն իրենց էջերն են բացում մարզի ստեղծագործողների առջև, հրապարակ հանելով աչնպիսի գործեր, որոնք համահնչյուն են ժամանակի ոգուն, արտացոլում են մեր իրականության այսօրն ու ապագան:

Արշավիր Գրիգորյանը, Լևոն Բաղդասարյանը, Հակոբ Աթալյանը, Միրայել Հարությունյանը, Մկրտիչ Բերբերյանը (Մ. Բերբեր), Սամվել Քնարունին, Իսրայել Պետրոսյանը (Իսպետը), Արտու Հովենցը, Վերդի Խաչատրյանը, Սարգիս Սվարզը, Արմիկ Հովսեփյանը (Հով. Արմիկը), Իսակ Իշխանյանը և ուրիշներ շարունակում են մամուլի էջերում հանդես գալ գրական տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններով:

«Խորհրդային Ղարաբաղի» 1935 թվականի դեկտեմբերի 27-ի համարում տպագրված Գր. Ներսիսյանի «Ապրելն ավելի ուրախ է դարձել» ծավալուն բանաստեղծությունը, որը նվիրված է Ադրբեջանի սովետականացման 15-ամյակին, գեղեցիկ պատկերներով է նկարագրում սովետական երկրի խինդն ու աշխատանքը, մարդկանց երջանիկ կյանքն ու ձրգտումները:

Արշավիր Գրիգորյանի «Նամակ Իդրտովին» և այլ բա-

նաստեղծություններում գովերգվում են սովետական մարդկանց շրջանում ծայր առած աշխատանքային խանդավառությունը, նրանց հարուստ ներաշխարհը: Մկրտիչ Բերբերյանի «Լուսնի տակ տողեր» ստեղծագործությունը, որ նվիրված էր հարվածային կոլտնտեսուհիներին, լավ է պատկերում կանանց ուժն ու եռանդը կոլեկտիվ անտեսութան դաշտերում:

Լևոն Բաղդասարյանի ստեղծագործությունների («Բանվորուհու երգերից», «Մափահարություն» և այլն) հիմնական թեման բանվորական աշխույժ հոուզենն է, սոցիալիստական գիտակցությունը:

Սամվել Քնարունու «Մեր արտերում», Գանիել Ավագյանի «Բրիգադիրը», Իսպետի «Հունձը», Մայրը», Գ. Հրատի «Կարմիր սալաշարքը», Մուշեղ Բալասանյանի «Առաջին Իդրտովեցը», Արտու Հովենցի «Երգ ցնծություն», «Նոր քառյակներ», Գրիգոր Մովսիսյանի «Հասուն արտերի միջով» և այլ հեղինակների մի շարք ստեղծագործություններ լավ են պատկերում սովետական մարդու ակնկալումները, նրա մտահղացումներն ու ցանկությունները:

Ադրբեջանի գրողների միության Լևոնյան Ղարաբաղի մասնաճյուղը երբեմն քննարկում է տեղական հեղինակների ստեղծագործությունները, աջակցում նրանց ինքնազարգացմանը, երբեմն էլ ունկնդիրների ուշադրությանը ներկայացնում առավել աչքի ընկած գործերը:

Տարբեր առիթներով մասնաճյուղը գրական երկերն է անցկացնում պատմական կարևորագույն իրադարձությունների և մեծանուն գրողների հոբելյանների պատվին: 1934 թվականի ապրիլի 3-ին մարզային թերթը հազորդում է, որ գրողների միության Ղարաբաղի կազմակերպությունը ապրիլի 4-ին կազմակերպում է գրական երեկո՝ «XVII համագումարը և գեղարվեստական խնդիրները» թեմայով:

Լևոնյան Ղարաբաղում միշտ էլ ջերմ մթնոլորտում են անցնում եղբայրական հանրապետություններից ժամանած գրողները, արվեստագետների հանդիպումները տեղի աշխատավորության և ստեղծագործողների հետ: Այդ կարգի հանդիպումները երկու նպատակ ունեն. մի կողմից մասսայականացնել առաջատար գրողների երկերը, ծանոթացնել

դրանց հեղինակների կյանքի և գրական գործունեության առավել հետաքրքիր էջերին, մյուս կողմից՝ օգնել սկսնակ և երիտասարդ գրողներին՝ կատարելագործելու գրելու արվեստը: Այդ նպատակն էր հետապնդում նման երեկոններից մեկը, որ տեղի ունեցավ 1935 թվականի հուլիսի 17-ին, Ստեփանակերտի միջմիութենական ակումբում: Երեկոյին մասնակցում էին հայ անվանի գրողներ, գրականագետներ: Ողջույնի խոսքով հանդես է եկել Ստեփան Զորյանը, կարդալով իր «Զրհորի մոտ» փոքրիկ պատմվածքը, ապա նախիք Զորյանը արտասանել է իր «Սաբո Միկինյանը» և «Երկու հանձարեզ գլուխը», իսկ Գեղամ Սարյանը՝ «Կոմունարները» և «Գլուխարան»:

Երեկոյին մասնակցել է նաև անվանի գրականագետ Խորեն Սարգսյանը՝ բարի մաղթանք ուղղելով հայրենակիցներին:

1936 թվականի դեկտեմբերին մեծ պաթոսով է անցնում Ադրբեջանի ականավոր բանաստեղծ Մ. Ա. Սաբիրի մահվան 25-րդ տարեդարձին նվիրված երեկոն Ստեփանակերտում և Շուշիում: Մարգարյին թերթը զույգ էջերի վրա, հոբելյանական հոդվածից բացի, տպագրում է հեղինակի «Ինտերնացիոնալ», «Աքինչի», «Ինչիդ էին պետք, աստված...», «էլ ամի», «Փողը» և այլ բանաստեղծություններ Աշոտ Գրաշու, Սամվել Գրիգորյանի և Վեսպերի թարգմանությունները:

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Մեծ Հայրենականի տարիներին ամեն ինչ վերակառուցվեց սրտերազմի պահանջներին համապատասխան, և կյանքի զարկերակը շարունակում էր ուժգին բարխել. գործում էին դպրոցները, կուլտուր-լուսավորական օջախները, գիտահետազոտական հիմնարկները, լույս էր տեսնում մարգարյին թերթը...

Հաջողությամբ էր իրականացվում ընդհանուր պարտադիր յոթնամյա ուսուցումը մարզի դպրոցներում: Մի կողմից՝ ընդարձակվում էր դպրոցական ցանցը, մյուս կողմից՝ բարձ

1 ՏԼՆ «Նորհրդային Ղարաբաղ», 1935, հուլիսի 20:

2 ՏԼՆ «Նորհրդային Ղարաբաղ», 1936, դեկտեմբերի 20:

րանում էր ուսուցչական կազմի պատասխանատվությունը մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության գործում:

Դպրոցական գործի զարգացման արգասիք էին ընդհանուր առաջադիմության բարձրացումը, գերադանցիկների, ոսկե և արծաթե մեդալներով ավարտողների թվի աճը: Հատկապես աչքի էին ընկնում Ստեփանակերտի, Մարտակերտի շրջկենտրոնի, Ճարտարի, Ղզղալայի, Դաշբուլաղի, Նորագյուղի, Շուշիքենդի և այլ միջնակարգ դպրոցների կուլեկտիվները:

Մարզի առանձին դպրոցների համար նոր, հարմարավետ շենքերի կառուցումը այն բանի վկայությունն էր, որ կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը նույնիսկ պատերազմի դաժան օրերին չէին թուլացնում հողատարությունը դպրոցի նկատմամբ, պայմաններ էին ստեղծում ժողովրդական կրթության զարգացման համար:

ՄՍՀՄ Ժողովրդական «Դպրոցում ուսման որակը բարելավելու միջոցառումների մասին» 1944 թվականի հունիսի 21-ի որոշումը նոր էտապ էր նշանավորում սովետական դպրոցի զարգացման համար: Միայն 1944—1945 ուստարում Լեռնային Ղարաբաղի յոթնամյա դպրոցների թիվը հասավ 106-ի, միջնակարգ դպրոցներինը՝ 40-ի:

Ուսուցման և դաստիարակչական գործի շեշտակի բարելավմանը խթանեց մարզի գերազանցիկ ուսուցիչների հավաքի կոչը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի գյուղական մտավորականությանը: Սա կարևոր միջոցառում էր կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության որոշումները կենսագործելու, դպրոցում ուսման որակը բարձրացնելու, գիտակցական կարգապահությունն ուժեղացնելու գործում:

Կուսակցության մարգարյին և շրջանային կոմիտեները անդրադառնում են ուսուցիչների կոչին, ողջունում նման նախաձեռնությունը և պարտավորեցնում բոլոր քաղաքային և գյուղական դպրոցների ղեկավարներին համապատասխան միջոցներ ձեռնարկելու այն լիովին կենսագործելու համար:

Դպրոցների, ուսումնարանների և տեխնիկումների աշխատանքների վերակառուցման հետ միասին պայքար էր տար-

վում նաև անգրագիտության խաղաղ վերացման համար:

«Անգրագիտության և կիսագրագիտության վերացման միջոցառումների մասին» Ադրբեջանի կ(բ)Կ Կենտկոմի շոր-րորդ պլենումի որոշման մեջ նշված է. «Լիկվիդացիայի ենթարկել վնասակար թերագնահատումը և անպատասխանատվությունն անգրագետների և կիսագրագետների ուսուցման գործում, այդ աշխատանքը համարելով հանրապետության ժողովրդական կրթության օրգանների, կուսակցական, սովետական, արհմիութենական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը»¹:

Ինչ խոսք, սույն որոշումը կատարելու համար մի շարք միջոցներ էին ձեռնարկվել նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Այնուամենայնիվ, կային գյուղական վայրեր, որտեղ պատշաճ կերպով ուշադրություն չէր դարձվում այդ կարևոր խնդրին: Նկատի ունենք հատկապես Ասկերանի շրջանի Փրջամալ և Արանդամին գյուղերը:

Լեռնային Ղարաբաղի գյուղերի համար բարձրորակ կադրեր պատրաստելու ուղղությամբ որոշակի աշխատանք էր կատարում Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտը, որը հիմնադրվել էր 1939 թվականին Շուշիում և իր գործունեությունը շարունակեց մինչև 1953 թվականը: Ուսուցումը տարվում էր ստացիոնար և հեռակա բաժիններով: Ինստիտուտն ուներ հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, ֆիզիկամաթեմատիկական, պատմության, քիմիական և կենսաբանական բաժիններ: Դասախոսական աշխատանք էին կատարում մարզի ճանաչված ուսուցիչներ Արամ Մարտիրոսյանը, Լեոն Բաղդասարյանը, Սարգիս Աբրահամյանը, Կարո Գավթյանը, Սուրեն Հայրապետյանը, Տատյանա Ալեքսանդրյանը, Վարդան Ստեփանյանը և ուրիշներ:

Ղարաբաղի մշակութային կյանքի աշխուժացումը և աշխատավորների գեղարվեստական սպասարկումը ապահովելու գործում մեծ է կուլտուր-լուսավորական օջախների դերը: Պատերազմական տարիներին անգամ չէին դադարում ակումբների և գրադարանների նոր, հարմարավետ շենքեր կառուցումը:

¹ «Սովետական Ղարաբաղ», 1941, ապրիլի 25:

Տասնյակ կանոնավոր ակումբների, գրադարանների կողմից էին կատարվում կուլտուրայի տներ, որոնք, իրոք, դառնում են կուլտուր-լուսավորական աշխատանքներ ծավալելու օջախներ: Ինքնագործ խմբակների կազմակերպած գեղարվեստական երեկոները, ասմունքի ժամերը, նոր լույս տեսած գրքերի քննարկումները, առանձին պիեսների բեմադրությունները անցնում են հաջողությամբ:

Կուլտնտեսականների կուլտուրական հանգիստը կազմակերպված էր անցնում Ճարտարի, Գիշիի, Մյուրիշենի (Մարտունու շրջան), Խնձրիստանի, Նախիջևանիկի, Խանաբաղի (Ասկերանի շրջան), Մաղավուզի, Թալիշի, Ներքին Հոռաթալի (Մարտակերտի շրջան) և այլ գյուղերի կուլտուրայի տներում, որոնք կառուցվել են կուլտնտեսությունների միջոցներով:

1940-ական թվականներին ոչ միայն Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում, այլև մարզի առանձին գյուղերում գործում էին կինոթատրոններ, շրջիկ և ստացիոնար կինոսարքեր:

Ռադիոն նույնպես մեծ տեղ էր զբաղում դարաբաղցու կենցաղում. չկար մի տուն, որտեղ չլիներ ռադիո կամ ռադիոընդունիչ: 1928 թվականից սկսած ռադիոֆիկացումը մարզի երկու քաղաքներում և գյուղական շրջաններում շարունակվում էր նոր թափով: Եթե Ստեփանակերտի ռադիոհանգույցը մինչև մեծ Հայրենականի սկիզբն ուներ ընդամենը 20 ռադիոկետ, ապա 1940-ական թվականների վերջերին կար 30 ռադիոհանգույց՝ 10—12 հազար ռադիոկետներով:

1940-ական թվականներին մարզի կյանքը նշանավորվում է նաև գիտահետազոտական հիմնարկների ստեղծմամբ: 1945 թվականին Ստեփանակերտում հիմնադրվում է Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Լեռնային Ղարաբաղի բազան, որը գիտահետազոտական աշխատանք է ծավալում հատկապես գյուղատնտեսության գծով: Նրա առաջին զիբեկտորը գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Սեդրակ Քոչարյանն էր, որը մեծ գործ է կատարել մարզում այդգործությունն ու անասնապահությունը դարգացնելու ուղղությամբ:

Հետագայում Ղարաբաղի բազան վերակազմվում է Ազրբեջանի անասնաբուծության և անասնաբուծության գիտահետազոտական ինստիտուտի Ստեփանակերտի փորձակայանի:

Կարճ ժամանակում փորձակայանը լայն ճանաչում է ձեռք բերում ո՛չ միայն մարզում, նրա շատ փորձերը արմատավորվում են պրակտիկայում և տալիս իրենց դրական արդյունքները:

Ուշագրավ է նաև մարդային պատմաերկրագիտական թանգարանը, որը ցուցադրում է Լեռնային Ղարաբաղի նախահեղափոխական և սովետական շրջանի պատմության երևելի էջերը, ներկայացնում Լեռնային երկրամասի բնությունը, հանքային հարստությունները (պղնձի, կապարի, մարմարի, բյուրեղապակու նմուշները), հարուստ բուսականությունը, կենդանական աշխարհը: Թանգարան մտնողը շատ բան կիմանա այն մասին, թե ինչ ճանապարհով է անցել ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Ղարաբաղում, պայքարի ինչպիսի ուղի են անցել երկրամասի աշխատավորները օտար նվաճողների դեմ մղած հերոսամարտերում:

Սրահներում ցուցադրված են դարերի խորքից եկած ճարտարապետական հուշարձանների լուսանկարներն ու հատակագծերը, որոնք հավերժացած վկաներն են մեր ժողովրդի պատմական անցյալի, նրա ստեղծագործական մեծ տաղանդի:

Հայրենական մեծ պատերազմի օրերին Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական թատրոնը շարունակում է իր գործունեությունը: Ներկայացումների զգալի մասը կազմում են հայրենասիրական պիեսները: «Պատվի համարի», «Քանդած օջախի» և այլ գործերի կողքին բեմ է բարձրանում «Գևորգ Մարզպետունին» և «Ռուս մարդիկ» նթե առաջինում գլխավոր գործող անձը Գևորգ Մարզպետունին է, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի փառաբանված հերոսը, ապա երկրորդում՝ ռուս մարդիկ են Հայրենական պատերազմի օրերին:

Երկու պիեսներում էլ կենտրոնական դերերը կատարում են թատրոնի առաջատար դերասաններ Ա. Աբշահյանի

և Սարգսյանը, Թ. Մելքումյանը, Ն. Հովսեփյանը, Ա. Ղազումյանը և ուրիշներ: Նրանք կարողանում են հաջողությամբ կերպարանավորել ջերմ հայրենասերներին, ցուցադրել մարդկային այն առաքինությունները, որոնցով օժտված էին նրանք:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ստեփանակերտի Մ. Գորկու անվան թատրոնը բեմադրում է նաև ժողովուրդների բարեկամությունը արտացոլող պիեսներ: Նկատի ունեք Զ. Զաբարլիի «Այդին», «1905 թվականին», Ա. Կորնեյչուկի «Ուկրաինայի տափաստաններում», Ա. Դարբենու «Եթե բացվում է մանուշակը» և ուրիշներ:

Թատրոնի նախաձեռնությամբ մեծ մտածողների հոբելյաններին օրերին բեմադրվում էին և՛ նրանց գործերը, և՛ նրանց կյանքն արտացոլող պիեսներ: Այսպես, Նիդամի Գյանջեիի ծննդյան 800-ամյա հոբելյանի առթիվ թատրոնը բեմ հանեց Մեհտի Հյուսեիի «Նիդամի» պիեսը: Հեղինակը գեղեցիկ զրվագներով ներկայացնում է ազրբեջանական մեծ մտածողի և հանճարեղ գրողի կյանքի ու գործունեության բնորոշ կողմերը:

Անտոն Պավլովիչ Չեխովի մահվան 40-ամյակի օրերին բեմադրվեց ռուս անվանի գրողի «Առաջարկություն» պիեսը, իսկ Ազրբեջանում սովետական իշխանության հաստատման 25-ամյակի առթիվ նորից բեմադրվեց Զ. Զաբարլիի «1905 թվականին» պիեսը, որտեղ հիանալի կերպով արտացոլված է հայ և ազրբեջանական ժողովուրդների դարերից եկող բարեկամությունը:

Թատրոնի նկարիչն այդ տարիներին Սամվել Հովհաննիսյանն էր, մի արվեստագետ, որը կարողանում էր գտնել պիեսի բովանդակությունը բացահայտող գույներ, ստեղծել այն կոլորիտը, ուր տեղի են ունենում գործողությունները:

Թատրոնի գերասանները ուշագրավ ելույթներ էին ունենում նաև աշխատանքային կուլեկտիվներում: Հաճախ նրանք լինում էին արդյունաբերական օբյեկտներում, կոլտնտեսային դաշտերում, զորամասերում, դպրոցներում:

«Քավական է սսել, որ այդ ծանր տարիներին մեր դերասանները միայն Ստեփանակերտի զինվորական հիվանդանոցում և զորամասերում հանդես են եկել 120 անգամ»—

գրում է մարզային թերթը մեծ հաղթանակի 30-ամյակի օրերին¹:

Արդեն ձևավորված գրական սերունդը մեծ Հայրենականի օրերին հրապարակում էր այնպիսի ստեղծագործություններ, որոնք պատկերում էին սովետական մարդկանց սխրագործություններն ու աշխատանքային խիզախումները թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում: Տեղական թերթերը, Բաքվում լույս տեսնող հանրապետական «Կոմունիստ» թերթը և «Սովետական դրոշ» ամսագիրը պարբերաբար տպագրում էին երկրամասի առավել աչքի ընկնող գրողների ստեղծագործությունները:

Գրական աճող սերնդի ուժերը մի ընդհանուր նպատակի մղելու, ստեղծագործական մտահղացումների իրականացմանը օգնելու և գրողների շրջանում կազմակերպական աշխատանք ծավալելու համար 1940 թվականին Ստեփանակերտում ստեղծվեց Ադրբեջանի գրողների միության Լեռնային Ղարաբաղի մասնաճյուղը:

Այդ մասնաճյուղում եռանդուն գործունեություն էին ծավալել Իսրայել Պետրոսյանը, Միքայել Հարությունյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Բոգդան Ջանյանը, Սուրեն Ստեփանյանը, Հակոբ Աթալյանը, Արմիկ Հովսեփյանը, Ասծատուր Պետրոսյանը, Լևոն Բաղդասարյանը, Գրիշա Մովսիսյանը, Վերգի Վերխաչյանը, Արտո Մկրտչյանը, Աթանես Սենալը, Սամվել Հովենցը, Ազեր Հուսեյնովը և ուրիշներ: Նրանք արդեն ուշագրավ գործեր էին հրատարակել՝ գրված հայրենասիրական մեծ պաթոսով: «Ալեկոծված զգացմունքներ» բանաստեղծությունների ժողովածուն այն բանի առհասարակ էր, որ հանձին Միքայել Հարությունյանի ընթերցողը գործ ուներ հասունացած մի գրողի հետ, որը ի վիճակի էր բազմաժանր ստեղծագործություններ հրապարակել, գեղարվեստական արտահայտման միջոցներով նկարագրել մեր մարդկանց հարուստ ներաշխարհը, սոցիալիստական գիտակցության աճը:

1944 թվականին Ստեփանակերտի և Բարլի հայկական

թատրոններում հաջողությամբ բեմադրվեց Միքայել Հարությունյանի «Նրկու հանդիպում» պիեսը, որի սյուժեն վերցված էր հայրենի երկրամասի կյանքից և ներկայացնում էր մեր օրերում նոր որակ ստացած հայրենասիրությունը:

Եվ եթե Միք. Հարությունյանը նախապատերազմական տարիներին գովերգում էր խաղաղ աշխատանքը, սոցիալիստական պայքարի եռանդուն թափը, անբիծ սերն ու մայրական գորովանքը, ապա մեծ Հայրենականի օրերին դրվատում էր ջերմ հայրենասերներին, երգեր էր նվիրում նրանց հերոսությանը, թշնամու դեմ մարտի ելած խիզախներին: Ահա նրա «Մոսկվա» բանաստեղծությունից մի քառատող.

Երգս Ձեզ եմ ձոնում սիրով, քաղաքացի հերոսսիրտ,
Ձեզ, եղբայրներ շիկազանգուր և Ձեզ, քույրեր կապուտաչյա,
Օ՛ր, դեռ ինչքան երգ կհչուեն ձեր անմոռաց փառքի մասին,
Քնարները բազմալեզու, որպես սիրո առհավատչյալ:

Շարունակում են գործել միայն «Սովետական Ղարաբաղ» և «Սովետական Կարաբախ» մարզային թերթերը: «Սովետական Ղարաբաղը» չորսի փոխարեն լույս է տեսնում երկու էջով: Բայց տպագրվող նյութերը շատ բան են պատմում մարդկանց ձգտումների ու ակնկալությունների և աշխատանքային մեծագործությունների մասին: Թերթերի համարները լեզվ-լեցուն էին հայրենասիրական նյութերով. հակիրճ ինֆորմացիաներ էին տպագրվում աշխատանքային խանդավառության մասին, նամակներ, որոնց հեղինակները խնդրում էին իրենց ուղարկել ռազմաճակատ՝ գերմանական հորդանների դեմ կռվելու:

Սրտառուչ են երիտասարդների այն նամակները, որտեղ արտահայտվում են ոչ միայն նրանց սերը հայրենիքի նկատմամբ, այլև ուղղակի կոչ են թիկունքի մարդկանց, հատկապես իրենց հարազատներին՝ աշխատելու կրկնապատկված եռանդով:

Մարդի աշխատավորները թիկունքում գործում էին մեկ մարդու պես. բոլորն էլ գոտեպնդվել էին հերոսական աշխատանքով: Նրանք օրեցօր ակտիվացնում էին իրենց ջան-

¹ Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 1975, մայիսի 14:

¹ «Սովետական Ղարաբաղ», 1941, օգոստոսի 15:

քերը ռազմաճակատին անհրաժեշտ միջերջներ ապահովելու համար:

Թերթերի էջերում հաճախ էին տպագրվում նյութեր դարբաբազցի հերոս ռազմաճակատայինների մասին: Դրանք սովորական նյութեր չէին, այլ տոգորված էին ղեպի հայրենիքը տածվող ամենաջերմ սիրով: Մյուս կողմից, նման նյութերը սովորեցնում էին ընթերցողներին՝ ընդօրինակելու լավը, ուսանելին: «Սովետական Միության հերոս Ս. Պետրոսյանը» վերնագրի տակ ղետեղված ծավալուն հոգվածում «Սովետական Ղարաբաղը» թիկունքայիններին ծանոթացնում է Ասկերանի շրջանի Ռե գյուղի բնակիչ Սուրեն Պետրոսյանի ռազմաճակատային սխրագործություններին, որի ականանետային վաշտը Ստալինգրադի հերոսական պաշտպանության մարտերում ոչնչացրել է 150 հիտլերական, թշնամու ականանետային երեք կետ: Նա անձամբ գերի է վերցրել 15 ֆաշիստի¹:

Ընթերցողների ուշադրությունն է գրավում «Փառքի երկու շքանշանների կավալերը» ասկերանի շրջանի Սղենք գյուղի բնակիչ Ժորա Իսրայելյանի մասին:

«Սովետական Ղարաբաղը» մյուս **հայտատու** թերթերի օրինակով «Մեր փառապանծ և անվեհեր նախնիները» ընդհանուր վերնագրի տակ պարբերաբար նյութեր է տպագրում հերոս նախնիների մասին, ցույց տալով Մուշեղ Մամիկոնյանի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ-Բեկի, գեներալներ Հովհաննես Լազարեի, Արղաս Տեր-Ղուկասովի և այլոց սխրագործությունները:

Պատերազմի ծանր օրերին ուշադրությունից դուրս չէին մնում ճակատայինների ընտանիքներին հոգատարությամբ շրջապատելու հարցերը:

Եվ «Սովետական Ղարաբաղը», և՛ «Սովետակի Կարաբախը» կուսակցության գաղափարական հզոր զենքերն էին երկրամասի աշխատավորների ուժերը մեծ նպասակին ուղղելու գործում, ցուցադրելով նրանց համախմբվածությունը, ժողովրդի և բանակի միասնությունը, ժողովուրդների բարեկամության տնտեսան ուժը:

Սկսվում են խաղաղ շինարարության տարիները: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ևս համաժողովրդական մեծ պայքար է ծավալում պատերազմի հասցրած վերքերը բուժելու, ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար:

Սովետական Ղարաբաղի մարզային և շրջանային թերթերը լուսաբանում են աշխատավորության մեծ խանդավառությունը, ոգևորությունն ու եռանդը, արտացոլում սովետական մարդու աշխատանքային խիզախությունը, առաջավորին հասնելու ձգտումները, հարուստ ներաշխարհը:

Ե՛վ «Սովետական Ղարաբաղը», և՛ «Սովետակի Կարաբախը» արծարծում են տնտեսական և մշակութային կյանքի զարգացման զանազան հարցեր, պայքարում ավելի մարտական դարձնելու կուսակցական, սովետական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների գործունեությունը, բարձրացնելու արդյունաբերական ձեռնարկությունների, գործարանների, շինարարական օբյեկտների աշխատանքի թափը, ուժեղացնելու կոլտնտեսություններն ու սովխոզները ունևոր դարձնելու ձգտումը:

Թերթերի էջերում պատկերվում են արտագրության և կուլտուր-լուսավորական բնագավառի առաջավորները իրենց գործերով, ծրագրերով, մտահղացումներով, պատմվում են այն կարևոր խնդիրների մասին, որոնք ընդհանուր ջանքերով պետք է կյանք մտնեն առաջիկայում:

Ընթերցողները մամուլից տեղեկանում են Մարտունու շրջանի Ճարտարի կոլտնտեսության նախագահ Սուրեն Ադամյանի, բրիգադիր Թևոս Սարգսյանի, Մարտակերտի շրջանի Յրունգեի անվան կոլտնտեսության օղակավարուհի Սոնյա Բալուդյանի, «Բակիրսկի ռաբոչի» կոլտնտեսության օղակավարուհի Հեղուշ Լալայանի և շատ ուրիշների ձեռք բերած վիթխարի հաջողություններին, աշխատանքային եռանդին ու առաջավոր փորձին:

Թերթերը նպատակային էջեր ու անկյուններ են նվիրում սոցիալիստական մրցության ծավալմանը՝ տպագրելով հատկապես նրանց նյութերը, ուրբեր աչքի են ընկնում իրենց

¹ ՏՆՆ «Սովետական Ղարաբաղ», 1941, հուլիսի 4:

աշխատանքով, կատարում և գերակատարում են պետական առաջադրանքները, պայքարում են բարձր ցուցանիշների համար:

Թերթերի էջերում հանդես են գալիս տարբեր մասնագիտության և պաշտոնի մարդիկ՝ կոլտնտեսականներ ու սովխոզի բանվորներ, ջուլհակուհիներ ու գորգագործներ, գինեգործներ ու հերթափոխի վարպետներ, գլխավոր ինժեներներ ու տեղամասի պետեր, դիրեկտորներ ու կոլտնտեսությունների վարչությունների նախագահներ... Մի խոսքով, տպագիր օրգանները հետեռգական պայքար են ծավալում աշխատանքային նոր հաջողությունների հասնելու համար:

Մարզի կենտրոնում՝ Ստեփանակերտում, այժմ էլ շարունակում է իր գործունեությունը մարզային «Սովետական Ղարաբաղ» թերթը, որը 1967 թվականի ապրիլի 1-ից դարձել է ամենօրյա և լույս է տեսնում հանրապետական թերթերի ծավալով:

Այժմ թերթը ունի մարզի բազմաբեղուն կյանքը խորապես լուսաբանելու ավելի լայն հնարավորություններ, հանդամանորեն քննարկելու ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր կողմերը, կարևորագույն հարցերը:

Հիրավի, թերթը լայնորեն լուսաբանում է մարզի մեծ ու փոքր աշխատանքային կոլեկտիվների առօրյան, պրոպագանդում է աշխատանքի հերոսներին, խարազանում նրանց, ովքեր պատասխանատվություն չեն կրում հանձնարարված գործի նկատմամբ:

Թերթի էջերում ելույթ են ունենում նաև կուլտուր-լուսավորական օջախների և մշակութային հիմնարկների առաջավորները, մարզի ճանաչված գրողները, դերասանները, գիտնականները, մանկավարժները: Ահա թե ինչու ոչ միայն մայր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս ապրող զարաբաղյցիների համար «Սովետական Ղարաբաղ» թերթը ուղղակի հոգեոր սնունդ է:

1980 թվականի հունվարի 1-ից լույս է տեսնում «Սովետական Ղարաբաղի» ռուսերեն կրկնօրինակը:

Մարզի յուրաքանչյուր շրջան ունի իր տպագիր թերթը, Մարտակերտում՝ «Քարեկամություն», Ասկերանում՝ «Կարմիր դրոշ» (լույս է տեսնում 1979 թվականի հունվարի 1-ից),

Մարտունիում՝ «Աշխատանք», Հադրութում՝ «Կոլտնտեսական», Շուշիում՝ «Շուշա»: Առաջին շորս թերթերը լույս են տեսնում հայերեն, «Շուշան»՝ ադրբեջաներեն:

Ստեփանակերտի 26 կոմիսարների անվան մետաքսագործական ֆաբրիկայի կուսակցական կազմակերպության ու դիրեկցիայի օրգան «Մետաքսագործ» բազմատպաքանակ թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1958 թվականի հուլիսի 1-ին, շարունակում է կոնկրետ լուսաբանել արտադրական նվաճումները. այն ոչ միայն տվյալ օբյեկտի, այլև մարզի մյուս մետաքսակարծական ֆաբրիկաների բազմա-հազարանոց կոլեկտիվների բարեկամն ու խորհրդատուն է:

Սովետական Ղարաբաղի թերթերի այս համեստ բանակը, բարձր պահելով բուլղեհիկյան մամուլի ավանդույթները, անուրանալի օգնություն է ցույց տալիս տեղական կուսակցական, սովետական և մյուս կազմակերպություններին՝ աշխատավորների ուժերը մղելու հրատապ խնդիրների լուծմանը:

Սովետական Ղարաբաղը մեծ հաջողություններ է ձեռք բերել տնտեսության և կուլտուրայի զարգացման ասպարեզներում, որի համար էլ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1967 թ. օգոստոսի 29-ի հրամանագրով պարգևատրվել է Լենինի շքանշանով: Ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար 1979 թվականին ԼՂԽՄ-ը արժանացել է ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին:

Մարզի պատկերը լիովին փոխվել է ոչ միայն տնտեսապես, այլև՝ կուլտուրապես: Զկա մի գյուղ, որ շունենա իր դպրոցը: Միայն X հնգամյակում մարզում միջնակարգ դպրոցների թիվը ավելացել է 16-ով: ԼՂԻ մարզում, 1979—1980 ուսումնական տարվա տվյալներով գործում են 191 հանրակրթական դպրոցներ, որից 20-ը՝ տարրական, 90-ը՝ ութամյա, 81-ը՝ միջնակարգ:

Հաջողությամբ է կենսագործվում համընդհանուր միջնակարգ ուսուցման անցումն ավարտելու մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը: Բավական կոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը: Բավական է նշել, որ 3-րդ դասարանն ավարտած աշակերտների 98,2

տողոսը միջնակարգ կրթությունը շարունակում է ուսման տարբեր օղակներում:

Տարեցտարի զգալիորեն ավելանում է սովորողների թիվը. 1923 թվականի 7,039-ի դիմաց այժմ մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում սովորում են 37,7 հազար աշակերտներ, միջնակարգ պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարաններում՝ 1,4 հազար, տեխնիկումներում և միջնակարգ մասնագիտական մյուս ուսումնական հաստատություններում՝ 2,5 հազար, բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ 2 հազար մարզ: 1981 թվականին միջնակարգ ուսումնական հաստատություններն ավարտել են 3,6 հազար պատանիներ և աղջիկներ, ընդ որում 0,7 հազարը՝ առանց արտադրությունից կտրվելու:

Դպրոցներում, երկարօրյա խմբերում 1979—1980 ուսումնական տարում կային 13,7 հազար սովորողներ, որը 6,5 տողոսով ավելի է, քան նախորդ տարում: 1981 թվականին ժողովրդական տնտեսություն են ուղարկվել 1,1 հազար մասնագետներ¹:

Անհամեմատ աճել է ուսուցչական անձնակազմը. 1923 թվականի 101 ուսուցչի փոխարեն 1979—1980 ուսումնական տարում մարզում հաշվվում էր 3851 ուսուցիչ, որոնցից 2253-ը ունեն բարձրագույն, 508-ը՝ թերի բարձրագույն, իսկ մնացածը՝ մանկավարժական մասնագիտական կրթություն:

Մարզում գործում են գյուղատնտեսական տեխնիկումներ, երաժշտական դպրոցներ, երաժշտական և բժշկական ուսումնարաններ:

Դպրոցների և տեխնիկումների բանակը հատկապես ավելացել է մարզի կենտրոնում: Եթե 1923—1924 ուսումնական տարում Ստեփանակերտում կար մեկ առաջին և մեկ երկրորդ աստիճանի դպրոց, ապա այժմ՝ չորս հայկական, երեք ռուսական, երկու ադրբեջանական, երեք բանբրիտ, մեկ ինտուսական, երկու ադրբեջանական և ռուսական դասարաններով) դպրոցներ և չորս մասնագիտական տեխնիկում:

Երեք լեզուներով ավանդվող դպրոցների միջև ստեղծված են ստեղծագործական և բարեկամական սերտ կապեր: Համախոս են «Եղբայրական դրոշի ներքո» նշանաբանով № 2

(հայկական) և № 4 (ադրբեջանական) միջնակարգ դպրոցների կողակտիվները կազմակերպում բարեկամական հանդիպում-ցերեկույթներ:

Դպրոցների կողակտիվները մշտապես քաղաքական-դաստիարակչական աշխատանք են տանում աշակերտության շրջանում: Աչքի է ընկնում մասնավորապես Ստեփանակերտի № 2 միջնակարգ դպրոցը: Այստեղ լավ է գործում ռազմահայրենասիրական դաստիարակչության հանձնաժողովը, որի հիմնական նպատակն է բոլոր դպրոցականներին համակել հայրենի երկրի ու ժողովրդի նկատմամբ շերմ սիրով:

Այդ գերագույն նպատակով էլ դպրոցում անցկացվում են բազմաթեմատիկ և բազմաբովանդակ միջոցառումներ:

Ճանաչված շատ ուսուցիչներ կան Ստեփանակերտում. նկատի ունենք Արամ Մարտիրոսյանին, Աբրահամ Խոզդեհյանին, Քրիստափոր Պետրոսյանին, Պավել Սլոտինին, Լազար Թուրմանյանին, Սոնյա Խասապետյանին, Խաչիկ Հարությունյանին և ուրիշներին: Նրանք իրենց մանկավարժական աշխատանքի հարուստ փորձը սիրով հաղորդում են երիտասարդներին: Այս առումով ուսանելի շատ բան ունի փորձառու մանկավարժ Սոնյա Խասապետյանը: Կյանքի դժվարին, բայց ուսանելի ճանապարհ է անցել հմուտ ուսուցչուհին. ավարտել է Ստեփանակերտի № 2 միջնակարգ դպրոցը, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Կայուն և խոր գիտելիքների տեր մանկավարժը դասավանդել է հայրենի Ղարաբաղի դպրոցներում՝ Բաղարայում և Խանաբադում, այնուհետև՝ Ստեփանակերտում: Շատ կարճ ժամանակում նա դառնում է աշակերտների ու գործընկերների սիրելին:

Սոնյա Խասապետյանի աշակերտները շեն մոռանում սիրելի ուսուցչուհուն. նա բազմաթիվ նամակներ է ստանում, որոնց մեջ նախկին սաները խոստովանում են, որ նա իրենց սրտում անմաքելի կրակ է վառել դեպի գրականությունը, գեղարվեստական արձակն ու շափածոն:

Նույն բանը կարելի է ասել գրականագետ Արամ Մարտիրոսյանի, Լեոն Բաղդասարյանի, Պավել Անդրյանի և մյուսների մասին, որոնց ուսուցչական վարպետությունը շատ-շատերին է մղում գիտելիքների աշխարհը, տոգորում լիարժեք մասնագետ դառնալու ձգտմամբ:

¹ Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 1980, փետրվարի 10:

ԼՂԻ մարզում հաջողությամբ է իրականացվում 1973 թվականի՝ ՄՄԿԿ Կենտկոմի և ՄՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ «Գյուղական հանրակրթական դպրոցի աշխատանքի պայմանների հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը: Ամրապնդվում է դպրոցների ուսումնանյութական բազան: Միայն այդ որոշումից հետո մարզում կառուցվել են 28 նոր դպրոցական շենքեր:

Միջնակարգ դպրոցների մեծ մասը անցել է ուսուցման կաբինետային համակարգի: Կաբինետները կահավորված են ուսուցման տեխնիկական միջոցներով: Կաբինետային համակարգի անցած յուրաքանչյուր դպրոցում տեղադրված են 6—10 կինոսպարատներ, մագնիտաֆոններ և ուսուցման անհրաժեշտ այլ տեխնիկական սարքեր:

Ուսուցման լավ պայմանները և ուսուցչական անձնակազմի անձնվեր աշխատանքը շատ դպրոցներում տալիս են հիանալի արդյունքներ: Առանձին ութամյա և միջնակարգ դպրոցներ (Մարտակերտի շրջանից՝ Առաջածորի, Չալուի, Հաթերքի և այլն, Ասկերանի շրջանից՝ Չանախչու, Ասկերանի շրջկենտրոնի և այլն, Շուշիից՝ Ուղեիք Հաջիբեկովի անվան առաջին միջնակարգ, Հադրութի շրջանից՝ շրջկենտրոնի, Մեծ Թաղարի, Մարտունու շրջանից՝ Ղզղալայի, Աշանի և այլն) հաջողությամբ են հաղթահարում երկտարեցիությունը և ձգտում են աշակերտներին մատչելի կերպով հաղորդել խոր և կայուն գիտելիքներ:

Ուսուցման գործի վրա բարերար ազդեցություն են ունենում առարկայական օլիմպիադաները, ինքնագործ խմբակները: Ահա թե ինչու տարեցատարի ավելանում է օլիմպիականներին մասնակցող աշակերտների թիվը: Այսպես, 1969 թվականին Մարտակերտի շրջանային առարկայական օլիմպիադաներին մասնակցել են 242 աշակերտ և աշակերտուհի, իսկ 1973 թվականին՝ 526, հաջորդ տարիներին՝ ավելի շատ: Նույն աճող թվերը կարելի է բերել Հադրութից և մարզի մյուս շրջաններից:

Աշակերտների առաջագիմությունը նկատելի է հատկապես ճշգրիտ գիտություններից: Քիմիայի և մաթեմատիկայի գծով մարզի աշակերտները պարբերաբար մասնակցում են ոչ միայն հանրապետական, այլև միութենական օլիմպիադաներին և զբաղվում մրցանակային տեղեր:

Մարզում ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման գործում կարևոր դեր խաղաց ԼՂԻՄ-ի դպրոցներին մի խումբ ուսուցիչների դիմումը մարզի բոլոր ուսուցիչներին: Նրանց կոչի նշանաբանն էր՝ «Աշխատենք առանց ետ մնացող ու երկտարեցի աշակերտների, սովորողներին զինենք խոր ու կայուն գիտելիքներով»:

«Ուսումնադաստիարակչական պրոցեսի հետագա կատարելագործման և ուսուցիչների կողմից մանկավարժական վարպետությունը տիրապետելու մասին» Մոսկվայի ուսուցիչների նախաձեռնությունը պաշտպանելու առթիվ ԼՂԻՄ-ի դպրոցների մի խումբ ուսուցիչների կողք հավանություն է արժանանում Ազրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեում¹:

Կուսակցության մարզային կոմիտեն պարտավորեցնում է շրջկոմներին, քաղկոմներին, քաղսովետներին և շրջսովետներին, ինչպես նաև մյուս շահագրգռված կազմակերպություններին՝ ամենուրեք աշխատանքները կազմակերպել Մոսկվայի ուսուցիչների օրինակով, հասնել այն բանին, որ մարզի դպրոցներում շլինեն երկտարեցի աշակերտներ. այդ նպատակով կատարելագործել դասավանդումը, բոլոր միջոցներով նպաստել սովորողների կոմունիստական դաստիարակությանը:

Մարզի ուսուցիչների կողք լայն արձագանք է գտնում շատ դպրոցներում, հետզհետե ավելի արդյունավետ է դառնում ուսման աշխատանքը. փորձառու և հմուտ մանկավարժները դասը կազմակերպում են տեխնիկական նորագույն միջոցներով ու ձևերով. մուտք է գործում Միության մեջ լայն ճանաչում գտած դպրոցների փորձը:

Մարզի տասնյակ ութամյա և միջնակարգ դպրոցներում նկատելի է աշակերտների սերը դեպի առանձին առարկաներ: Ասկերանի շրջանի Չանախչի, Բաղաբայի, Ասկերանի շրջկենտրոնի, Խանածախի, Բալլուջայի, Հադրութի շրջանի Տումի, Մարտակերտի շրջանի Առաջածորի, Հաթերքի, Չալուի և մի շարք այլ դպրոցներում կազմակերպված են անցնում հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի, ֆի-

1 Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 1972, հունվարի 25:

դիկայի, քիմիայի, բուսաբանություն և մյուս առարկայական խմբակների պարապմունքները:

Առանձին դպրոցներում և ուսումնարաններում լուրջ ուշադրություն է դարձվում աշակերտների դեղագիտական դաստիարակությանը: Գործող գրական խմբակների հիմնական խնդիրն է՝ ղգալիորեն աջակցել գրականության ծրագրային նյութերի խորացմանը և սովորողների լեզվական կուլտուրայի բարձրացմանը:

Գրական խմբակների գործունեությունը համեմատաբար արդյունավետ է Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում, շրջկենտրոնների դպրոցներում, որոնց հետ սերտ կապերի մեջ են մարզի երիտասարդ ստեղծագործողները, սկսնակ գրողները:

Սովորողների գեղագիտական դաստիարակությանը և ճաշակի բարձրացմանը խթանում են ուսումնական օջախների ավանդական կապը և փոխալցելությունները: Սերտ կապ է հաստատված Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի ու դպրոցի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոլեկտիվներին միջև: Հաճախ են կոնսերվատորիայի ուսանողական գիտական ընկերության անդամները թեմատիկ գեկուցումներով և երաժշտական ծրագրերի կատարմամբ հանդես գալիս Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանում, շրջկենտրոնների երաժշտական դպրոցներում և այլուր:

Թեմատիկ երեկոները, համերգ-դասախոսությունները, զրույցները, գրական բանավեճերը, ժամանցները, հարց ու պատասխանի ցերեկույթները, ինչ խոսք, հարստացում են սովորողների գիտելիքները, ընդարձակում նրանց գաղափարական մակարդակը: Ահա թե ինչու և՛ մարզի կենտրոնում, և՛ Շուշիում, և՛ գյուղական մի շարք դպրոցներում (ինչպես, օրինակ, Ասկերանի շրջանի Խանաբադ, Նախիջևանի, Մարտակերտի շրջանի Կուսապատ, Մարտունու շրջանի Ճարտար և այլն) կազմակերպվել են ծնողական համալսարաններ, որոնց պարապմունքները անցնում են ճանաչված մասնագետների ղեկավարությամբ:

Ինքնագործ խմբակների աշխատանքը բարձր մակարդակի վրա է գտնվում Շուշիի մանկավարժական ինստեռնացիո-

նալ ուսումնարանում: Դրանք աջակցում են սովորողների աշխատանքային, ռազմահայրենասիրական և գեղագիտական դաստիարակությանը: Յուրաքանչյուր տասն ուսանողից մեկն ուսման գերազանցիկ է: Ահա թե ինչու ուսումնարանը արժանացել է Ադրբեջանական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության պատվոգրին:

Մարզի մի շարք դպրոցներ բարեկամական կապերի մեջ են եղբայրական հանրապետությունների դպրոցների հետ: Արդյունավետ է Ստեփանակերտի № 9 և Ռիգայի № 32 ութամյա դպրոցների միջև շարունակվող բարեկամությունը: Փոխադարձ ալցելություններն ու նամակագրական կապերը աջակցում են մի կողմից հայրենի երկրի խորապես ուսումնասիրմանը, մյուս կողմից՝ ընդհանուր զարգացմանը:

Դպրոցներում ավանդույթ է դարձել այբուբենի տոնի կազմակերպումը: Խրախուսելի աշխատանք են կատարում Ստեփանակերտի № 7 միջնակարգ, Մարտակերտի շրջանի Կուսապատի, Չայլվի, Հադրութի շրջկենտրոնի, Մոխրենեսի, Մարտունու շրջանի Գիշիի, Ասկերանի շրջանի Բաղարայի և այլ դպրոցները:

Ուսումնագաստիարակական աշխատանքը լավ հիմքերի վրա է դրված Ստեփանակերտի միջնակարգ պրոֆտեխնուսումնարանում, որտեղ սովորողները մասնագիտանում են մի շարք արհեստների բնագավառում:

Սովորողների համար հաճախ են կազմակերպվում թեմատիկ միջոցառումներ, հանդիպումներ մարզի անվանի մարզկանց հետ:

Տարբեր առիթներով հին բուլշեիկներն ու մեծ Հայրենականի վետերանները պատանիներին ու աղջիկներին պատմում են իրենց կյանքի հետաքրքիր դրվագների մասին՝ նրանց մեջ անհուն սեր ու նվիրվածություն ներարկելով հայրենի հողի ու հարազատ ժողովրդի նկատմամբ:

Դպրոցական աշխատանքների առավել հաջող և արդյունավետ կազմակերպման բնագավառում մարդում շոշափելի միջոցներ են կիրառվում կուսակցության XXVI համագումարից հետո:

Ժողկրթության մարմինների աշխատանքը ձիշտ ուղիով

տանելու համար կուսակցական և սովետական ղեկավար մարմինները հաճախ են անդրադառնում դպրոցական հարցերին, բացահայտում են այդ ասպարեզում առկա թերու-թյունները, օգնում դպրոցական կոլեկտիվներին՝ անշեղորեն կատարելու ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ դպրոցների առջև դրված խնդիրները:

Մարզում ժողովրդական կրթության գործի զդարի առաջ-ընթացի առհավատչյան ամենից առաջ այն է, որ շատ դպրոցների շրջանավարտներ մեծ հաջողությամբ են ընդունելու թյան քննություններ հանձնում երկրի տարբեր բուհերում:

* * *

Տարեցտարի ընդարձակվում է նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների ցանցը ԼՂԻ մարզում: Մարզի շրջանակներից դուրս լայն ճանաչում է գտել Ստեփանակերտի առաջին և չորրորդ մսուր-մանկապարտեզների դրական աշխատանքը: Նրանց փորձը ցուցադրվում է ՍՍՀՄ Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի «Ժողովրդական կրթության» տաղավարում:

Ստեփանակերտում գործում են պատանի տեխնիկների, պատանի բնասերների և պատանի տուրիստների կայանները, որոնք, ինչ խոսք, աշակցում են պիոներ-դպրոցականների ուսուցման գործի առաջընթացին: Պատանի տեխնիկների մարզային կայանը, որ ստեղծվել է 1952 թվականին, ունի 8 տիպի 12 խմբակ (ավտոմոդելիստների, ավիոմոդելիստների, նավամոդելիստների, լուսանկարիչների, կինոնկարահանումների, ռադիոյի և այլն), ուր ընդգրկված են 130 պիոներ-դպրոցականներ:

Ավիոմոդելիստները գրեթե միշտ մրցանակային տեղեր են գրավում հանրապետությունում: Կայանում ստեղծված են մեթոդական կաբինետներ, որոնք ցուցումներ են տալիս մարզի դպրոցներում գործող տեխնիկական խմբակներին: արտադպրոցական հիմնարկներին, պիոներ-դպրոցականներ տանը:

Կայանը ամեն տարի անցկացնում է պատանի ֆիզիկոսների, քիմիկոսների, մաթեմատիկոսների օլիմպիադա, մար-

զային ավիոմոդելիստների մրցումներ, պատանի դպրոցականների տեխնիկական ստեղծագործությունների ցուցահանդեսներ, լուսանկարիչների մրցույթներ:

Լայլ է գործում պատանի բնասերների մարզային կայանը, որի իրավասության տակ գտնվում է ուսումնափորձական հողամաս: Տարբեր տեսակի խմբակները (բնութային պահպանության, ծաղկաբուծական, դեղաբույսերի, ճագարաբուծական, բանջարաբուծական, այգեգործական, տարրական դասարանների բնասերների և այլն) նպաստում են խորացնելու աշակերտների գիտելիքները հատկապես բնության մասին:

Խրախուսելի է, որ Ստեփանակերտի պատանի բնասերների մարզային կայանը կապ է պահպանում Երևանի բուսաբանական այգու, գյուղատնտեսական ինստիտուտի, Մասիսի բանջարաբուծական գիտահետազոտական փորձակայանի հետ:

Պատանի բնասերների մարզային կայանը աշակցում է տեղի դպրոցներին՝ գիտագործնական սեմինարներ անցկացնելու կենսաբանության ուսուցիչների և ավագ ջոկատավարների համար:

Արդյունավետ է նաև պատանի տուրիստների կայանի աշխատանքը, որը հիմնադրվել է 1971 թվականի սկզբին: Նրա նպատակն է դպրոցականներին ծանոթացնել առաջին հերթին մարզի տեսարժան վայրերին: Մարզի շատ պատանիներ և աղջիկներ տուրիստական ուղեգրերով եղել են երկրի շատ քաղաքներում, միջինասիական հանրապետություններում, Մերձբալթիկայում:

* * *

1969—1970 ուսումնական տարվանից իր պարապմունքներն սկսեց Ադրբեջանի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը՝ հայկական և ադրբեջանական սեկտորներով:

Հայոց լեզվի և գրականության, ֆիզիկամաթեմատիկական և այլ ֆակուլտետների ստեղծումը նպատակ ունի բարձրորակ մանկավարժներ պատրաստել տեղի դպրոցներին համար:

Աղբբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի 1973 թվականի որոշմամբ Ստեփանակերտի մասնաճյուղը դարձավ ինքնուրույն մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, աղբբեջանական և ռուսական սեկտորներով:

Ինստիտուտն ունի ստացիոնար և հեռակա բաժիններ:

Ուսումնամանկավարժական բեղմնավոր աշխատանքին զուգընթաց երիտասարդ բուհը գիտական առաջին բալլերն է անում: Պարբերաբար անցկացվող գիտատեսական կոնֆերանսները հանրագումարի են բերում ինստիտուտի դասախոսների գիտական արդյունքները: Հոբեկյանական և տեսական գեկուցումներ են կարգացվում հայ և աղբբեջանական գրականության և, ընդհանրապես, մշակութային առնչությունների, լեզուների դարգացման օրինաչափությունների, սովորողների կոմունիստական դաստիարակության և այլ կարևոր հարցերի շուրջը:

Ուսանողական գիտական ընկերությունը ուսանողներին շրջանում դարգացնում է գիտական աշխատանք կատարելու կարողությունները:

Շուրջ 15 տարի է, ինչ Ստեփանակերտում գործում է Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը: Ինչ խոսք, սա գործարար օգնություն է ցույց տալիս տեղի դպրոցներին՝ կատարելագործելու ուսուցումը, ամուր հիմքերի վրա դնելու առարկաների դասավանդումը:

Հետզհետե ընդարձակվում են Աղբբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Լեոնային Ղարաբաղի բազայի գիտահետազոտական աշխատանքի ոլորտները: Ժամանակի թեկադրանքով՝ 1958 թվականին բազան վերակազմվեց և դարձավ կոմպլեքսային-դոնալ փորձակայան:

Մեծ են դոնալ փորձակայանի գիտական զործունեության արդյունքները: Նոր հաջողություններ են ձեռք բերվել աշնանացան ցորենի բերքատվությունը բարձրացնելու, պարարտանյութերը արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:

Խաղողագործությունը մարզի հիմնական եկամտաբեր ճյուղերից մեկն է: Կոմպլեքսային-դոնալ փորձակայանի մասնագետները ձգտում են մշակել խաղողի հիմնական սոր-

տերի տեսակներ՝ ջրի ուժի մի ազդեցությամբ, բարձրացնել նրա բերքատվությունը և շաքարայնությունը:

Միջոցառումների մի ամբողջ համակարգ է մշակվում անասնապահության շեշտակի վերելքի ուղղությամբ:

1966 թվականից սկսած ամեն տարի առանձին ժողովածուով լույս են տեսնում փորձակայանի աշխատողների գիտական աշխատությունները: Տպագրված շուրջ 120 հոդվածները վկայում են մարզի գիտական հետազոտողների լայն թեմատիկան, հարցերի հրատապությունը, ժողովրդական տնտեսության դարգացմանը շահավետ լինելու ձգտումը:

Գիտահետազոտական աշխատանքներ են ծավալվում նաև Լենինավանի (նախկին Մարգուշեանի) դոնալ փորձակայանում: Այն կազմակերպվել է 1950 թվականին և 1956 թվականին վերակազմվել ու դարձել է Աղբբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գեներալակայի ու սեկեկցիայի ինստիտուտի գիտափորձական բազան:

Գիտափորձական բազայի կոլեկտիվը աշխատում է հաջահատիկի, խոտաբույսերի, բանջարաբոստանային և այլ կուլտուրաների բարձր բերքատվության բարձրացման ուղղությամբ:

Այստեղ մշակվում են ցորենի նոր տեսակներ, որոնք կարող են լավ աճել անջրդի պայմաններում:

* * *

1948 թվականից ԼՂԻՄ-ում գործում է «Գիտելիք» բնկերությունը, որը կարճ ժամանակամիջոցում իր շուրջն է համախմբել դասախոսների մի ամբողջ բանակ, որը պարբերաբար հանդես է գալիս մարզի աշխատավորության առջև: Եթե բնկերության ստեղծման առաջին տարիներին մի քանի դասախոսներ էին նրա կազմում, ապա այժմ՝ 1400 հոգի, որոնք ընդգրկված են 100-ից ավելի սկզբնական կազմակերպություններում:

«Գիտելիք» ընկերության մարզային վարչության կից ստեղծված 9 գիտամեթոդական խորհուրդները օգնություն են ցույց տալիս շրջաններում գործող սեկցիաներին՝ բարձրացնելու կարգացվող դասախոսությունների որակը:

«Գիտելիք» ընկերություն մարզային և շրջանային վարչությունների ուժերով պարբերաբար կազմակերպվում են զեկտագործնական կոնֆերանսներ, թեմատիկ երեկոներ, առանձին թեմաներով դասախոսություններ:

Գիտագործնական կոնֆերանսներ են տեղի ունենում նաև մարզի գյուղերում, ուր հանդես են գալիս կուսակցական-սովետական մարմինների ղեկավար աշխատողներ: Մարտունու շրջանի Մարզաշեն գյուղում անցկացված գիտագործնական կոնֆերանսում տարբեր («Կուսակցության տրնտեսական քաղաքականության գերագույն նպատակը», «Իմանալ և կատարել օրենքները», «Հանցագործությունների և իրավախախտումների կանխման ուղիները» և այլն) թեմաների շուրջը դասախոսություններ են կարդացել «Գիտելիք» ընկերության մարզային վարչության պատասխանատու քարտուղար Ս. Հովհաննիսյանը, ընկերության անդամներ, մարզային դատարանի նախագահ Բ. Տեր-Կասպարովը, ներքին գործերի Մարտունու շրջանային բաժնի պետ Շ. Բարսեղյանը¹:

Խրախուսելի է նաև այն, որ «Գիտելիք» ընկերության առավել ակտիվ անդամների դասախոսությունները առանձին գրքով լույս են ընծայվում հանրապետական հրատարակչությունների կողմից: Աղբյուրնական ՍՍՀ «Գիտելիք» ընկերության հրատարակչությամբ լույս են տեսել Ս. Խալատրյանի «Հրապարակային խոսքի հիմունքների մասին», Ս. Խանյանի «Սամեզ վուրդունը և հայ գրականությունը», Շ. Աբրահամյանի «ՍՍԿԿ XXV համագումարը սոցիալիստական դուրսի սոցիալ-տնտեսական զարգացման մասին» և ուրիշ գրքույկներ:

* * *

Լեոնային Ղարաբաղի պետական պատմաերկրագիտական թանգարանում ամփոփվում են 11 հազարից ավելի ցուցանմուշներ: Այստեղ հաճախորդները ծանոթանում են երկրամասի նախասովետական և սովետական շրջանի պատմության բաժինների տասը ցուցասրահներում ներկայացված

¹ Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 1976, հոկտեմբերի 24:

նմուշներին, որոնք, մի կողմից, պատմում են Ղարաբաղի աշխատավորության ազատագրական մեծ պայքարի, մյուս կողմից՝ սովետական իշխանության հաստատումից հետո ձեռք բերած նվաճումների մասին:

Առանձին ստենդներով ցուցադրված են մարզի ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերը. շատ փաստեր կան արդյունաբերության, գյուղատնտեսության, բուրգապահության, լուսավորության և կուլտուրայի նոր վերելքի մասին, այն մասին, որ Սովետական Ղարաբաղի աշխատավորները պայքարում են կուսակցության XXVI համագումարի որոշումները անթերի կատարելու համար:

Լեոնային Ղարաբաղի պետական պատմաերկրագիտական թանգարանը արժանացել է ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության խրախուսիչ դիպլոմին:

Պատմաերկրագիտական թանգարանն ունի շոքո մասնաճյուղ. Մարտունու շրջանի ննգի գյուղում՝ Բողդան Կնունյանցի, Հաղրութի շրջանի Մեծ Թաղարում՝ Ա. Խամփերյանցի (Ա. Խուրյակովի), Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում՝ Միքայել Պարսեղովի, Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում պրոֆեսիոնալ հեղափոխական Ալեքսանդր Բեկլադյանի տուն-թանգարանները, որոնք կոչված են պրոպագանդելու անվանի մարդկանց հերոսական գործունեությունը:

* * *

Մեծ է կուլտուր-լուսավորական մյուս օջախների դերն ու նշանակությունը: Ամենուր գործում են գրադարաններ, ակումբներ, ընթերցարաններ... Եթե նախասովետական Ղարաբաղում (այն էլ միայն Շուշիում) ընդհատումներով աշխատում էին մեկ ակումբ և մեկ գրադարան, ապա սովետական տարիներին մեծ թափ է հաղորդվում կուլտուր-լուսավորական այդ տիպի օջախների ստեղծմանը: Այժմ մարդում կան 200 մասսայական գրադարաններ մեկ միլիոն 500 հազար գրքային ֆոնդով, որից օգտվում է շուրջ 66 հազար ընթերցող:

Բեղմնավոր աշխատանք է կատարում հատկապես Ստեփանակերտի Մ. Գորկու անվան մարզային գրողարանը, որն ունի հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն լեզուներով 169 հազարից ավելի գրքային ֆոնդ:

Սովետական տարիներին լույս տեսած գրքերի հետ միասին այստեղ մեծ խնամքով պահպանվում են հազվագյուտ հրատարակություններ, որոնցից օգտվում են գիտահետազոտական և ուսումնական հաստատությունների աշխատողներ, դասախոսներ, ասպիրանտներ: Գրանցից են 1825 և 1829 թվականներին Վենետիկի Ս. Ղազար կղզում տպագրված Թուրքի «Հնախոսությունների» առաջին և վեցերորդ հատորները, 1830 թվականին Շուշիում լույս տեսած «Համառոտ բառգիրք ի գրաբարէ յաշխարհաբարը» և ուրիշներ:

Քրազարանում պարբերաբար կազմակերպվում են հանգիստամենք, գրական երեկոներ, ընթերցողների կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ և այլն: Նրա նախաձեռնությամբ հաճախ են ցերեկույթներ կազմակերպվում ուսումնական հաստատություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, աշխատանքային այլ օբյեկտներում՝ «Գիրքէ գիտելիքների աղբյուրն է», «Հայրերի ճանապարհը որդիների ուղին է», «Նրիտասարգության կերպարը զեղարվեստական գրականության մեջ» և ուրիշ թեմաներով:

Շրջիկ գրադարանները մեծապես նպաստում են գրքերի տարածմանն ու մասսայականացմանը, օգնում են ընթերցողներին՝ արագորեն հազորդակից լինելու նոր լույս տեսած գրականությանը:

Միջգրադարանային արձուցումները նոր հնարավորություն է ընձեռել լայն կապերի մեջ մտնելու երկրի ճանաչված շատ գրադարանների հետ: Կապերն օրըստօրե սերտ են դառնում Մոսկվայի կենտրոնի անվան պետական գրադարանի, Հայկական ՄՍՀ Ա. Մլասնիկյանի անվան հանրապետական գրադարանի, Ադրբեջանի Մ. Ֆ. Ախունզովի անվան հանրապետական գրադարանի հետ:

Քրադարանի աշխատանքների հմուտ կազմակերպման, մասսայական միջոցառումների անցկացման, գրքի մատչելի պրոպագանդայի շնորհիվ անհամեմատ աճել է ընթերցող-

ների թիվը: Եթե 1920-ական թվականներին գրադարան հաճախում էին հարյուրավոր, ապա այսօր շուրջ 6 հազար հոգի ոչ միայն մշտական ընթերցողներ են, այլև նրանցից շատերը ակտիվ մասնակցություն են ունենում կազմակերպվող մասսայական միջոցառումներին:

Մ. Գորկու անվան գրադարանը միաժամանակ մեթոդական կենտրոն է մարզի ամբողջ գրադարանային ցանցի համար: Այն այսօր մարզի ճանաչված կուլտուր-լուսավորական կարևոր օջախն է, որը դուրս է եկել իր անմիջական պարտականությունների սահմաններից և դարձել է մի շարք նախաձեռնությունների հեղինակ:

Ջի կարելի չնշել, օրինակ, երկրագիտական այն մեծ աշխատանքը, որ կատարվում է այստեղ՝ 1957 թվականից սկսած: Ստեղծելով երկրագիտական բաժին, գրադարանը կազմել է երկրամասի պատմության տարբեր ժամանակահատվածները ներկայացնող ֆոնդեր, ցուցահանդեսներ: Քաղաքում մասնավոր հարուստ նյութերը (վալերազերեր, փաստաթղթեր, նամակներ, հուշեր, լուսանկարներ և այլն) պատմում են Ղարաբաղի նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության հիշարժան դրվագների, ժողովուրդների բարեկամության հետաքրքիր էջերի, չխամրող հայրենասիրության վառ օրինակների մասին:

Հետաքրքիր միջոցառումներ են կազմակերպվում Ստեփանակերտի մանկական, բժշկական և ուրիշ գրադարաններում: Նշանավոր գիտնականների, տարբեր մասնագիտության տեր մարդկանց հետ հանդիպումները, նրանց զրույցներն ու զեկուցումները միշտ էլ ունենդրվում են սիրով:

Մեծ ճանաչում է գտել Ստեփանակերտի Մուրաջանի անվան մանկական գրադարանին կից գործող «Կարկաչ» գրական խմբակը: Կազմակերպված են անցնում նրա նախաձեռնությամբ տեղի ունեցող գրական երեկոները՝ նվիրված նշանավոր գրողներին:

Մարզի գյուղական գրադարանները դարձել են մասսայական այնպիսի օջախներ, ուր սօք են դնում ոչ միայն պատանին ու աղջիկը, դպրոցականն ու ուսուցիչը, այլև՝ տարեց մարդիկ, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են տեղյակ լինել օրվա նորություններին: Նրանցից շատերը տպա-

գիր խոսքի երկրպագուներ են, լավագույն գրքի պրոպագանդիստներ, մասսայականացնողներ...

Մարզի առանձին գրադարաններ ունեն իրենց խորհուրդը, որն օգնում է գիտապրակտիկ կոնֆերանսներ կազմակերպելուն:

Մարզի գրադարանները հմտորեն պրոպագանդում են կուսակցության XXVI համագումարի նյութերը, աշխատավորների շրջանում մասսայականացնում համագումարի որոշումները: Այս տեսակետից օրինակ է տալիս Ծամձորի գյուղական գրադարանը: «Գիտելիք» ընկերության անդամների և կուլտուրայի շրջանային բաժնի օգնությամբ ղեկուցումներ ու դրույցներ են անցկացվում «ՍՄԿԿ XXVI համագումարի միջազգային նշանակությունը», «ՍՄՇՄ ժողովրդական տրեսեսությունը տասնմեկերորդ հնգամյակում», «Ծամձորի կուլտուրայի նոր հնգամյակում», «Բարձր պահել սոցիալիստական մրցության դրոշմը», «Հարազատ գյուղի դարգացման սոցիալ-կուլտուրական հեռանկարները տասնմեկերորդ հնգամյակում» և այլ թեմաների շուրջը:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 195 ակումբները (1923 թվականի 15-ի դիմաց), շրջանային, քաղաքային և գյուղական կուլտուրայի տները դարձել են աշխատավորների կուլտուրական սպասարկման հիանալի օջախներ, ուր գործում են շուրջ 716 ինքնագործ խմբակներ ավելի քան 8 հազար շնորհալի պատանիների ու աղջիկների ակտիվ մասնակցությամբ:

Ահա սաբալանջին փոված Գուգուկչի գյուղը (Հաղրութի շրջան): Մեծ չէ Գուգուկչին, բայց երկհարկանի տներն ու կարգավորված փողոցները մի առանձին ներդաշնակություն են կազմում, հիանալի տեսք տալիս գյուղին: Այստեղ ակումբը աշխատավորների սիրած վայրն է: Ակումբավարի ջանքերով հաճախ են համերգներ կամ թատերական ներկայացումներ կազմակերպվում: Կավ է գործում երգի ու պարի ինքնագործ խումբը:

Թատերական խմբի անդամները բոլորն էլ արտադրության առաջավորներ են՝ օժտված դերասանական շնորհքով: Ոչ միայն հայրենի, այլև հարևան Աղբուլաղ, Ծակուռի, Զրահուս և ուրիշ գյուղերի աշխատավորների համար նրանք բե-

մականացնում են ժամանակակից պիեսներ, ցույց տալով մեր օրերի մարդու հարուստ ներաշխարհը, աշխարհայացքն ու վերաբերմունքը սոցիալիստական աշխատանքի նկատմամբ:

Աշխույժ է գործում Բալուջայի ակումբը: Այն աչքի է ընկնում տարբեր միջոցառումներով. մի տեղ ինքնագործ խումբը ՍՄՇՄ ժողովուրդների պարերի փորձ է կատարում, մի այլ տեղ՝ դերեր են սովորում, մի տեղ շախմատ են խաղում, մի այլ տեղ՝ կուլանտեսականները դիտում են նկարիչների կտավները:

Ակտիվ են նաև շրջանային և գյուղական մշակույթի տները: Մարտակերտի շրջանային մշակույթի տան գեղարվեստական ինքնագործունեության խումբը հաճախ է ելույթներ ունենում աշխատավորների առջև:

Ստեփանակերտի մշակույթի տան «Ծիծեռնակ» ինքնագործ նվագախումբը աչքի է ընկնում իր երգերով, պարերով:

Մարտունու շրջանի Կարմիր շուկայի մշակույթի տունը իր շուրջն է համախմբել շնորհալի երգիչներին, պարողներին, կլարեետահարներին, ասմունքողներին, որոնք հիմնականում դպրոցականներ են կամ բանվորներ:

Այս մշակույթի տան ինքնագործ խմբերը բազմիցս մրցանակային տեղեր են գրավել շրջանային և մարզային մրցույթներում և ստուգատեսներում՝ իրենց երգով և պարով, թատերական խոսքով ու ստեղծագործությամբ, գեղագիտական հաճույք պատճառելով հանդիսատեսին:

Շուշիի շրջանային մշակույթի տունը դաստիարակական պիեսների բեմադրության սիրահար է: Գրամատիկական կուլեկտիվը քաղաքի և մերձակա գյուղերի աշխատավորների համար բեմադրել է Զաֆար Զաբարիի «1905 թվականին», Սամեդ վուրդունի «Վագիֆ», Միրզա Իբրահիմովի «Հայաթ» և այլ պիեսներ:

Հիացմունք է պատճառում ինքնուս նկարիչների խումբը: Շամո Հասանովը, Ռովշան Բայրամովը, Էլբար Թադիկը, Թոֆիկ Զեյնալովը և ուրիշներ շնորհալի կտավների հեղինակներ են:

Վերջին տարիներին կառուցվել են մշակույթի տան մի

քանի շենքեր: Միայն Ասկերանի շրջանի Դաշբուլաղ, Կարմիր գյուղ, Գահրավ, Քոասնի, Զանախչի, Շուշիքենդ, Սարուշեն, Խանաբաղ և այլ գյուղերում վեր են խոյացել այնպիսի շենքեր, որտեղ բոլոր հնարավորությունները կան՝ բնակչության կուլտուրական սպասարկման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար:

Ձերմ հանդիսավորության պայմաններում բացվեցին Մարտունու շրջկենտրոնի և Ղզղալայի մշակույթի պալատների դռները: «Բարեկամության համերգ բարեկամության պալատում», այսպես էր իր ծավալուն ինֆորմացիան վերնագրել «Սովետական Ղարաբաղ» թերթը¹, ընթերցողներին ներկայացնելով այն ջերմ մթնոլորտը, որ աիրել է Մարտունու շրջկենտրոնում մշակույթի պալատը բացելու պահին:

Մշակույթի պալատի շենքը համարվել է բարեկամության կառույց: Այստեղ շինարարական աշխատանքներին մասնակցել են Բաքվից, Երևանից և այլ քաղաքներից հրավիրված մարդիկ: Եթե շենքի պատերը դրվել են հայկական վարդագույն տուֆից, Բաքվից ստացված բարձրորակ սալիկներից, ապա էլեկտրական ջահերը բերվել են մերձբալթյան հանրապետություններից, իսկ բեմական հանդերձանքները՝ ՌՍՖՍՀ-ից²:

Պատանիների ու աղջիկների ղեղաղիտական ճաշակը բարձրացնելու և արվեստի տարբեր ձևերի գծով նրանց ընդունակությունները դարձացնելու գործում բիշ աշխատանք չի կատարում Ստեփանակերտի պիոներների տունը:

Նրա երգի, պարի, երաժշտական, նկարչական և այլ խմբերը հաճախ են ելույթներ ունենում մարզի աշխատավորների շրջանում:

Աշխատավորների օրավուր աճող կուլտուրական պահանջմունքները բավարարելու նպատակով 1958 թվականին մարզում կազմակերպվեց երգի ու պարի պետական անսամբլ, որի առաջին ղեղարվեստական ղեկավարն էր կոմպոզիտոր Տելեմաք Տեր-Ավետիսյանը: Նա մեծ ջանքեր գոր-

ծադրեց անսամբլում ընդգրկելու շնորհալի երգիչների ու պարողների, որոնց արվեստը հետզհետե կատարելագործվեց և հասավ վարպետության: Անսամբլում արդեն աշխատում են Ադրբեջանական ՍՍՀ շորս վաստակավոր արտիստներ՝ Նաիրուհի Ալավերդյանը, Ռոբերտ Գրիգորյանը, Աշոտ Բաբայանը և Յուրի Դավիդովը:

Ղարաբաղի երգի ու պարի պետական անսամբլը բաղմիցս ելույթներ է ունեցել Ուկրաինայում, Բելոռուսիայում, միջինասիական հանրապետություններում, Հյուսիսային Կովկասում և այլուր ու միշտ էլ արժանացել է ջերմ ընդունելության:

Հաճախ է անսամբլը հյուրընկալվում Հայկական և Վրացական ՍՍՀ-ներում: Նրա համերգները Երևանում, Թբիլիսիում և այլ քաղաքներում անցնում են մեծ ոգևորությամբ, արտիստական վարպետությամբ, հազորովում են ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Երգի ու պարի պետական անսամբլը (ղեղարվեստական ղեկավար՝ Կիմ Առաքելյան, բալետմայստեր, ԱդրՍՍՀ վաստակավոր արտիստ՝ Աշոտ Բաբայան) մարզի գյուղական աշխատավորության հաճելի հյուրն է՝ սովետական և արտասահմանյան ժողովուրդների երգերի ու պարերի վարպետ կատարմամբ:

ԼՂԻՄ-ում լուրջ ուշադրություն է դարձվում նաև ինքնագործունեությանը: Եվ բիշ շեն ինքնուստեղծագործողները: Ալբերտ Սաֆարյանը աշխատում է Ստեփանակերտի № 9 դպրոցում: Նա վրձնել է Ավետիք Իսահակյանի, Կոմիտասի, Պաղանիների, Բեթհովենի և ուրիշ երախտավորների դիմանկարները, ձգտելով սեփական գծերով պատկերել յուրաքանչյուրի անհատականությունը, արտաբերին ու ներաշխարհը: Նա ստեղծել է նաև մեր օրերի մարդկանց կերպարներ: Արվեստի ուժով են ներկայացված մեծ Հայրենականում 11 օրի կորցրած մոր, ինչպես նաև ԲԱՄ-ի շինարարների կերպարները:

Մարտակերտում գյուղական ուսուցիչ է վալերիկ Պողոսյանը: Նա 100-ից ավելի կտավների հեղինակ է, որոնց մեջ պատկերված են հատկապես գյուղի առօրյան, մարդկանց խիզախ աշխատանքը, հայրենի գյուղի կոլորիտն ու բնու-

1 ՏԵՄ «Սովետական Ղարաբաղ», 1972, հունվարի 25:

2 ՏԵՄ նույն տեղը:

թյունը: Նրա այնպիսի կտավներ, ինչպիսիք են «Տեսարան Զայու գյուղից», «Կեսօր», «Սիրամարգեր», «Դարավոր ծառեր» և այլն, ներկայացնում են ինքնուս նկարչի հետաքրքիր մտահղացումներն ու կատարողական բարձր արվեստը:

Քավականին ընդարձակ է Վ. Պողոսյանի թեմատիկան: Նա քանդակում է մի կողմից գրական-գեղարվեստական գործերի հերոսներ, մյուս կողմից՝ սոցիալիստական աշխատանքի առաջավորներ:

Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղից Անուշավան Նարիմանյանը իր գործի սիրահարն է. նա քանդակագործ է և իր բազմաթեմատիկ կտավներով արտացոլում է սոցիալիստական առօրյան, մեր մարդկանց դիմանկարները:

Քոլատակի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Վաղարշակ Գաբրիելյանը փորագրել է «Աբու-Լալա-Մահարի», «Սոմա», «Պարույր Սևակ» և այլ պատկերներ:

Ժողովրդական արվեստի տարբեր բնագավառների դարգացմանը նպաստում է ժողովրդական ստեղծագործության մարդային տունը: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվող համերգները, ցուցահանդեսները, օլիմպիադաները, մրցույթները հայտնաբերում են նոր անուններ:

Ինքնուս կատարողների ուժերով հաճախ են ներկայացվում Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովելը», Գուսան Զաքարյանի՝ սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Աղամյանի մասին գրած երգ-գովջը, գուսան Աշոտի «Լուսնի շողը վերից գա», Թ. Կուլիևի «Քոյ ախշամը» («Հարսանեկան երեկո»), անվանի ջութահուճի, սոցիալիստական աշխատանքի հերոս Քնարիկ Առաքելյանին նվիրված Ս. Ալեկերովի երգերը:

* * *

Նախասովետական շրջանում Շուշիում գործող մեկ մասնավոր կինոթատրոնի դիմաց մարզում այժմ գործում են 186 կինոթատրոններ, շրջիկ և ստացիոնար կինոսարքեր: Ստեփանակերտն ու Շուշին ունեն ամառային և ձմեռային կինոթատրոնների շենքեր: Ամառային կինոթատրոններ ունեն

մարզի բոլոր շրջկենտրոններն ու առանձին կոլանտեսու-թյունները:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը լիովին սողիտ-ֆիկացվել է: Ռադիոհասարակության թիվը հասնում է շուրջ 40-ի: Աճել է ռադիոկետերի թիվը: 1940 թվականի 1320-ի դիմաց այժմ կան 29765 ռադիոկետեր:

Ստեփանակերտի ռադիոհասարակության արվող հաղորդումները հետզհետե դառնում են ավելի հետաքրքիր և բազմաբովանդակ: Խմբագրությունը ձգտում է նոր մտահղացումներով ու լրագրային տարբեր ժանրերով լուսաբանել մարզի առօրյան, ունկնդիրներին ներկայացնել սոցիալիստական աշխատանքի մարդկանց դիմանկարները, համառոտ ակնարկներով ներկայացնել համայնական դաշտերի մշակներին ու անվանի անասնապահներին, կուլտուր-լուսավորական բնագավառի էնտուզիաստներին:

Հեռախոսը նույնպես ամուր մուտք է գործել Լեռնային Ղարաբաղ: Մարզի հեռավոր, ծայրամասային բնակելի վայրերն անգամ իրար հետ հեռախոսային կապ ունեն: 1924 թվականի 41 հեռախոսի դիմաց այժմ Ղարաբաղում կան 11581 հեռախոսային կետեր:

Լեռնային Ղարաբաղի ամենաաչքի ընկած մշակութային օջախը՝ Մ. Գորկու անվան պետական թատրոնը, հետզհետե բարձրացնում է իր բեմական արվեստը՝ նվաճելով ունկընդիրների հիացմունքն ու համակրանքը:

Թատրոնի երկար տարիների աճի վկայությունն է, որ դերասաններից հինգն արժանացել են Ազրբեյջանական ՍՍՀ ժողովրդական արտիստի (Միքայել Կորգանյան, Նինա Հովսեփյան, Թամարա Մելքոնյան, Բենիկ Օվչյան, Մարգո Բալասանյան) և հինգ հոգի էլ վաստակավոր արտիստի պատվավոր կոչման: Բնական է, որ այսպիսի ստեղծագործական կոլեկտիվի համար դժվարություն չի ներկայացնում դասական և ժամանակակից պիեսների բեմադրությունը:

1950—1960-ական թվականներին մեծ հաջողությամբ են անցել Վ. Շեքսպիրի «Օթելլո» և «Համլետ», Մ. Գորկու «Հատակում», Ա. Շիրվանզադեի «Պատվի համար», «Նամուս», Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ», «Փորձադաշտ», Զ. Զաբալիի «1905 թվականին», Ս. Վուրդունի «Վագիֆ», եղբայրներ

Տուր և Շեյնինի «Պրովինցիայի նահանգապետը», Գ. Գաբրիելյանի «Արարատյան դաշտի աղջիկը», Պապայանների «Մեծ հարսանիքը» և այլ պիեսների բեմադրությունները:

Գովելի է թատրոնի մի այլ նախաձեռնությունը՝ տեղացի դրամատուրգների գործերը բեմ հանելը, գործեր, որոնք մեծ մասամբ ներկայացնում են ժամանակակից կյանքի դանազան կողմերը: Օրինակ, Իսահակ Ալավերդյանի «Միրո ճանապարհին» (1954 թ.), «Հողի լեզուն» (1960 թ.), «Ա՛խ, սեր» (1969 թ.) և այլ դրամատիկական ստեղծագործություններ:

Հեղինակի նախասիրած գրական ժանրը թատերգությունն է. նրա գրչին են պատկանում 6 պիես, որոնցից «Կարինեն» տպագրվել է «Գրական Աղբյուր» հանդեսում և բեմադրվել է մի շարք ժողովրդական թատրոններում:

Առավել մասսայականություն է վայելում «Ա՛խ, սերը» այն ներկայացվել է 103 անգամ:

«Ա՛խ, սերը» լիրիկական կատակերգություն է: Գործողությունը կատարվում է մարզի կենտրոնում, հերոսները Ղարաբաղի մետաքսակոմբինատի բանվոր-բանվորուհիներն են:

1973 թվականի վերջերին թատրոնի գլխավոր ռեժիսոր Հովհաննես Կարապետյանի օգնությամբ բեմ հանվեց լրագրող Աբգար Դանիելյանի «Այլով պատիվ» պիեսը: Դա հեղինակի առաջին դրամատիկական գործն էր:

Այդ պիեսում ցույց է տրվում մեծ Հայրենական տարիներին Ղարաբաղյան գյուղի հերոսական աշխատանքը: Հիմնական գործող անձինք Ազատյանների ընտանիքի անդամներն են: Նրանց տղան՝ Արմենը, հերոսաբար մարտնչում է թշնամու թիկունքում: Գյուղում, մի քանի բանասրկուների կողմից, հերյուրանք է տարածվում, որ իբր նա անցել է ֆաշիստների կողմը և կռվում է սովետական երկրի դեմ:

Ազատյանների ընտանիքին մեծ վշտի բաժին է ընկնում. մայրը չի դիմանում այդ վիճակին և մահանում է: Կինը՝ Զարուհին, անօրինակ կամքով դիմագրավում է այդ ամենին. ամուսինը վերադառնում է հերոսացած, և կինն էլ նրան դիմավորում է արժանավայել՝ բաց ճակատով, բարձր պահած Ղարաբաղցի կնոջ պատիվը:

Գերասանների վարպետ խաղով պիտի բացատրել այն,

որ պիեսը բեմադրվել է շուրջ 150 անգամ և դիտվել է Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր գյուղերում:

Զի կարելի նաև շնչել թատրոնի նկարիչ Սամվել Հովհաննիսյանի աշխատանքը պիեսի ձևավորման գործում. լավ է ընդգծված Ղարաբաղյան կոլորիտը:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյա տարելիցին բեմադրվում է տեղացի շնորհալի գրող Վաղգեն Օվչանի «Մեծ լուսեցին» պիեսը: Հեղինակը յուրօրինակ է ներկայացրել Թումանյանին՝ օգտագործելով հանճարեղ գրողի ստեղծագործությունները: Դրամատիկական գործի կոմպոզիցիան կատարված է հաջողությամբ, կուռ է մտքի ներքին տրամաբանական կապը:

Հովհաննես Թումանյանի դերը հաջողությամբ է կատարում հանրապետության ժողովրդական արտիստ Բենիկ Օվչյանը:

«Մեծ լուսեցին» ջերմորեն ընդունեցին նաև Երևանի, Բաքվի և այլ քաղաքների ու շրջանների հանդիսականները:

1960—1970-ական թվականներին թատրոնի խաղացանկը հարստանում է նոր բեմադրություններով. մուտք են գործում մի կողմից՝ մեր ժողովրդի հերոսական անցյալը ներկայացնող պիեսներ («Ռուզանը», «Մխիթար Սպարապետը» և ուրիշներ), մյուս կողմից՝ բեմի վրա են «էլի մեկ զոհը», «Պեպոն», «Անմեղ մեղավորները», «Գատական գործը», «Ինչպես կառավարել կնոջը», «Հորձանուտը», «Արտակարգ լիազորը», «Կամրջի վրա», «Ալիզուլին ամուսնանում է» և այլ գործեր:

Հաջողություն են ունենում նաև երգիծական գործերը. 1962 թվականին բեմադրվեց «Ալիզուլին ամուսնանում է» կատակերգությունը: Գերասանական կոլեկտիվը կարողանում է հաղթահարել որոշ զժվարություններ, ստեղծել ծիծաղաշարժ տեսարաններ, որոնք գրավում են հանդիսականին: Գերակատարումներով աչքի են ընկնում թատրոնի առաջատար գերասաններ Գուրգեն Հարությունյանը, Միքայել Կորգանյանը, Գուրգեն Գրիգորյանը, Մարգո Բալասանյանը, Թամարա Մելքումյանը, Սուրեն Համդոյանը և ուրիշներ:

«Զար ոգի», «Ալգին», «Գիբոր» և մյուս բեմադրությունները, որոնք իրականացվեցին 1964—1965 թվականներին,

ցույց տվին թատրոնի աներկբա աճը, տարբեր բնավորութ-
յունների տեր մարդկային կերպարների կերտման, գեղար-
վեստական դիմանկարների պատկերման հնարավորություն-
ները:

Որոշակիորեն նկատելի է թատրոնի հակումը դեպի երգի-
ծական բեմադրությունները: Խաղացանկի մեջ են մտնում
Կ. Բաուլիձեի «Բակում շար շուն կա», Փ. Հարությունյանի
«Սրտի արատը», Ա. Պապայանի «Աշխարհն, այժ՛, շուռ է
եկել» և այլ պիեսներ:

Ռեժիսորները (Հովհաննես Հովհաննիսյան, Ա. Գյամջ-
յան) և ձևավորողները (Մուշեղ Սաղյան, Գրիգոր Մատրյան)
կարողանում են գտնել կատակերգությունների հաջող բեմա-
կանացման գույներ:

«Բակում շար շուն կա» ներկայացումը հնչում է իբրև
երաժշտական մի գործողություն՝ հինը ծաղրելու, նորի հաղ-
թանակը տոնելու դիտավորությամբ:

Թատրոնի նոր գլխավոր ռեժիսոր Հովհաննես Կարապետ-
յանը ջանք չի խնայում հանդիսականներին ներկայացնել
առավել լիարժեք նոր բեմադրություններ, որոնք մարմնավոր-
ում են սովետական մարդու աշխարհայացքի մեջ կատար-
վող փոփոխությունները: Այդ պիեսներից են «Մայրը մնում
է մայր», «Առանց քեզ», «Ալվան ծաղիկ» և ուրիշներ:

Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական թատրո-
նը տարիների հետ աճում ու հասակ է առնում բեմակա-
նացնելով տարբեր ժանրի, տարբեր գաղափարի ու մտքի,
ինտելեկտուալ բովանդակության գործեր:

Այս է վկայում նաև 1973 թվականի նոյեմբերին՝ ԼՂԻՄ
50-ամյակի օրերին Վազգեն Օվյանի «Լուսաբացը լեռներում»
պիեսի բեմադրությունը: Հեղինակը ստեղծագործական թեմա
է դարձրել Ղարաբաղի բոլշևիկների պայքարը ավանտյու-
րիստ Թևանի բանդայի դեմ: Սակայն թևանիստները այլևս
ոչինչ անել չէին կարող, նրանց օրերը հաշված էին, Ղարա-
բաղի վրա ևս ծածանվում է մեծ Հոկտեմբերի դրոշը:

Մարդկային հարուստ ներաշխարհ է բացահայտում ազեր-
բեջանական նշանավոր գրող Իմրան Կասումովն իր «Հանուն
բարեկամի» գրամայում: Ալյա Խանումը կյանքի մեծ ու

դժվար ճանապարհ է անցնում: Նա տուն է վերադառնում
շքանշաններով և մեղալիներով, որոնք հաստատում են բուժ-
քրոջ անձնազոհ աշխատանքը մեծ Հայրենականում:

Ալյան հարուստ զգացմունքների տեր անձնավորություն
է, և նա դեռևս ուղմաճակատում առկեսուն սիրով էր հա-
մակված դեպի Ռաուֆը: Վերջինս, ենթարկվելով ավտոա-
շետի, տուն չի վերադառնում: Բայց շուտով ծնվում է Նար-
մինան: Ալյայի հայրն ու մայրը շատ ծանր են տանում
առանց հոր իրենց տանը թող ունենալը: Շուտով հայտ-
նվում է ռազմաճակատային բժիշկ Սերգեյ Ուզուկովը և
իրեն հայտարարում Նարմինայի հայրը: Սա թեթևացնում է
Ալյայի վիճակը:

Այս գաղափարն արտահայտելու համար Ստեփանակեր-
տի Մ. Գորկու անվան թատրոնի կոլեկտիվը մեծ ջանքեր է
գործադրել, կարողացել է վառ գույներով ներկայացնել կեր-
պարները, ցույց տալ ազնիվ մարդկանց հոգեհարազատու-
թյունը և փոխօգնության պատրաստակամությունը:

Պիեսի գործող անձինք հիմնականում դրական կերպարներ
են և իրենց գործելակերպով օրինակ են տալիս մյուսներին:

Ստեփանակերտի թատրոնը երբեմն այնպիսի դրամատի-
կական գործեր է բեմադրում, որտեղ ընդգծված կերպով
երևում են բուրժուական աշխարհի ապականված բարքերը:
Այս թեմայով է գրված Ի. Բուկովչանի «Լուիջի սիրտը» պիեսը:
Ստեղծագործական ամբողջ կոլեկտիվը մեծ ջանքեր է թա-
փել՝ ցույց տալու «ազատ» աշխարհի ապականվածու-
թյունը:

Խրախուսելի է, որ վերջին ժամանակներս թատրոնը բե-
մադրում է մանկապատանեկան պիեսներ:

1975 թվականի վերջերին Ստեփանակերտի պետական
թատրոնը բեմ հանեց Մարկ Տվենի «Հեկլբերի Ֆիննի ար-
կածները» ստեղծագործությունը: Բեմադրողը անվանի ռե-
ժիսոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանն
է, որի տաղանդը շատ բեմադրություններում է փայլել:

Լեոնային Ղարաբաղում զարգանում է գրական կյանքը: Աղբբեջանի սովետական գրողների միության մարզային բաժանմունքի շուրջն է համախմբված ստեղծագործողների մի ստվար բանակ, որոնց գործերը առանձին գրքերով լույս են ընծայվում «Աղբբեջը», «Յազըջը», «Սովետական գրող» և այլ հրատարակչություններում, պարբերաբար տպագրվում են մարզային, հանրապետական թերթերում, «Գրական Աղբբեջան» հանդեսում, «Սովետական գրականություն», «Գարուն» ամսագրերում:

Գրական նոր սերնդի շարքերում են բանաստեղծներ, արձակագիրներ, դրամատուրգներ, առակագիրներ...

Մարզում և նրա սահմաններից դուրս արդեն ճանաչում են գտել Գուրգեն Գաբրիելյանը, Իսրայել Պետրոսյանը, Արմեն Հովհաննիսյանը, Վազգեն Օվյանը, Սոկրատ Խանյանը, Վարդան Հակոբյանը, Հրաչյա Բեգլարյանը, Իսահակ Ալավերդյանը, Արմանուշը, Գերասիմ Հովսեփյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը և շատ ուրիշներ: Սրանցից յուրաքանչյուրը մի քանի կամ մեկ-երկու գողտրիկ ժողովածուների հեղինակ է և ցուցադրում է իր ստեղծագործական արգասաբերությունն ու շնորհալիությունը:

Որոնք են մարզի գրողների ստեղծագործական թեմաները. ջերմ հայրենասիրություն, ժողովուրդների բարեկամություն, ազնիվ սիրո քնքշանք, մարդու հոգեկան աշխարհի բացահայտում, հայրենի երկրամասի գովերգում և այլն:

Ստեղծագործելու աներկրայելի շնորհքով է տոգորված Արմեն Հովհաննիսյանը, որը մարզի ճանաչված գրողներից մեկն է: Նրա բանաստեղծական աշխարհը հագեցված է քաղաքական և հասարակական շնչով: Հեղինակի կրթոտ քաղաքացիականությունը զգացվում է նույնիսկ փոքրիկ ոտանավորներում:

Մի ուրիշ առավելություն ևս. Արմեն Հովհաննիսյանի բանաստեղծությունների մարտական թափը, պատկերների գունեղությունը, անպաճույճ խոսքը, գեղարվեստական արտահայտչամիջոցների տեղին օգտագործումը վկայում են նրա ստեղծագործական առաջընթացի մասին:

Բանաստեղծն իր խոսքը ոչ միայն հավատով է ասում, այլև զրվատում է հավատը: Հենց այս վերնագրով մի փոքրիկ բանաստեղծության մեջ, օգտագործելով ժողովրդական իմաստություններն ու թևավոր խոսքերը, նա շեշտում է հավատի ուժը, զաղափարին նվիրված լինելու մեծ առաքինությունը:

Մեծ է բանաստեղծի կոչումը, վեհ է նրա խոսքի ուժը՝ հավատարիմ դարին ու մարդուն: Եվ սա հեղինակը լակոնիկ սճով արտահայտում է «Բանաստեղծները» գողտրիկ ստեղծագործության մեջ:

Գուրգեն Գաբրիելյանը լայն մասսայականություն է վայելում ընթերցողների շրջանում. նա ստեղծագործում է հիմնականում մանուկների համար: Նրա շատ բանաստեղծություններ աղեցուն են նորի, առաջավորի ընկալմամբ, աչքի են ընկնում կյանքի ճանաչողությամբ և բնորոշի ընտրություններ: Եվ երբ թերթում ենք «Գուրգենի երգը» («Աղբբեջը», 1973 թ.) և մյուս ժողովածուները, ապա կրկին համոզվում ենք, որ Գ. Գաբրիելյանն արդեն հասուն բանաստեղծ է, կարողանում է թափանցել ժողովրդի հոգու խորքը, բառ ու բան քաղել նրանից, գեղարվեստական խոսքի ուժով արտացոլել իրականությունը, ներկայացնել մարդկային առաքինությունները, միաժամանակ խարազանել բացասական երեվույթները: Նա, կարծես առանց ավելորդ ջանքերի, իր խոսքըն է ասում, սակայն ոչ թե ասելու, այլ կյանքում արմատավորելու համար: Սրանով է պայմանավորված բանաստեղծի կրթոտ քաղաքացիականությունը:

Գ. Գաբրիելյանի շատ բանաստեղծություններ խոհականփիլիսոփայական են, կամ էլ՝ հանելուկային-առակային: Այդ ոգով են զրված, օրինակ, «Նարգիզ», «Վարդը», «Հասմիկ» և այլ գողտրիկ ստեղծագործություններ:

Նրա ստեղծագործական միտքը զարգանում է մատաղ սերնդի մոտ ազնվություն և համեստություն պատվասելու, մարդասիրություն ու ընկերասիրություն զրվատելու, աշխատանքը բարձր գնահատելու և այլ ուղղությամբ:

Հայրենի հողի փառաբանումը միշտ էլ կենտրոնական տեղ է գրավում բանաստեղծի երգերում: Իբրև նմուշ ներկայացնենք «Առյուծամագիլ» ոտանավորը.

Ուր էլ ծնվում եմ,
Ամուր եմ կաշում,
Եվ ամեն ձեռք չե՛
Քերթերես դիպում:

Չեմ լրում հողս՝
Դանում տարադիր...
Դրանից եմ ես
Ապումամադիր:

Բանաստեղծը օժտված է թեմայի յուրահատկությունը գտնելու և մարմնավորելու այն պոետական արվեստի ուժով:

Խրատական-դաստիարակչական նշանակություն ունի բանաստեղծի «Կենդանիների շարքը»: Նա ձգտում է բարու-թյուն, լավության խոսք ասել, իր շրջապատում տեսնել միայն աշնիվ մարդկանց:

Հեռաբրբրությունը են կարգացվում «ենդության երգը», «նանի գարմանրը», «Ջա՛ն, ինչ լավ է միասին» և ուրիշներ, ուր շեշտված կերպով հրապարակ են գալիս գրողի լավատեսությունն ու կենսասիրությունը:

Բանաստեղծի ոճը սահուն է, մտքի և տերստի կոմպոզիցիան՝ կուռ, նկատելի է խոսքի երաժշտականությունը:

Չափածո ստեղծագործություններով աչքի է ընկնում վարդան Հակոբյանը: Հեղինակի համար խորթ են պրոզայի արտահայտությունները, պրպտող միտքը հաճախ տալիս է «գլուտեր», որոնք ուղեկցվում են գեղեցիկ պատկերներով, արտահայտչամիջոցների հմուտ գործադրմամբ: Դրա վկաներն են «Սեր և ժպիտ», «Շանթահար կաղնին», «Մայրանում է լույսը», «Մտոի անունից» և մյուս գողարիկ ժողովածուները: Մրանց մեջ ամփոփված լավագույն ստեղծագործությունները աչքի են ընկնում գաղափարի և ձևի սերտ միասնությամբ, երևութների բանաստեղծական ընկալմամբ և վերարտադրմամբ:

Հեղինակին հատուկ է փոքրիկ տերստի մեջ մեծ իմաստ դնելը: Նրա «Շանթահար կաղնին» ժողովածուում գետեղված «Մոմը», «Հավատը», «Իմ ծննդավայրը» և այլ բանաստեղծություններ հյուսված են այդ ոգով:

Վարդան Հակոբյանի ստեղծագործական թեմաները խիստ

մարդկային են. դրվատել վեհը, գեղեցիկը, բարին, լույսը, աղնիլը... Եվ Նախատինքի խոսք ասել կեղծի, ոչ մարդկայինի, անազնիվի դեմ:

«Մայրանում է լույսը» ժողովածուով հեղինակը մարդու հարուստ հոգեաշխարհի հաղորդակիցն է, վարար զգացմունքների արտահայտիչը, բարության երգիչը:

Մարդկանց լույս պարգևելու ձգտմամբ տոգորված գրողը հսկում է լույսին,

Որ հանկարծ սևի մի նշույլ անգամ
Իր հետ շքերի...

Կյանքը, նրա խոր հավատով, միայն լույսի արգասիք է և կախված է բնության ամենամեծ հրաշքից՝ մարդուց: Աշխարհը քաղցրանում է միայն լույսի շողերով, բացականում է բանաստեղծը, գարունը հենց լույսի ժայթքում է: Նա բնատուր է: Եվ ընդհանրապես շեշտենք, որ հեղինակի սույն ժողովածուի մի քանի բանաստեղծություններում («Աշուն», «Երգ աշնան» և այլն) նկատելի են բնության օրինաչափությունների բանաստեղծական արտացոլումը, մարդկային կյանքի կարևոր գծերի բացահայտումը:

Գերազանցապես բանաստեղծություններ են գրում Սերգեյ Ավետիսյանը, Սերժ Առաքելյանը, էնստ Բեգլարյանը, Հոմեր Վանյանը, Նիկոլայ Ասրյանը, Վահան Հակոբյանը, Արշակ Մակարյանը, Զարուհի Առաքելյանը, Սուսաննա Մելիքյանը և շատ ու շատ ուրիշներ, որոնց առաջին թիթովանքները հուսալի են և հոգատարության արժանի:

Ղարաբաղում աճում է արձակագիրների մի ամբողջ խումբ. նկատի ունենք Վազգեն Օվյանին, Մաքսիմ Հովհաննիսյանին, Իսահակ Ալավերդյանին, Քնարիկ Սուլեյմանյանին, Արմանուշին, Կոմիտաս Դանիելյանին, Արմո Լեոնենցուն և ուրիշներին: Մրանց մեջ ավելի բեղմնավոր է Վ. Օվյանը, որը հեղինակ է բազմաթիվ պատմվածքների ու նովելների, ինչպես նաև դրամատիկական գործերի: Նրա պատմվածքների մի զգալի մասում նկարագրվում են մեծ Լենինի ու նրա զինակիցների հերոսական կյանքի առանձին դրվագներ, ցույց տալիս նրանց աշխարհաշեն գործունեությունը, մարդկային խորաթափանցությունը, մտքի թռիչքը, մեծ մարդասիրությունը:

Արձակագիրները Իսահակ Ալավերդյանը և Քնարիկ Սուլեյմանյանը բազմաժանր ստեղծագործողներ են. հանդես են գալիս և՛ պատմվածքներով, նովելներով, և՛ դրամատիկական գործերով: Հիմնական թեման սովետական հայրենասիրությունն է, մարդկային փոխհարաբերությունները, մտավորականության առօրյան, մտահղացումները:

Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում Իսահակ Ալավերդյանի «Գուրդեն Հարությունյան» մենագրությունը Աղբյուրեջանական ՍՍՀ ժողովրդական արտիստի մասին: Հեղինակը գեղարվեստական խոսքի արտահայտման միջոցներին դիմելով, ներկայացնում է արտիստի անցած փառավոր ուղին: Մեծ Աբելյանի սանը լայն ընդգրկումների արտիստ էր և իր ստեղծած բազում կերպարներով անջնջելի հետք է թողել հայ բեմարվեստի պատմության մեջ:

Գյուղական կյանքի հետաքրքիր պատկերներ է ստեղծում Քնարիկ Սուլեյմանյանը: Հրապարակի վրա է նրա «Ավանդական սրինգ» խորագրով պատմվածքների ժողովածուն, որի հիմնական թեման լեռնաշխարհի մարդիկ են՝ իրենց վաբբուբարբով, ազնիվ ու նվիրված աշխատանքով:

Մաքսիմ Հովհաննիսյանի պատմվածքների հերոսները ազնիվ մարդիկ են, անբիծ զգացմունքների տեր անձնավորություններ, որոնք պայքարում են շրջապատում վերացնելու հոռի երևույթները, կապիտալիզմի մնացուկները, վատ սովորությունները:

Լեոնային Ղարաբաղում ապրող և ստեղծագործող գրողները լի են նոր ավյունով ու եռանդով՝ հրապարակ հանելու գեղարվեստական նոր գործեր, որոնք արտացոլում են մեր այսօրը, ներկան և ապագան:

* * *

Գրքասերների Լեոնային Ղարաբաղի մարդային ընկերությունը ծնվել է 1975 թվականի նոյեմբերին: Եվ ահա, այս ոչ երկար ժամանակահատվածում արդեն շոշափելի է նրա կատարած աշխատանքը:

Ընկերության անդամների ուժերով բովանդակալից երեկոներ են կազմակերպվում անվանի գրողների հոբելյաններին: Կազմակերպված են անցել Գաբրիել Սունդուկյանի

ծննդյան 150 և Սամեդ Վուրդունի ծննդյան 70-ամյակներին նվիրված երեկույթներն ու ցերեկույթները:

Հաճելի է, որ գրքասերների մարդային ընկերությունը գործակցում է Աղբյուրեջանի գրողների միության մարդային բաժանմունքի և առանձին կուլտուր-լուսավորական օջախների հետ:

Լավ է նաև, որ մարդային ընկերության նախաձեռնությամբ երբեմն կազմակերպվում են տեղացի գրողների նոր գործերի քննարկումներ՝ հեղինակների մասնակցությամբ:

Գրքասերների ընկերությունը մոտիկից օգնում է լավագույն գրքերի պրոպագանդանը ոչ միայն գրադարաններում, այլև աշխատանքային տարբեր կոլեկտիվներում:

1976 թվականին մարդում կուսակցության XXV համագումարին նվիրված գրքի գարնանային տոնն անցկացվեց գրքասերների ակտիվ մասնակցությամբ: Ընկերության օգնությամբ զգալի է նաև Ստեփանակերտում մանկապատանեկան գրականության շաբաթը կազմակերպելու գործում:

* * *

ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումները նոր լիցք ու թափ են հաղորդում մարզի աշխատավորներին՝ տնտեսական, սոցիալական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում: Այդ մեծ նպատակին են ծառայում ամբողջ գաղափարական աշխատանքը, կուլտուր-լուսավորական, գիտական և ուսումնական օջախների գործունեությունը:

Ծաղկում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Համառոտ տեղեկություններ	3
Անցյալի էջերից	5
Խոյսը լեռնային Երկրամասում	38
Սոաչրերացն ակնառու է	53
Մեծ Հայրենականի տարիներին	66
Վերելքի նախապարհին	75

Ավագյան Սմբատ Դարչինի
 ԷՋԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ
 ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Авакян Смбат Дарчинович

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬНОВОЙ
 ЖИЗНИ НАГОРНОГО КАРАБАХА

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван—1982

Խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան, նկարիչ՝ Ս. Գ. Սաֆյան, տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան, վերստուգող սրբագրիչ՝ Մ. Մ. Արշակյան:

НБ 956

Հանձնված է շարվածքի 12. 08. 82 թ.:

Ստորագրված է տպագրության 23. 11. 1982 թ.:

Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրությունը՝ բարձր: 5,67 պալմ. տպ. մամ., հրատ. 4,78 մամ.: Պատվեր՝ 881: ՎՖ 06928: Տպարանակ՝ 5.000: Գինը՝ 30 կոպ.: «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան 44:

Типография № 2 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряна, 44.

30 400.